



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

72
Թ-22



Թ. ԹՐՈՒՄԱՆԵԱՆ



ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԻՒՆ

Ա

ՏԵԿՈՐԻ

ՏԵՃԵՐԸ



35 ՆԿԱՐՈՎ.

ՏՓԻԻՍ ՌՑԿ

40/104

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ա.

ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐԸ

Ծ
22.604

Թ. ԹՕՐԱՄԱՆԵԱՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

5627 ՕՆ ՍՏԱԳՐԱԿ

ՀԱՅ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

(ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԻՒՆ)

Ա.

Տ Ե Կ Ո Ր Ի Տ Ա Ճ Ա Ր Ը



ԹԻՖԼԻՍ

1911 թ.

Տպարան «ՀԵՐՄԵՍ» Մոխրանի փողոց № 13.
Типография «Гермесъ» Мухранская ул. № 13. Телефонъ № 566.



1398-2003



ՏԻԿ. ՎԱՐՍԵՆԻԿ ԿԱՐԱՆԵԱՆՑ



Հ Ա Ն Գ Ո Ւ Յ Ե Ա Լ

ՏԻԿԻՆ ՎԱՐՍԵՆԻԿ

Կ Ա Ր Ա Ն Ե Ա Ն Ց Ի

ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՅԱԻԷՐԺԱԿԱՆ ԱՐՁԱՆ

ԻՆՎԱՆՈՒՄ N0/79



Архивное Управление
МВД Арм.ССР
НАУЧНО-СПРАВОЧНАЯ
БИБЛИОТЕКА

ԱՌ ՄԵԿԵՆԱՄՆ

Մեծապատիւ պարոն

Յարութիւն Կարաւեանց

Առանց ձեր դառնակսկիծ վշտին և անփոխարինելի կորստեան ալ ինձ համար անսպասելի չէր ունէ աշխատութեանս ազնիւ մեկենաս հանդիսանալիդ: Դուք ութամեայ պանդխտութեանս դառնութիւնները մեղմելու համար ամեն կերպ մխիթարութիւն չի խնայեցիր ինձ. ոչ միայն պատուեցիր, մեծարեցիր, այլև հարգատօրէն եղբայրացուցիր զիս: Ձեր նահապետական սրբութեամբ օժտուած պատուական օճախին մէջ գտածս ազնիւ հիւրասիրութիւնը փոխարինելու համար երկանցս պտուղներէն շատ աւելի արժանաւոր բաժին մը նուիրել կը պարտէի բան այս դոյզն աշխատութիւնը:

Բայց դուք առանց փոխարինութեան սպասելու վեհանձնօրէն յաւերժացուցիր ներկայ աշխատութիւնս և անով ցոյց տուիր աշխարհին թէ, միայն բարձրագոյն զարգացում ունեցողներու սեփականութիւնը չէ գիտութեան մշակը բաշակելու գիտակցութիւնը և ոչ ալ ոսկիներով բեռնաւորուած հարուստին մենաշնորհն է և յաւախոյսի կարօտ գրական աշխատաւորին նպաստելը, այն ալ յաճախ իբրև ողորմութիւն:

կրանիթեայ ճշմարտախօս պատմութիւններով ու պատմագիրնե-
րով լեցուցին Եւրոպական մեծամեծ թանգարանները: Հեռաւոր
դարերու վրայ կուտակուած մշուշը սկսեց տակաւ առ տակաւ փա-
րատիլ և անոր տակէն յստակ կերպով երեցաւ հարիւրաւոր դա-
րեր առաջ ապրող ցեղերու և ազգերու պատմութիւնը: Ջնջուեցան
առասպելական անուններ և անոնց տեղ արձանագրուեցան կամայ
թէ ակամայ մոռացութեան տրուած ազգեր և ժողովուրդներ: Կազ-
մուեցան գիտական իրաւարար ատեաններ, որոնց մէջ անողոր ու
անաշառ քննադատութիւններով որոշուեցան իւրաքանչիւր ազգի և
ցեղի համամարդկային ճակատագրի բարւորման համար կատարած
գոհարերութեանց չափը:

Համաշխարհային յարգանքի ու պատկառանքի արժանացան
մարդկութիւնը դէպի լոյս, դէպի զարգացում առաջնորդող ազգի-
րու մնացորդները, և իրենց պապերի անփոխարինելի ծառայու-
թեանց համար իրենք իբրև ժառանգութիւն ստացան ներկայ հա-
սարակական կեանքի բոլոր իրաւունքները:

19^{րդ} դարու այս գօրեղ հոսանքին մէջ եթէ անկիւն մը մնաց,
որուն վրայ ժամանակակից գիտութեան աչքը չի կարողացաւ թա-
փանցել, այն ալ Հայաստանը եղաւ:

Մէկ կողմանէ Հայաստանին տիրող պետութեանց ոմանց քա-
ղարական սխալ հայեացքները, միւս կողմանէ հայուն միս ու ոսկոր
դարձող դատապարտելի անտարբերութիւնը, մինչև այսօր թաղուն
պահեցին Հայոց Պատմութեան և գեղարուեստի անհուն գանձերը
փլատակներու և մոխրակոյտերու ներքև:

Թող ոչ որ չի պարծենայ հայ պատմութեան և արուեստների
անունով իբրև հետազօտութիւն գոյութիւն ունեցող քանի մը ողոր-
մելի հատորներով, այդ բոլորը՝ բազդատելով գտնուած նիւթերու
անհունութեան հետ, ոչ միայն չնչին ու աննշան են, այլև իրենց
բովանդակած հակասութիւններով ու աններելի սխալներով միան-
գամայն աննպատակալարմար են:

Երկար տարիներու փորձառութիւնովս կը տեսնեմ, որ շատ
արդարացի կերպով գործուեր են թերութիւններ և սխալներ հայ
բանասէրներու կողմէ, վասնզի, երբ անոնք հայ հնութիւններու
սիրով ոգևորուած գործի ձեռնարկեր են, սեփական տկար միջոց-
ներն ու վերմարդկային ճիգերն եղած են օժանդակ հանրային խրա-

խոյսէ և քաջալերութենէ զուրկ, խեղճերն ստիպուերեն կամ աճապարել
գործին մէջ և կամ կէս ճանապարհէն ետ դառնալ՝ սովամահ չի
մեռնելու համար: Մինչդեռ այդ լուրջ և պատասխանատու գործը
ոչ միայն նիւթական առատ գոհողութիւն կը պահանջէր, այլև նը-
պատակին յարմար մշակուած պատմագէտներու և արուեստագէտ-
ներու հաւարական ոյժ:

Հայերէն տասնապատիկ աւելի են եւրոպացի գիտնական ճա-
նապարհորդներու թիւը, որոնք շրջեր են Հայաստանք, հետաքրքրուեր
են հայուն պատմութիւնով ու հին արուեստներով, սակայն անոնց-
մէ ալ մեծ օգուտներ չեն ստացած երբէք. մեծ մասամբ անոնք
տպաւորութիւններ և ներբողներ են հիւսած հայոց պատմական
գեղարուեստի շուրջը. սակաւաթիւ մի մասն ալ այնչափ միայն
բըբըր են հայութեան անցեալի վրայ զիգուած գարերու ծալքերը,
որչափ որ անհրաժեշտ էր արևելեան պատմութեանց վերաբերեալ
քանի մը հանգոյցներ լուծելու համար: Յաջողած են իրենց նպա-
տակին մէջ, այդ ալ շատ կասկածելի է, որովհետև անոնց գրած-
ներէն կը տեսնուի, որ կամայ թէ ակամայ յաճախ ինկեր են մո-
լորութիւններու մէջ և այդ մոլորութիւններէն բնաւ չսպասւիը
ուղիղ արդիւնք:

Քայլ մը յառաջ գնալով պիտի ըսեմ, որ եւրոպացի գիտնա-
կան ճանապարհորդներու բոլոր սխալներուն մենք հայերս ենք պա-
տասխանատու. անոնք սրտանց փարած նպատակին, երբ մտեր են
իրենց բոլորովին անծանօթ Հայաստանը, պատահեր են այնպիսի
տգէտ ու յիմար առաջնորդներու և տեղեկատուներու, որոնց պատ-
ճառաւ մէկ քանի հեղինակներու հոյակապ աշխատութիւնները
նսեմանալէն գատ, նաև ամենավատ ներգործութիւն ունեցեր են
հայոց գեղարուեստի և ճարտարապետութեան պատմութեան վրայ:

Ի՞նչ գիտէ եւրոպացի գիտնականը, որ հայաստանցի հայը իր
անմիջապէս շուրջը գտնուած այս կամ այն յիշատակարանին ով
շինելը և երբ շինուելը չի գիտնալէն գատ, անոր գտնուած տե-
ղին սահմանին անունն անգամ չի գիտնալու չափ անշնորհք է:
Առաջնորդը ներշնչեր է միամիտ գիտնականին իր խելքին փշածը
և գիտնականը արձանագրեր է լսածը իբրև ճշմարտութիւն:

Ո՞րչափ կարող եմ ցոյց տալ այսօր վարդապետ, եպիսկոպոս,
վանահայրեր, որոնք տասնեակ տարիներ պաշտօն վարեր են միև-

նոյն նեղ սահմանին մէջ և չեն սորված դարերէ ի վեր իրենց բժին տակ ցցուած հոյակապ յիշատակարաններու ճիշտ անունը գոնէ: Անգամ մը փորձեցէք հարցնել թէ, — Հայր սուրբ, ինչէ այս վանքին անունը կամ ինչ պատմական, աւանդական տեղեկութիւններ ունիք, — և անա քար կը կտրիք, երբ խղճի կատարեալ հանգստութեամբ կը պատասխանէ, — Ո՛վ է իմանում, մենք էսպէս ենք տեսել, ժամանակ ունենք ձեր ասածներով հետաքրքրելու: — Տասնեակ տարիներ ժողովրդին կաշին բերթեր են այդ վանքերու ու եկեղեցիներու անունով, գոնէ հետաքրքիր այցելուին քանի մը հստ ու կոտոր տեղեկութիւններ տալու չափ ալ բան սորվելու փոյթ չեն տարեր: Ես կերևակայեմ, թէ եւրոպացի գիտնականներ ինչ բնորոշ բառերով որակեցին՝ հնագարեան զմայլեցուցիչ վանութեանց հետ պէմ առ դէմ կանգնած այսօրուան այդ տխմարութեան և ապուշութեան կենդանի արձանները:

Մօտաւորապէս մի դար է, որ էջմիածինը պարսկական բռնակալ լուծէն ազատուած մեծ Ռուսաստանի հովանաւորութեան տակ ամեն ազատութիւն ու խաղաղութիւն կը վայելէ, սակայն այդ խաղաղութեան մէջ ո՞ր եպիսկոպոսը կամ վարդապետը մտածեր է թողուլ ճարպով փրուելու և նորհարսի պէս պճնագարդուելու ձրգտումները ու նուիրուել է անմիջապէս զինքը շրջապատող սնթիւ յիշատակարաններու հետագօտութեան*):

Եթէ բարդի բերմամբ գտնուեցան մէկ քանի հազուագիւտ միաբաններ, որոնք ուզեցին նուիրուիլ իրենց հարազատ կոչման և պարտականութեան, ո՞ր կաթողիկոսն էր, որ պաշտպան հանդիսացաւ և վարձատրեց այնպիսի աշխատաւոր միաբանները: Խրիմեանի նրման հայուն անցեալ փառքին ողբերգակ բանաստեղծ կաթողիկոսն ալ շունեցաւ այն ողջմտութիւնը, որ օգտուիլ զիտնար իւր շուրջը

*) Բնականաբար խաչիկ վրդ. Գաբեան հազուագէպ բացառութիւններէն մէկն է էջմիածնի միաբանութեան մէջ իր Զուարթնոցի ուշագրաւ պեղումներով, սակայն երբ նա ալ տասը տարիէ ի վեր իւր պիտուներու արդիւնքը բանտարկած և զրկած է գիտական աշխարհը այդ հոյակապ յիշատակարանի տալիք օգուտներէն, ստիպուած ենք զինքն ալ միւսներու աթուին վրայ բազմեցնելու, մինչև որ վերջապէս բարեհաճի, փոխան հասարակութեան այդ նշանակալից պեղումներու համար տուած առատ նուիրաբերութեան, գոնէ հրատարակել անոր չնաշխարհիկ բեկորներու լուսատիպ պատկերները:

գտնուած երիտասարդ գիտնական վարդապետներու ձիրքերէն և մղէր զանոնք այնպիսի գործերու, որոնցմով անոնց տաղանդը արգիւնաւորելէն զատ, իրեն համար ալ յաւիտենական փառաց կոթողներ կանգնէր գիտական աշխարհի մէջ:

Ի՞նչով արդարացնենք մեղկութեան և փառամոլութեան մէջ թաթախուած հայ հարուստներէն շատերը, որոնք ներկային մէջ զիրենք փառաւորող և իրենց անձնական զուարճութիւններու բաւականութիւն տուող միջավայրերու մէջ գիտեն լիարուռն թափել ոսկին, իսկ կը ծաղրեն մեծ ու փառաւոր անցեալի մը յայտնագործութեան համար լինելիք գահողութիւնը, որ յիբաւի ճշմարտապէս պիտի փառաւորէր իրենց թէ ներկան և թէ ապագան:

Գատապարտութեան ամենէն մեծը, ամենէն սեւը կը մնայ հայ գիտնականներու, արուեստագէտներու և հրապարակագիրներու ճակտին վրայ, որոնք իրենց բոլոր ընդունակութիւններով գամուած մնացեր են միայն մինչանաբանի վրայ, այն է ապրիլ իրենց անձին համար և միևնոյն ատեն ինքզինքնին 20-էք դարու բաղաբակիրթ գաւակներ համարել:

Չունդալից ժողովներ, սնամէջ ճառեր, աննպատակ ու անօգուտ, կործանարար նորամուտ վարդապետութիւններու քարոզներ երբէք չեն կարող դարերէ ի վեր մեր ճակտին վրայ թանձրացած մուրը սրբել: Մենք յաշս բաղաբակիրթ աշխարհի պիտի մնանք միշտ միևնոյն այլասերուած ժողովուրդը, եթէ գործնականապէս չի փարինք այն մեծ փաստերուն, որոնց շնորհիւ միայն իրաւունք պիտի ունենանք իբրև մարդ ապրելու և բաղաբակիրթ դարուս մէջ մեր նախնիքներու աթոռը ժառանգելու:

Ես խօսքս կուղղեմ մասնաւորապէս Տաճկաստանի հայութեան, որուն համար այսուհետև աններելի մեղք է ձեռքերը ծալած նստիլ այնպիսի երկրի մէջ, ուր համասփիւռ ծածկուած են հայութեան ծագման հետ անմիջապէս կապուած խոր հնութիւններու անթիւ յուշարձաններ՝ մինչև այսօր գուրկ գիտական լուրջ հետազօտութեանէ: Երբեմն հալածանք, սուր, բռնութիւն, թալան կար, իսկ հիմայ երբ ազատութեան օրեր են եկեր, մամուլը ազատուելէ կապանքներէ, այլևս ինչ պատճառ կայ, որ ամենօրեայ ձանձրացուցիչ վէճերու և բանակութիւններու տեղ, գիտական և բանասիրական լուրջ յօդուածներ չի զարդարեն պօլսահայ լրագրութեան էջերը:

Տաճկահայ մամուլը շատ բան կը կորսնցնէ իր արժանապատ-
ուութենէն, եթէ այսուհետև ալ աչքերը դարձնէ դէպի կովկասահայը
և անոնց կատարած գործերը փառաբանելով միայն բաւական-
անայ:

Հայաստանի շատ փոքր մասն է, որ կովկասահայի ձեռքի
տակ է, և անոնք լաւ թէ վատ վերջապէս գիտցեր են զբաւել մի
մեծ գիտնական, յանձին պ. Ն. Մառի, որ ամեն տարի անընդհատ
թաթախուի հողի ու մոխիրի մէջ և կորուստէ ազատէ այն ամե-
նը, ինչ որ պատմութեան և գիտութեան սեփականութիւնն է,
որոնց մէջ հայը ունի իր առաւելագոյն բաժինը:

Տաճկաստանի մէջ կայ մի Վասպուրական և Տարօն, որոնք
հնադիտական և պատմական տեսակէտով այնպիսի բեղմնաւոր ար-
դիւնք կարող են տալ, որպիսին երբէք չեն կարող Այրարատը, Շի-
րակը և կամ Ռուսահայաստանի ուրիշ մասերը: Մասնաւորապէս
հայոց պատմութեան առաջին գլուխները թաղուած են այնտեղ,
առանց որոնց անհասկանալի կը դառնայ յետնագոյն դարերու յի-
շատակարանաց ուսումնասիրութիւնը:

Ես պիտի առաջարկեմ մի շատ պարզ բան, որուն համար առ
այժմ մեծ գործողութիւններ հարկաւոր չի լինելէն զատ, տալիք
մեծամեծ օգուտներն ալ անգնահատելի են: Եթէ պեղումներ և
արշաւանքներ կատարելու համար տնտեսական աննպաստ վիճակի
մէջ են, գոնէ կարող են սկսել հաւարելու մարդը և նպատակա-
յարմար լուսանկարներ կարելու յիշատակարաններու, բարեխիղճ և
ուսեալ մարդոց ձեռքով զրուած պարզ նկարագրութիւններ, տե-
ղազրական յստակ ծանօթութիւններ, և հետզհետէ հրատարակեն
մասնաւոր կամ պարբերական հանդէսներու մէջ, որոնք ամենամեծ
օժանդակներ պիտի լինին գիտնական ուսումնասիրութիւններու
համար: Եթէ այսբանիկ բանն ալ ձեռնարկելու չափ բարոյական
կորով չունենայ տաճկահայը, այն ատեն կովկասահայը լիովին
իրաւունք պիտի ունենայ ըսելու, որ տաճկահայուն բարոյապէս
կազմալուծողը ժամանակը չէր այլ իր նկարագիրը:

Գնահատելով կովկասահայուն գովելի ձեռներեցութիւնը յօգուտ
գիտական գործունէութեան, չեմ կարող կանգ չառնել նաև մի շատ

ուշագրաւ կէտի վրայ: Բոլոր զարգացած և բարձրագոյն կրթութիւն
ստացած մարդիկ իբրաւունք չունին այս ձեռներեցութեան պատիւը
ընդհանուրի սեփականութիւն համարելու. արդարութիւնը կը պահանջէ
որ միանգամայն ջոկուին անոնք՝ որոնք հակառակ իրենց բարձր ար-
ժանիքներու և իրենցմէ սպասուած գիտական մեծ բարիքներու,
սառն անտարբերութենէ զատ ոչ մի գործնական բաժին չունեցան
մինչև ցարդ կատարուած գործունէութեան մէջ:

Շատ սակաւաթիւ մի դասակարգ է, որ ճշմարտապէս գիտա-
կից գործի և նպատակի անհրաժեշտ կարևորութեան, բանաւոր և
գրաւոր միջոցներով հրապարակ իջան, խօսեցան, բարոզեցին,
բայց անոնք ալ եթէ հայ հարուստին փառասիրութիւնը զրգուելով
և անոր քմահաճոյքները փայփայելով փոքր ինչ նիւթական միջոց-
ներ հայթհայթեցին, սակայն երբէք չի կարողացան ազդել արուես-
տագէտ դասակարգի վրայ, որոնց գործնական մասնակցութեան
ամենէն շատ պէտք ունի հայ հնագիտութեան ուսումնասիրու-
թեան գործը: Մեզ նման բազմակարօտ ազգին մէջ բոլորովին
անարդար միջոց է ծանրանալ միմիայն հայ հարուստին բսակին
վրայ և զրամով կատարել տալ ամեն գործ: Հայ հնագիտութիւնը
այնքան մեծ գործ է և այնքան բազմակողմանի ուսումնասիրու-
թեան կարօտ, որ եթէ հայ մասնագէտներու գործնական մասնակ-
ցութիւնը չի միանայ հարուստին ոսկիներուն հետ, անկարելի է
ցանկալի արդիւնքի հասնել կարճ ժամանակի մէջ. մինչդեռ գործը
կը պահանջէ շտապել և օր առաջ կորուստէ փրկել այն ամենը
ինչոր բնութեան աւերիչ ազդեցութեան տակ արագօրէն փճանա-
լու և անհետանալու վրայ են: Մինչև այսօր անհոգութեան ու ան-
տարբերութեան պատճառաւ մեր վնասները անհուն են և անփո-
խարինելի, գոնէ այսուհետև եղածը չի կորսնցնելու պէտք է ջա-
նալ: Եթէ կովկասի մէջ գտնուած հազարաւոր կարող մասնագէտ-
ներ, տարուան մէջ գոնէ մէկ երկու շաբաթ նուիրէին հայ հնագի-
տութեան ուսումնասիրութեան գործին, մենք այսօր, ոչ միայն հա-
մեմատաբար քիչ կորուստ կունենայինք, այլև հոյակապ հատորներ
կունենայինք մատենագրաբաններու պատմական և գիտական բա-
ժիններուն մէջ:

Ուստի մինչև ցարդ այս անգործութիւնը ցոյց կուտայ, որ կով-
կասահայ բարձրագոյն կրթութեան տէր մասնագէտներ կամ գա-

զափար չունին գործին կենսական կարևորութեան վրայ, և կամ այնքան մեղկացած անպարտաճանաչներ են, որոնք աւելի թանգ կը գնահատեն իրենց քանի մը կոպէկները և անձնական փափուկ կեանքը, քան հասարակական և գիտնական մեծ գործի մը մէջ իրական մասնակցութիւն ունեցած լինելու արդար փառասիրութիւնը:

Մեր արուեստագէտներէն ոմանք իրենց անգործութիւնը կարգարացնեն առարկելով, որ պատմական հայ գեղարուեստ չիկայ, եղածները որպէս թէ բիւզանդականի, արաբականի կամ պարսկականի հարագատ ճիւղերն են, այս համոզումը ունեցեր են առանց անձամբ իրականութիւնը տեսնելու, հիմնուած լոկ հնացած, փտած և միակողմանի միտումաւոր գրականութեան մը վրայ. և այնչափ յամառած են իրենց այս համոզման վրայ, որ ալ ամենեին չեն ուզեր վերջին քսան տարուան պատմական հայ գեղարուեստի շուրջ լոյս տեսած գրականութիւնը աչքէ անցընել և կամ հաւատալ՝ որ այդ ինքնուրոյն հայ գեղարուեստի մը գոյութիւնը հերքող հեղինակաւոր գիտնականներէն քանի քանիները անհերքելի փաստերու առջև խոնարհած ետ առին իրենց խօսքը և պատուաբեր դրուատականներով արձանագրեցին արևելքի ճարտարապետութեան մէջ այս իւրատեսակ զարգացումը:

Ճշմարիտ է, որ հայ գեղարուեստը յաճախ ենթարկուեր է գրացի զարգացած ազգերու ազդեցութեան, սակայն պարզ բաղդատութիւն մը բաւական է ապացուցանելու, որ անհամեմատ աւելի շատ են ստեղծագործութիւնները քան փոխառութիւնները: Փոխառութիւններն ալ հազիւ թէ գործածուած են նոյնութեամբ առանց զանոնք հայացնելու: Եւ ինչքան իրենք ազդուեր են օտարէն, նոյնչափ ալ ազգեր են իրենցմէ շատ աւելի մեծ ազդերու վրայ:

Պահ մը ենթադրենք, որ օտարներու ազդեցութիւնը շատ զօրեղ լինի հայ արուեստի մէջ, միթէ այդքան արհամարելի է այս պարագան: Ես կը կարծեմ, որ աւելի քան պատուաբեր պէտք է լինի, որովհետև չկայ մի ազգ պատմութեան մէջ, որ բոլորովին կզգիացած ապրելով հասնէր քաղաքակրթութեան գագաթնակէտին և ինք միայն ներգործէր ուրիշ ազգերու վրայ առանց ուրիշէն ազդուելու: Այսպիսի մի բան մտածելն իսկ ծայրայեղ միամտութիւն է, արուեստ, գիտութիւն, լեզու, գրականութիւն ամեն ազգի

մէջ զարգացեր են միշտ մէկգմէկէ ազդուելով, և այս է քաղաքակրթութեան զարգացման բնական օրէնքը, եթէ ինքնատիպ յատկութիւննին անփոփոխ պահող ազգերը գնահատել հարկ լինի, այն ատեն ապահովաբար, առաջին մրցանակը կը շահին բուրգերը, թաթարները, գնչուները, որոնք նոյնը մնացած են մինչև այսօր, ինչ որ էին ասկէ հազար տարի առաջ:

Հին հայերը եթէ դարէ ի դար փոխուեր են և օտարներու քաղաքակրթութիւնը իրենց մէջ մտցուցեր են, կը նշանակէ, թէ երբէք ետ չեն մնացեր իրենց շուրջը զարգացող քաղաքակրթական յեղաշրջումներէն, և անընդհատ մրցեր են ամեն ճիւղի մէջ, առանց սակայն մերենաբար հետևողներ լինելու, յամառ կերպով պահեր են իրենցը և փոխառութիւնները ենթարկեր են իրենց սեփական ճաշակին:

Եթէ հին հայերու օտար ազգաց քաղաքակրթութեան ենթարկուիլը անոնց ինքնուրոյն նկարագրէ զուրկ լինելուն վերագրենք, ապա ուրեմն ինչով բնորոշներ այսօրուան քաղաքակրթութեան հովերով փրուած հայերս, որ ոչ մի սեփական կրթութիւն չունինք և կատարելապէս ձուլուած ենք մեր գտնուած միջավայրին տիրող քաղաքակրթութեան կաղապարին վրայ. այնուամենայնիւ առանձին հպարտութեամբ կը պարծենանք թէ 20-ւէ զարու կուլտուրական ազգերու շարքին մէջ մեր սեփական աթոռը ունինք: Սակայն այս պարծանքը արգարացնելու համար ինքնուրոյն ինչ ունինք, ոչինչ: Հայ ճարտարապետութիւն և գեղարուեստ միանգամայն չկայ, այս ճիւղերու բոլոր մասնագէտներս ջերմ երկրպագու դարձեր ենք առ նովօներու, ռընեսանսներու, սէֆասանսներու, որոնք ոչ մի կապ չունին մեր ազգային յատկութիւններու, ճաշակին և նկարադրին հետ: Տասն և հինգ դար անընդհատ մշակուած և նախանձելի բարձրութեան հասած մի գրական լեզու ունէինք, այն ալ անգլիէրէն, գերմաներէն, ֆրանսերէն, ռուսերէն և այլն օտար բառերով ու ոճերով խառնուած քառս մը դարձաւ և նմանեցաւ հանգուցեալ խ. Աբովեանի բնորոշած հայկական խաշին, որուն մէջ ձուկ, շաքար, կանֆետ, չիր, չամիչ, խիզիլալայ, ինչ որ ուզէր կայ, բիշ կը մնայ, որ տարիքը 50-ը անցած հայու մը համար չինարէնի չափ անհասկանալի դառնայ այսօրուան նոր գրական լեզուն:

Ուրեմն այս առարկութիւններն ալ անգօր են արդարացնելու այն դատապարտելի անգործութիւնը, որ ոչ միայն զրկանք է ապագայ սերունդին համար, այլև անդարմանելի վիրաւորանք մեր ազգային արժանապատուութեան յաշտ մեզ շրջապատող քաղաքակիրթ ազգերու: Ով չգիտէ, որ մեր մէջ պէտք եղածէն շատ աւելի կան գիտնականներ և կարող մասնագէտներ, որոնք համալսարաններու մէջ դասախօսելն ու ոսկեհանքերու աղբիւրներ ստեղծելը համարեր են իրենց կեանքի միակ նպատակը: Եւրոպացի գիտնականներն ալ ունին այդ գործերը և տասնապատիկ աւելի ծանր պաշտօնները, սակայն անոնք դարձեալ ժամանակ կը գտնեն և տարւոյն մի մասը կը նուիրեն իրենց գիտութենէն և հատութենէն ընդհանրութեան ալ բաժին հանելու, այնպիսի բաժին, որոնցմէ մենք հայերս ալ օգտուելու կձգտինք: Ճշմարիտ որ մեծ բաջութիւն է հայ մասնագէտներուն համար ամեն օր իրենց աչքին առջև տեսնել օտարազգի մասնագէտներու հետաքրքրութիւնը, աշխատանքը, և անխնայ գոհաբերութիւնները մեր բնաշխարհի հնութեանց գանձերու շուրջը և պահ մը կարմրելու չափ զգայնութիւն չունենալ:

Եթէ կը կարծեն, որ Եւրոպացի գիտնականը, արուեստագէտը իրենցմէ աւելի խելք ու կարողութիւն ունի և իրենցմէ աւելի լաւ կը տեսնէ ճշմարտութիւնը, շատ կը սխալին: Այս կարծիքով նախ ինքզինքնին կը զրկեն արժանապատուութենէ, յետոյ ալ իբրև ճշմարտութիւն մարտելու միամտութիւնը կունենան այն բոլոր կամայ թէ ակամայ խեղաթիւրումները, որոնք յաճախ անարզանքներ եղած են յանիրաւի շարտուած ամբողջ հայութեան ճակտին:

Ես կը կարծեմ, որ բաւական է այլևս Եւրոպացի գիտնականին մեծ մասամբ իրականութենէ և ճշմարտութենէ զուրկ տեսութիւններն ու վճիռները թողուլ, որ պատմութիւնը անմահացնէ: Մինչև երբ անոնք պիտի գրեն և մենք թարգմանենք որպէս երկնային պատգամներ մեր գիտութեան կարօտ հասարակութեան մատակարարելու համար, այն ալ մեր հարազատ ցեղի ու արուեստի պատմութիւնը, որոնք երբէք չեն կարող սիրել և նուիրուիլ այնպէս, ինչպէս մենք: Ի՞նչու համար մեր գիտնական մասնագէտներու երևակայութեան մէջ անչափ խոշորցեր է Եւրոպացին, և իրենք փոքրացեր ու չեն հաւատար, որ իրենք ալ ունեն տաղանգ, կարողութիւն կազմելու այնպիսի հոյակապ հայագիտական մատենա-

դարան մը, որուն առջև Եւրոպացի գիտնականն ալ պատկառանք զգայ, և փոխանակ տղէտ ու անկարող առաջնորդներու տուած տեղեկութիւններն արձանագրելու, այնտեղ գտնէ իր փնտրած փաստերն ու ճշմարտութիւնները:

Հին հայոց ճարտարապետութեան և գեղարուեստի ուսումնասիրութեան համար երկար տարիներու աշխատութիւնս ինձի սորվեցուց մի անհերքելի ճշմարտութիւն, այն է համոզուիլ միանգամայն, թէ նախ—վերին աստիճան վերապահութեամբ պէտք է վերաբերուիլ օտարներուն մեր երկրին մէջ կատարած գիտական ուսումնասիրութիւններուն ըստ ամենայնի նպատակայարմար և բարեխիղճ լինելուն: Երկրորդ—մեր մէջ բաւական թուով ունինք կարող պատմաբաններ, լեզուաբաններ, երկրաչափներ, ճարտարապետներ, բնագէտներ և ուրիշ զանազան մասնագէտներ, որոնց ուրոյն կամ հաւաքական գործունէութիւնները կարող են Եւրոպացիէն գնահատուելու չափ մի պատկառելի զրականութիւն ստեղծել, բաւական է միայն գտնել նիւթական համեստ միջոցներ այդ ամենուն համար: Փորձը հազար անգամ ցոյց տուած է, թէ այդ ալ զժուար չէ, երբ կամբը գոյութիւն ունի:

Ես մենակս ութը տարի կարողացայ դիմանալ մինչև այսօր եղած հետազօտութիւններէն տարբեր, նոր տեսակի գործ մը արտադրելու և մինչև այսօր խիղաթիւրուած ու այլանդակուած փաստերը արմատախիլ ընելու համար: Թէ որչափ գործ եմ կատարած այդ մասին ես չեմ խօսելու. հետաքրքրողին համար շատ դիւրին է աչքովը տեսնել և շօշափել: Թէ հայ հնագիտութեան ուսումնասիրելի նիւթերու անհունութեան հետ համեմատելով մեծ բան չէ կարող համարուիլ, այնու ամենայնիւ իւր պատուաւոր տեղը պիտի բռնէ ապագային, եթէ օր մը լոյս տեսնէ:

Արդ, ես երկրին անժանօթ մի օտարական, ընդհանրապէս գնահատողներս խիստ սահմանափակ, համարում է և վստահութեզնա հաւկցութեանց շնորհիւ որ նէ զուրկ, վերին աստիճան համեստ աջակցութեանց շնորհիւ որ կարողացայ այդ չափ գործ կատարել, ապա ուրեմն որչափ մեծ հրաշքներ պիտի գործէին Կովկասի արուեստագէտները, բանի որ իհրաշքներ երկրին բնիկ զաւակն են, ունին սեփական միջոցներ, հարարենք երկրին բնիկ զաւակն են, ունին սեփական միջոցներ, հարազատ ու անձնուէր բարեկամներ, իրենց տաղանգին, կարողութեան և պատուասիրութեան հաւատացողներ, և այս ամենուն հետ ի-

ընեց տրամադրութեան տակ նիւթական միջոցներ դնելու պատ-
րաստ վստահ դրամատէրներ: Յաւալի չէ արդեօք տեսնել, որ այս
ամեն առաւելութիւնները կատարեալ ամուլութեան դատապարտուած
են, և այդ խոշոր գլուխներ օր մը ստուերի պէս պիտի անց-
նին առանց ետևնին հետք մը թողելու:

Իմ շուրջս մրցում և բարի նախանձ գրգռելու նպատակաւ մի-
այն պիտի զիջանիմ ըսելու, որ ես այս պարտականութեանց մէջ
ինձի ընկած բաժինէն շատ աւելի նիւթական և ֆիզիքական զո-
հողութիւններ կատարեցի, ընտրածս ասպարէզի մէջ ութը հրկար
տարիներ տընելով: Աշխատութեանս միակ նպատակն էր ի լոյս
հանել դարերէ ի վեր հողի տակ ծածկուող հայ ճարտարապետու-
թիւն ըստուած մեծ արուեստը, որուն մասին մինչև այսօր դեռ գա-
ղափար իսկ կազմուած չէ. շատ բիչերն են, որ կը ճանչնան և
գիտեն անոր գոյութիւնը: Լիովին հասած իմ նպատակիս. — Գրժ-
բաղդաբար ոչ: Եւ ինչո՞ւ — Որովհետև, ինչպէս ըսի, գործին անաւոր
մեծութեան առջև օր ըստ օրէ կը տեսնեմ, թէ ես մինակս բաւա-
կան չեմ պարուրելու այն ամենը, ինչ որ անընդհատ տասնեակ դա-
րեր արտադրեր է, թէև քանակով փոքրիկ, սակայն նկարագրով շատ
մեծ մի գեղարուեստասէր ազգ:

Այս խոշոր և յանդուգն ծրագրով ութը տարիներէ ի վեր աշ-
խատելս շատ շատերուն յայտնի է: Գուցէ շատերը մեղադրեցին
զիս, որ այդքան տարիներէ ի վեր տակաւին ոչ մի գործնական ար-
դիւնք հրապարակ չի հանեցի: Այս անարդար մեղադրանքը ես չեմ
ներեր այն բանիմաց և հեռատես դասակարգին, որոնք կը հասկնան
և կ'մբռնեն. թէ ճշգրիտ գծուար գործ էր ձեռնարկել աւելի քան հազար
հինգհարիւր տարի ապրող և անընդհատ դարէ ի դար վերածնութիւն-
ներով յեղաշրջուող՝ ուսումնասիրութենէ միանգամայն կոյս գե-
ղարուեստի մը հետազօտութեան, և անմիջապէս արդիւնք տալ հա-
սարակութեան: Բաւական չէր միայն ժամանակակից նիւթական
պահանջներու համար պատրաստուած արուեստագէտ մը լինելը.
հայ գեղարուեստի նման բազմակողմանի զարգացմամբ ճիւղացած նոր-
օրինակ արուեստը ըմբռնելու, հասկնալու և ճանչնալու համար երկար
տարիներ անհրաժեշտ էին: Բացի այս, հարկաւոր էր մտնել նաև օտար
ազգերու պատմական գեղարուեստներու ուսումնասիրութեան շուրջը
գոյութիւն ունեցող հարուստ գրականութեան մէջ, որով միայն

կարելի պիտի լինէր փոքր ի շատէ որոշել և վճռել բնիկ արուես-
տը օտարէն, ստեղծագործութիւնները փոխառութիւններէն, իւրա-
քանչիւր գաւառի կամ նահանգի մէջ երևան եկող ստեղծագործա-
կան ոգին, բնիկ արուեստի ազդեցութիւնները արտաքին աշխարհներու
վրայ և կամ անոնցմէ կրած ներգործութիւնը իրեն վրայ:

Ահա այս շատ բնական պատճառով թէև միբիչ ուշ մնացի,
սակայն այժմ կարելի է գտնել հասուն նիւթեր ընդհանուր աշխա-
տանքիս մէջ և պարբերաբար ի լոյս ընծայել, եթէ ի հարկէ դա-
դար առնէ շուրջս եղող ցուրտ անտարբերութենէն զատ, մի որոշ
դասակարգի ալ գործս սպաննելու և զիս ալ յուսահատեցնելու
ձգտող ամօթաբեր գործունէութիւնը: Վաղուց զգալի եղած էր ին-
ձի այս պարագան, բայց ես արհամարած եմ գործիս հասուցուած
հարուածները և պիտի արհամարեմ ալ միշտ, քանի որ հակառակ սոյն
դասակարգին, գործս ունեցաւ նաև լաւ բարեկամներ ալ, որոնց
շնորհիւ կարողացայ ութը տարի գոյութիւնս պահել և գործս յա-
ռաջ տանել: Յաւալին այն, է որ ախոյաններս, հակառակ
իրենց բարձր դիրքին ու համբաւին, ազնիւ միջոցներով չեն
կանգնած դիմացս, այլ ականջէ ականջ փսփսուքներով յա-
ռաջ կը տանին իրենց ամօթալի գործունէութիւնը: Ես այդ-
պիսիներուն կառաջարկեմ մի շատ պարզ միջոց, որով թե-
րևս աւելի լաւ հասնին իրենց նպատակին: Թող քաջութիւն ու-
նենան հրապարակ գալ և մամուլի միջոցաւ ի լուր աշխար-
հի յայտարարել, որ կամ հայ հնագիտութիւնը անպէտք է, հե-
տևաբար իմ աշխատութիւնս ալ անօգուտ, և կամ հայ հնագիտու-
թեան համար ես անպէտք եմ: Այս պարագային, սիրով կը թո-
ղում ասպարէզը ինձմէ արժանաւորներուն և երևակայուած դափնի-
ներն ալ իրենց ճակտին, բաւական է որ գործը իրենք յառաջ
տանին և ապագան չի զրկեն պատմական և գիտական այս մեծ
բարիքներէն:

Ներկայ փոքրիկ հրատարակութիւնս Տեկորի տաճարի ամբող-
ջական հետազօտութիւնը չէ, վասնզի Տեկորի տաճարին նման հնա-
դարեան ճարտարապետական և պատմական մեծ յիշատակարանի
լիակատար ուսումնասիրութեամբ վճռական եզրակացութիւններ
արձանագրելու համար, անհրաժեշտ էր գիտական խուզարկութիւն-
ներ ղէթ Ռուսահայաստանի շատ մը յիշատակարաններու վրայ,

որոնք մէկգմէկ պիտի լուսաբանէին. սակայն դժբաղդաբար այդ ինձ համար անհնար դարձած է նիւթական միջոցներու բացարձակ չգոյութեան պատճառաւ:

Բայց ինչ որ տուեր եմ ներկայ գրքիս մէջ Տեկորի տաճարին երաբերմամբ, իմ համոզումով ըստ բաւականի հասուն մասերն են, որոնք հաւանօրէն օգտակար և հետաքրքրական պիտի լինին բանասէրներու:

Իհարկէ աշխատութիւնս չի կարող շունենալ իր թերութիւնները վերև յիշուած բազմաթիւ պատճառներով, բայց և այնպէս անոր տալիք օգուտներէն ամենէն կարևորն այն է, որ առիթ պիտի լինի քննադատներու, մասնաւորապէս փսփսուքներով գործող ախոյաններու հրապարակ գալուն. որուն համար յատկապէս կը խնդրեմ իրենցմէ, որ թողուն ալևս անհասկանալի նպատակներն և ազնիւ քննադատի ու ճշմարտութիւնը վերականգնելու բարի նախանձախնդրութեամբ կարգան ու քննեն աշխատութիւնս: Ոչ որ թող չի կարծէ, որ ես քննադատութենէն կը խորշիմ կամ կը վախնամ. ընդհակառակը չափազանց սիրող եմ, որովհետև միանգամայն համոզուած եմ, որ առանց արդար ու անաչառ քննադատութեան բովէն անցընելու անկարելի է գուտ ճշմարտութիւնը գտնել: Անհունապէս ուրախ պիտի լինիմ, եթէ քննադատներս՝ տեսութիւններուս ամբողջական աւերակներուն վրայ կանգնեն իրենց գտած նոր ճշմարտութիւնները: Այդ պարագային մէջ ինձ համար կը մնայ դարձեալ պարծանքի բաժին մը, համարելով զիս զրդապատճառ բանասիրաց այսպիսի կարևոր խնդրով մը զբաղելուն և իմ թերութիւններս իբրև հիմնարար կանգնուելիք մեծ ճշմարտութիւններուն: Ես այսպէս կը սիրեմ հայ պատմական արուեստն ու գիտութիւնը, ով որ կըսիրէ ինձի պէս, թող բարեհաճի. զրիչը ձեռք առնել և իր ունեցածը տալ հայ արուեստի պատմութեան: Օն ուրեմն ասպարէզը ձերն է, ով ազնիւ ու պատուական քննադատներ:

Թ. ԹՕՐԱՄԱՆԵԱՆ.




ՀԱՅ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ա.

ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐԸ

(ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԻՒՆ)



Պատկեր 1. Տեկոսի սահարի ընդհանուր տեսքը հարավ-արեւմուտքէն

ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐԸ

Առանց խօսքս մասնաւորելու հայոց ճարտարապետութեան վրայ, պիտի համարձակիմ ըսելու, որ ընդհանուր ճարտարապետութեան և գեղարուեստի պատմութիւնը անողոք կերպով դատապարտուած է վերջնականապէս կորսնցնելու իր հազար վեց հարիւր տարուան պատկառելի ներկայացուցիչներէն մին՝ առանց զայն հարցաքննելու, քանի դեռ լիովին կազմալուծուած չէ և կարող է ընդարձակ չափով լուսաբանութիւններ ընծայել իւր ժամանակակից պատմութեան, արուեստներու, գեղարուեստական ոճերու և անոնց փոխանցման վրայ:

Այս անփոխարինելի կորուստը հնագոյն ճարտարապետութեան պատմութեան համար ծանրակշիռ համարելով, իբրև կոչ հրապարակի վրայ պիտի դնեմ քանի մը տողերս, յուսալով որ մոխրակոյտի մը փոխուելէն առաջ, գիտնական մասնագէտներ կշտապեն այս մեծ յիշատակարանին շուրջը հաւաքուիլ և լուրջ ու մանրազնին ուսումնասիրութեամբ կը քաղեն անկէ գեղարուեստի պատմութեան համար ամենակարևոր տեղեկութիւններ, որով միանգամայն կազատեն ապագայ գիտնականն ու բանասէրը, անհիմն կարծիքներու, թիւր ենթադրութիւններու և ըստ հաճոյս արձակուած վճիռներու պատճառելիք մոլորութիւններէն:

Ով որ բնական աչքով դիտած է, երբեմնի հոյակապ, իսկ այժմ տարաբաղդաբար ողբալի վիճակի մատնուած Տեկոսի տաճարը, համոզուած եմ, որ անկեղծ ցաւակցութեամբ ձայն պիտի բարձրացընէ ինծի հետ գեղարուեստի պատմութեան մէջ անոր արժանավայել տեղը տալու և յիշատակը յաւերժացնելու համար:

Արուեստագէտներու այցելութենէն բոլորովին զուրկ չէ մնացած Տեկորի տաճարը, սակայն կարող եմ ըսել, որ մանրախոյզ հետազոտութեան փորձ ալ ամենևին չէ եղած: Անցեալ դարու սկզբին Ֆրանսացի ճարտարապետ Texier իւր ի հայտ կատարած ուղևորութեան յիշատակարանին մէջ անոր պայտածև (fer à cheval) աղեղներու և կամարներու ոճը անարդար կերպով արաբական ոճին վերագրուելուն դէմ բողոքելէն յետոյ, այլևս անոր մասին ոչ իրեն և ոչ ալ ուրիշներու կողմանէ եղած ուսումնասիրութիւններ չկան. կամ եթէ կան ալ դժբաղդաբար ինծի յայտնի չեն:

Արևմտեան դրան վրայ զրուած արձանագրութենէ մը կերևայ, որ այս տաճարը կանգած է Սահակ կամսարական անունով մէկը, Յոհաննէս կաթողիկոսի մը և Յոհաննէս Արշարունեաց եպիսկոպոսի մը կենդանութեանց ժամանակ*): Հայր Ալիշան այս անունները կը հասցնէ մինչև 5-րդ դար: Ասով մասամբ կը յայտնուի թէ Տեկորի տաճարը հայոց 5-րդ դարու ճարտարապետութենէն մեզ հասած մի նմոյշ է:


Բայց որովհետև արուեստի լեզուն յաճախ աւելի ճշմարտախօս և մանրապատում եղած է քան պատմագրողն ու արձանագրողը, ուստի իմ կարծիքով առանց լիովին արձանագրութեան վրայ հիմնուելու, պէտք է արուեստագիտական ուղղութեամբ քննել և վճռել անոր շինութեան ժամանակը, կրած փոփոխութիւնները, ինքնուրոյն և փոխանցեալ ոճերը, և վերջապէս այն բոլոր մասերը, որոնք անհրաժեշտ են ժամանակակից գիտութեան համար:

Գուցէ յանդգնութիւն համարուի իմ կողմանէ, եթէ ըսեմ, որ մանրախոյզ հետազոտութեան փորձը առաջին անգամ ես կատարե-

* Չ. Ղ. վ. Ալիշան. Շիրակ. վիճակի 1881, երես 132:

Աւրանիայ և Հոռո... (ե)պիսկոպ սի և Տ...յրոնի Տեկորի վանաց երեցու և Մանանայ Հաղարապետի հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յոհաննու հայոց կաթողիկոսի և Յոհաննու Արշարունեաց յիւր բարեխաւսութիւն և բոլոր ազգիս և ամուսնի և որդեկաց և սիրելեաց և սրբոյ Սարգսի, Սահակ կամսարական շինեաց զայս վկայաբան:

Հայր Ալիշանի տեղեկատուն սխալ է կարգացեր այս արձանագրութիւնը: Սրբոյն Սարգսի բառը ամենէն վերջին բառն է. որովհետև վերջին տողին համար չէ բաւականացեր բարաւորին երկայնութիւնը, այդ պատճառով քանդակագործը երկու տողին մէջտեղ է փորագրեր «սրբոյն Սարգսի» բառը. ընթերցողը կարծիք է թէ վերջընթեր տողի շարունակութիւնն է սրբոյն Սարգսի բառը:



Պատկ. 2. Ս. Գայանէի եկեղեցի (Էջմիածնի մօտ):

Ընդօրինակուած «Հայոց եկեղեցիների և ճարտարապետության նմուշներ» հանդէս, 6
Լ. Միլիպարեան և Ռ. Մարտիրոսեան, Ս. Պետերբուրգ 1904.


ցի 1909 թ. ամբողջ մայիս ամսուան մէջ: Սակայն նախապէս պէտք է խոստովանիմ, որ ներկայ աշխատութիւնս անպայման կունենայ իւր շատ թերի կողմերը, որովհետև մէկ կողմանէ զրկուած եմ պատմական գեղարուեստի զրականութեան մէջ խորասուզուելու հնարաւորութենէն, միւս կողմանէ, զրկուած օժանդակ ոյժերու աջակցութենէն, որ անհրաժեշտ է այսօրինակ աշխատութիւններ նպատակայարմար կերպով գլուխ հանելու համար: Արդ ինկատի ունենալով սոյն պարագաները անշուշտ կը ներուին այն բոլոր թերութիւնները, որոնք կարող են սպրդած լինել ներկայ աշխատութեանս ընթացքին մէջ:

Շատ պարզ է, որ ես մինակա բաւական չէի Տեկորի տաճարի նման հնադարեան մեծ առեղծուած մը ըստ ամենայնի ճշդութեամբ լուծելու. ուստի այս առթիւ կը յայտարարեմ, որ ինծի մեծ հաճոյք պիտի պատճառեն ազնիւ ու անաշառ քննադատներու լուսաբանութիւնները յօգուտ այս մեծ յիշատակարանի ճշգրտագոյն ուսումնասիրութեան:

Ներկայ ուսումնասիրութեանս մէջ, բացի անհրաժեշտ պահանջուած տեղերէն, առ հասարակ պիտի հրաժարիմ զուտ ճարտարապետական և գեղարուեստական մասերուն վրայ դատելէ և ընդհանուր ճարտարապետութեան մէջ անոնց դիրքը, ազդեցութիւնները և փոխանցումները քննելէ: Այդ ճիւղը վերապահած եմ առ այժմ մի ուրիշ աշխատութեանս, որ պիտի բովանդակէ ամբողջ հայ ճարտարապետութեան ուսումնասիրութիւնը իւր բոլոր ճիւղերով: Այստեղ պիտի ամփոփեմ միայն Տեկորի տաճարին մինչև մեզ հասնելը կրած փոփոխութիւնները և պիտի համեմատեմ հայ ճարտարապետութեան առանձնայատուկ ոճերու և շէնքերու հետ:

Որպէսզի քննական պարզաբանութիւններս աւելի զրական օրինակներու վրայ հաստատեմ, նախ քան Տեկորի տաճարի մասին խօսելս, հարկ կը համարիմ մի համառօտ ընդհանուր տեսութիւն կատարել հայ ճարտարապետութեան ամբողջ տեսողութեան շրջանին մէջ կանգնուած հայոց (Basilique) Պազլիթք եկեղեցիներու յատակագծային զանազան ոճերուն վրայ, որոնք ընդհանրացած են տարբեր ժամանակներու մէջ:

Բայց որովհետև նախքան 7-րդ դար կառուցուած եկեղեցիներէն



Պատկ. 3. Յասակագիծ Անիի կաթողիկէ մայր եկեղեցւոյ.

շատ քիչերը հասեր են մեզ, և անոնք ալ տակաւին ժամանակագրական տեսակէտով լիովին գիտական ուսումնասիրութեան բովէն չեն անցած. ուստի սոյն համառօտ տեսութիւնս պիտի ընդհանրացնեմ 7-րդ դարէն սկսեալ գոյութիւն ունեցող պաղիլիքներու վրայ և անոնց հետ պիտի համեմատեմ աւելի հնագոյն լինելու հաւանականութիւն ներկայացնող եկեղեցիները, որոնց զլիսաւորն է ներկայ աշխատութեանս նպատակակէտ Տեկորի տաճարը:

Իմ կատարած բոլոր հետազօտութիւններով նկատեր եմ, որ հայոց եկեղեցիներու յատակագծային ոճերու մէջ 7-րդ դարէն սկսեալ մինչև 14-րդ դար, երեք զլիսաւոր զանազանութիւն կայ:

Առաջին զանազանութիւնը կը վերաբերի այն բոլոր պաղիլիք (Basilique) եկեղեցիներուն, որոնք ունին ներքուստ գմբէթակիր անշատ չորս մոյթեր (pilier) և նոյն մոյթերու դասաւորութեան եղանակէն յառաջ եկած միջին լայն (պատկ. 2, A) և կողմնակի նեղ (պատկ. 2, B B) թևեր (nef) արևելքէն արևմուտք ձգուած: Կիսաբոլորակ խորանի երկու կողմը առհասարակ երկու հաւասարակողմ քառակուսի սենեակներ կան (պատկ. 2, C C) խորանին հաւասար խորութիւնով: Արևելեան կողմի գմբէթակիր անշատ մոյթերէն (pilier) մինչև խորան եղած միջոցները *) (transepte) (պատկ. 2, D D) հաւասար լայնութիւն ունին արևմտեան անշատ մոյթերէն մինչև արևմտեան պատը եղած միջոցին հետ (պատկ. 2, E E):

Քառակուսի սենեակներու տեսակէտով հայոց եկեղեցիները ունին ուրիշ այլազանութիւններ ալ, որոնք 7-րդ դարէն շատ առաջ սկսուած կերևին, և տեւած են մինչ 13—14-րդ դարերը, ձևի նպատակի առաւել կամ նուազ փոփոխութիւններով: Յաճախ կը պատահի, որ խորանին երկու կողմի սենեակները կրկնայարկ են. կան եկեղեցիներ ալ, որոնց չորս անկիւններուն վրայ կան չորս սենեակներ, ասոնցմէ ալ ոմանք կրկնայարկ, այսինքն չորս անկիւններու վրայ ունին ութ սենեակներ: Չորս անկիւններու վրայ չորս սենեակ ունեցող եկեղեցիներու ներսը ստացեր են իսկական խաչի ձև և խաչաձևի թևերը սովորաբար կիսաբոլորակ վերջաւորութեամբ:

Երկրորդ զանազանութիւնը կսկսի ընդհանրանալ 9-դ դարու

*) Հայոց մէջ այս մասին դաս անունը կուտան, այս անունը ստացած է անշուշտ արարողութեանց միջոցին քահանայից և դպրաց դասին այնտեղ կանգնելու համար ընդունուած սովորութեան պատճառով:

վերջերէն կամ 10-դ դարու սկզբէն, որուն մէկ օրինակն է Անիի կաթողիկէ մայր եկեղեցին, Շիրակաւանի եկեղեցին և ուրիշ նմաններ: Այս զանազանութեան մէջ եկեղեցիներու ներքին բաժանումները զգալի չափով փոփոխութեան ենթարկուած են: Սեղանի և արևելեան գմբէթակիր մոյթերու միջոցները (transepte) զգալի չափով նեղցած են (պատկ. 3, A A): Կողմնակի սենեակները իրենց հաւասարակողմ քառակուսի յատկութենէն դուրս գալով երկարած և արևելքէն արևմուտք ձգուած են խորանի խորութեան չափով (պատկ. 3, B B), խորանները ևս աւելի լայնացած և խորացած կողմնակի սենեակների խորութեան հաւասար չափով:

Երրորդ զանազանութեան կը վերաբերին սովորաբար այն բոլոր միջակ մեծութեամբ և փոքր եկեղեցիները, ինչպէս Անիի Ս. Գրիգոր Լորսաւորիչ (Նախշի) եկեղեցին (պատկ. 4) և իւր նմանները, որոնց մէջ գմբէթները առանց բացառութեան հանգչած են որմամոյթերու վրայ (պատկ. 4, A A): Արևելեան կողմէն որմամոյթերը կցուած են խորանին, առանց միջոց (transepte) ունենալու: Ինչպէս կերևի, այս ձևով եկեղեցիներու մէջ քահանայից և դպրաց դասի տեղը կամ խորանին մէջ էր և կամ, իբրև տոհմային եկեղեցիներ դրսի ժողովուրդ շատ չի յաճախելով, քահանայից և դպրաց դասը կը գրաւէր գմբէթին ներքևի մասը (պատկ. 4, C), ետևը մնացած մասն ալ (պատկ. 4, D) արդէն բաւական էր մի տոհմի անդամներուն:

Այս ձևի ծագման մասին դժուար է կարծիք յայտնել. գուցէ շատ հին ժամանակներէ հասած է մինչև 13-14-դ դարերը. այնուամենայնիւ ինծի դեռ չէ պատահած այս ձևով մի եկեղեցի որուն շինութեան թուականը առ առաւելն 9-դ դարէն անդին անցնի:

Պատմագրական տեղեկութիւններ շատ կան հայոց քրիստոնէութեան սկզբէն մինչև վերջը վանքերու, վկայարաններու և մատուռներու գոյութեան մասին, սակայն հին դարերու մէջ անոնց ձևի վրայ ոչ մի նկարագրութիւն չունինք. բոլորովին էին անոնք, բազմանկիւնի, թէ քառակուսի: Այս մասին իմ կարծիքս այն է, որ թերևս բոլորակ կամ բազմանկիւնի ձևով գոյութիւն ունէին միայն մկրտարաններ, արևմտեան քրիստոնէից սովորութեան համաձայն. իսկ մատուռներ և վկայարաններ եղած են երկար քառակուսի

արևելքէն արևմուտք ձգուած, վրան մի կամարով ծածկուած ամբողջ երկայնութեան վրայ, առանց գմբէթի, ինչպէս միջնաբերդի պալատական եկեղեցին, Հոռոմոսի ս. Յովհաննէս տաճարին հարաւային կողմի փոքր մատուռը այս ձևի փոքր եկեղեցիները գմբէթաւորելու սովորութիւնը հայոց մէջ 10-րդ դարէն սկսած կերևի: Հայր Արիշան իւր Այրարատի մէջ (երես 473 պատկ. 182) կը ներկայացնէ որպէս հնագոյն շինութիւն մի փոքր վանքի կամ եկեղեցիի յատակագիծ, մտաւոր նմանութեամբ սովորական փոքր եկեղեցիներու, սակայն այդ յատակագծի ստացած այժմեան ձևը չէմ կարծեր, որ 9-րդ դարէն անդին անցնի*):


Տեկորի տաճարին յատակագիծը համեմատելով 7-րդ դարէն սկսեալ կանգնուած բոլոր եկեղեցիներու յատակագծերու հետ կը տեսնենք, որ մի զգալի բացառութիւն կը ներկայացնէ Տեկորի տաճարին յատակագիծը: Յիրաւի ներքին գմբէթակիր մոյթերու դասաւորութեամբ և թևերու (nef) ու խորանի համեմատութեամբ որոշ նմանութիւններ կը գտնենք 7-րդ դարու եկեղեցիներու յատակագծային համաչափութեանց հետ, սակայն խորանի երկու կողմի նեղ ու երկայն և հիւսիսէն հարաւ երկնցած սենեակներով, (պատկ. 5, A A) խորանին՝ արևելեան պատէն մասնաւոր կերպով դուրս ցցուածքով (պատկ. 5, B), արևելեան կողմէն դէպի հիւսիս և հարաւ դուրս ցցուած թևերով, (պատկ. 5, D D), շէնքը շրջապատող plate-forme-ով (պատկ. 5, C C C) 7-րդ դարէն սկսած մինչև 14-րդ դար շինուած եկեղեցիներէն բոլորովին կը տարբերի:

Յետագայ դարերու համար անսովոր այս մասերն են, որ լուրջ քննութեան կը կարօտին և ասոնց ուսումնասիրութեամբը եթէ Տեկորի տաճարին կառուցման ճիշտ թուականն ալ չի գտնուի, յուսալի է, որ գոնէ կը պարզուի անոր և նմաններուն շինութեան ամենահաւանական դարը:

Որովհետև խորանի երկու կողմի սենեակներու նեղ ու երկայն և հիւսիսէն հարաւ ուղղուելու ձևը (պատկ. 5, A A) նաև արտաքին ճակատէն դուրս շեշտուելու սովորութիւնը (պատկ. 5, D D) 7-րդ դարէն սկսած միանգամայն վերջ դտած է, կը պարտաւորինք այդ ձևի գործածութիւնը 7-րդ դարէն առաջ կանգնուած տաճար-

*) Այս մասին բացատրութիւն պիտի տեսնուի աշխատութեանս ընթացքին մէջ:

ներու մէջ փնտրելու և կը տեսնենք, որ այդ ձևը պահած է էջմիածնի կաթողիկէն և Երեւոյի կիսաւեր տաճարը:
 էջմիածնի կաթողիկէին մէջ նոյն սենեակներու շինութիւնը թերևս վերջին օրինակըն էր հայոց եկեղեցիներու մէջ եթէ կոմի-



Պատկ. 4-րդ. Յասակազիծ Անիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Նախւի) եկեղեցիի

տաս կաթողիկոսի նորոգութեան ժամանակ աւելցաւ հնագոյն շինութեան վրայ, բայց ինծի հաւանական կերևնայ, որ նախ քան կոմիտաս կաթողիկոսի նորոգութիւնը արդէն սենեակները աւելցած էին սեղանին երկու կողմը: Իսկ Երեւուքի տաճարը ոչ մի կասկած չի կարող լինել, որ նախքան 7-րդ դարը կանգուն էր և ունէր նոյն ձևի սենեակներ արևելեան կողմէն խորանին աջ ու ձախ կողմերուն վրայ: Այստեղ յաճախ առիթ պիտի ունենամ Երեւուքի մասին խօսելու և ապացուցանելու անոր վաղ քան 7-րդ դարը շինուած լինելը:


Տեկորի տաճարին այսօրուան ձևը, առանց կարևոր փոփոխութեանց, եթէ իր զուտ նախնական ձևը լինէր, ի հարկէ աւելի քիչ նիւթ պիտի տար իր վրայ խօսելու, սակայն ակներև փաստեր ցոյց կուտան, որ դարէ ի դար շատ տեսակ փոփոխութիւններու ենթարկուեր է, որոնց հետազօտութիւնը վերին աստիճանի հետաքրքրական է, թէ պատմութեան և թէ արուեստի տեսակէտով:

Մանրամասն չափազրելով և հետազօտելով այն եզրակացութեան հասած եմ, որ Մահակ կամարական մը ոչ թէ ի հիմանց նոր շիներ է այդ եկեղեցին, այլ կանխաւ գոյութիւն ունեցող շինութեան մը վրայ կատարեր է շատ կարևոր փոփոխութիւններ:

Մի ուրիշ յատակագծի վրայ (պատկ. 6, Տեկորի տաճարի յատակագծին նախկին ձևը), որուն մէջ սև գոյնով ներկուածը ցոյց կուտայ եկեղեցիի հնագոյն ձևը, իսկ թուխ գոյնով ներկուածները հետզհետէ յաւելուած մասերն են, որոնցմով ստացած է այսօրուան ձևը:

Թուեմ այժմ այն ամեն ապացոյցները, որոնց հիման վրայ կարգ մեր եմ (պատկ. 6) յատակագիծը և շէնքի պատկերները (élévation) նախկին ձևի մասին:

Եթէ ուշադրութեան առնենք տաճարին արևելեան կողմէն գուրս ցցուած թևերու լայնութեամբ շէնքը երեք կողմէն (հիւսիս, հարաւ, արևմուտք) շրջապատող plate-forme-ը (պատկ. 5, CCC) պիտի համոզուինք, որ հակառակ հայոց եկեղեցիներու յատակագծային ընդհանրացած ոճերուն, աննպատակ չէր կարող գոյութիւն ունենալ Տեկորի տաճարին շուրջը: Անտարակոյս Երեւուքի տաճարը շրջապատող սիւնազարդ կամարակապ ծածկոյթի մը (portique), յատակն (plate-forme) էր, որուն վրայէն թէև մի օր ծածկոյթը



Պատկեր 5-րդ. Տեկորի տաճարի այժմեան յատակագիծը

վերցուներ է, սակայն շատ հասկնալի պատճառներով plate-forme-ը պահուած է: Որովհետև տեղին զառիվայր դիրքին պատճառով հիւսիսային կողմէն շէնքի յատակը բարձրացած էր, եթէ plate-forme-ը անհետացնել ուզէին, փոխարէն վերստին սանդուխներ պէտք էր շինէին հիւսիսային դռներուն հասնելու համար:


Նմանապէս շէնք կարող աննպատակ համարել այն գեղեցիկ որմասիւնները (colonne-engagé), իրենց սիրուն ու ճոխ խոյակներով ու խարիսխներով, ոմանք կը որ 50—53 սնթ. տրամագծով, ոմանք քառակուսի 70—80 սնթ. լայնութեամբ և պատէն դուրս ցցուած 40—42 սնթ. և ենթադրել, որ լոկ ցոյցի համար շարուած էին անոնք շէնքի արտաքին երեսներուն վրայ, առանց գիտցուելու անոնց պաշտօնն ու նպատակը:

Հնագոյն դարերու հայոց ճարտարապետութեան մէջ շատ կարևոր տեղ կը բռնէ Տեկորի տաճարը գլխաւորաբար այն միակ պատճառով, որ անոր զանազան մասերուն վրայ գեղարուեստական և շինարարական որոշ ճիւղեր աւելի կատարելագործութեան հասած են՝ քան յետագայ դարերու մէջ: Յայտնի է, որ անոր ճարտարապետը լինելով միանգամայն հմուտ տեղական արուեստին, նաև հմուտ էր արևմտեան չքնաղ ոճերու, որոնց հետ պատուաստելով արևելեան ճոխ զարդաքանդակներ կազմեր է մի ներդաշնակ խառնուրդ սիւներու, խոյակներու, խարիսխներու, որոնք անպայման ըստ իրենց քնական կոչման կը կրէին աղեղներ և կամարներ:

Որմասիւններու (colonne-engagé) գլխին հանգչող աղեղներու գոյութիւնը ապացուցանելու համար, ի մեծ բախտաւորութիւն այժմեան հետազօտութեան, հիւսիսային ճակատի միջին երկու որմասիւններու խոյակներուն վրայ (պատկ. 5, E E) (պատկ. 7, A A) պահուած են երկու կամարաքարեր, որոնք plate-forme-ը ծածկող կամարին հանգստեան (retombé) վերջին քարերն էին:

Այս երկու կամարաքարերու դիպուածական գոյութիւնը գիտական հետազօտութեան համար բողբ համարեցի այն պատճառով, որ նորոգութիւններու ժամանակ որմնահիւս վարպետներ եթէ ուզէին, շատ հեշտութեամբ կարող էին տաշել և անհետացնել շուրջանակի սիւնազարդ ծածկոյթի (portique) այդ դրական ապացոյցները:

Այսքանը միայն բաւական չէ շուրջանակի սիւնազարդ ծած-



Պատկեր 6. Նախկին յասակագիծ Տեկորի սանարին

կոյթի (portique) գոյութեան իբրև ապացոյց: Արևելեան կողմէն դէպի հիւսիս և հարաւ դուրս ցցուած թևերու անկիւններուն վրայ (պատկ. 5, F F), (պատկ. 7, I, պատկ. 9, K L) կան տակաւին որմասիւններ, որոնք ցոյց կուտան թէ plate-forme-ի արտաքին եզերքին վրայ շուրջանակի շարուած էին անշատ սիւներ միմեանց հետ աղեղներով կապուած և իրենք այդ սիւնաշարերը իրարու կապող աղեղներուն վերջիւններուն ծայրերը կը կրէին իրենց խոյակին վրայ: Իսկ յատակին վրայ դեռ չէ կորսած սեանց խարիսխներու (base) հաւասարաչափ լայնութեամբ շուրջանակի ձգուած կրաշաղախ հիմնագիծը (socle), որուն վրայ շարուած էին սիւները կարգաւ և այս հիմնագծին անմիջապէս կը յաջորդէ շրջապատի աստիճանները (պատկ. 6, A A A):


Մի ուրիշ ապացոյց ևս որմասիւններու (colonne-engagé) խոյակներուն անմիջապէս վրայէն շէնքը շրջապատող պսակն է (corniche) (պատկ. 1, A A A): Հայկական ոճին մէջ շէնքը մէջտեղէն պսակելու սովորութիւն ամենևին չէ եղած, սա բացառութիւն էր ընդհանրապէս ընդունուած օրէնքի դէմ, որուն պատճառը չէր կարելի չի փնտռել:

Քննութիւնը ցոյց տուաւ, որ plate-forme-ր ծածկող կամարին շէնքի կողմի բաքը (retombé) դրուած էր պատէն դուրս աւելորդ թանձրութեան մը վրայ (պատկ. 8, A A) և այդ պատճառով ալ նոյն սահմանէն վեր շարունակուած պատը բարակ է (պատկ. 8, B B): Սիւնազարդ ծածկոյթը (portique) քանդուելէն յետոյ, երբ կամարին հանգիստ տուող թանձրութիւնը բաց կը մնար և զանազան անխորժութիւններու պատճառ պիտի տար, այդ պատճառով ծածկեր են բաց մնացած մասը շուրջանակի պսակով (corniche) և որովհետեւ պատուհանները աւելի բարձր դրուած էին քան պսակի բարձրութիւնը, պսակի շարունակութեան մէջ պատուհան հանդիպած տեղերը փոխանակ ընդհատելու, նոյն պսակով պսակեր են նաև պատուհաններու վերին կիսաբոլորակները (պատկ. 1, B B B), (պատկ. 7, B B B), (պատկ. 9, A A):

Տեսնելով Տեկորի տաճարին կէսէն բաշուած այս պսակը (corniche) կը կասկածիմ, թէ մի գուցէ էջմիածնի մօյր տաճարն ալ մի ժամանակ portique-ով շրջապատուած և օր մը portique-ը քանդ-

1398-2003

Իրանի Հանրապետության
Հնամենի Մշակույթի
Գիտությունների
Ազգային կենտրոնի
Գրադարան



Архивное Упр. вл. в
ГЭД Армянской
НАУЧНО-СИРЬ ВЕЧНАЯ
БИБЛИОТЕКА

Պատկեր 7. Տեկորի տաճարի հիստիսային նակասը

Գրադարան
Հնամենի
Մշակույթի
Գիտությունների
Ազգային կենտրոնի

1398-2003

ուելով ստացած լինի Տեկորի տաճարին նման պսակ (corniche) բարձրուկեան կէսի վրայ, մինչդեռ նախքան Տեկորի տաճարը հետազօտելու ուրիշ պատճառներու վերագրած էր*):


Համոզուելու շատ պատճառներ կան, որ Տեկորի տաճարը արևելեան կողմէն ու ունեցեր է սիւնազարդ ծածկոյթ (portique), որուն ենթադրութեան առիթ կուտան արևելեան երկու անկիւններու վրայ գետեղուած երկու որմասիւներու խարխիւնները (պատկ. 5, G G), (պատկ. 7, C):

Կարելի է առարկութիւն ընել այս խարխիւններու մասին՝ գանձնք պատահական կամ իբրև զարդ շինուած համարելով, սակայն եթէ ի շրջանին տաճարին շուրջը սիւնազարդող ճարտարապետին իւրաքանչիւր ճարտարապետական յարամասունքներու իրենց պատշաճ տեղը համաչափօրէն և վայելչօրէն դասաւորելու կատարեալ գիտակցութիւնը, այն ատեն կը մնայ համոզուիլ, որ նոյն ճարտարապետը առանց որոշ նպատակի նոյն խարխիւնները չէր գետեղեր անկիւններուն վրայ առանց բունի (fût) և խոյակի (chapiteau):

Texier կ'ըսէր է, որ նոյն անկիւններուն վրայ այժմ վերէն մինչև վար գոյութիւն ունեցող սիւնանման քանդակուածքին (պատկ. 7, D. և պատկ. 10 ձև 1) իբրև խարխիւ գրուած են. այդ ձևով ալ մտցուցեր է իր յատակագծի և շէնքի պատկերներու (élévation) մէջ, քիչ ալ աւելի կանոնաւորելով և վայելչութիւն տալով քան իսկականը:

Ես պիտի առարկեմ, որ բացի ուրիշ պատճառներէ մի շատ պարզ և բնական պատճառով անընդունելի է այս կարծիքը: Սիւնանման անկիւններու ձևը հազիւ թէ գոյութիւն ունենար 7-դ դարուն մէջ, իսկ հայոց ճարտարապետութեան մէջ առանձին մշակուած և կատարեալ վայելչութեան հասած է անկիւններու այդ ոճը, սկսեալ 10-դ դարէն մինչև 13—14-դ դարերը, և մինչև հայ ճարտարապետութեան վերջնական անկումը գրեթէ անխտիր, շնորհալի կերպով վայելչազարդուած են 12—14-րդ դարերու բոլոր եկեղեցիներու անկիւնները, սակայն առանց խոյակի և խարխիւի են անոնք. ներքևի կողմէն ուղղակի նստած են շէնքի ամենէն վերևի աստիճան:

*) Т. Тораманьянъ. «О древнѣйшихъ формахъ Эчмиадзинскаго храма», С.-Петербургъ 1909 г. կամ թ. Քորամանեան. Էջմիածնի տաճարը 1910 թիֆլիզ:



Պատկեր 8-րդ. Տեկորի տաճարի հասուածը հիւսիսէն հարաւ

նին վրայ. իսկ վերէն խառնուած են պատին մէջ պսակին անմիջապէս ներքեր (պատի. 10, ձև 1, 2, 3) խարիսխի և խոյակի տեղ անոնց միակ զարդը կիսաբոլորակ վերջաւորութեամբ հարթ տաշուածքեր են միայն (պատկ. 10, ձև 3, A A):


Մրենի տաճարին անկիւններէն զատ 7-րդ դարուն մէջ կանգնուած ուրիշ ոչ մի շինութեան վրայ չենք գտներ այդ ձևով անկիւններ (պատկ. 10, ձև 2, Մրենի տաճարին անկիւնն է): 9-րդ և 10-րդ դարուն կանգնուած շինութեանց շատերուն վրայ ալ կը բացակայի այդ ձևը: Կարելի է կարծել, որ 7-րդ և 10-րդ դարերու մէջտեղ, (աւելի մօտիկ 10-րդ դարին) ծագում առած է այս ոճը հայոց ճարտարապետութեան մէջ, որ յետոյ 12—14-րդ դարերուն ըստ ամենայնի պարտաւորիչ և շատ ճոխ զարդարանքի տեղ բռնեց հայոց եկեղեցիներու անկիւններու վրայ:

Փաստեր կը պակսին մեզի Մրենի տաճարին անկիւններու սիւնանման քանդակուածքը 7-րդ դարուն տաճարի շինութեան հետ ժամանակակից համարելու. որովհետև ինչպէս ուրիշ շատ մը հնագոյն շէնքերու, նոյնպէս Մրենի տաճարին վրայ կատարուած կարևոր նորոգութիւններ և փոփոխութիւններ անվիճելի են:

Եթէ պահ մը Մրենի տաճարին անկիւններու սիւնանման քանդակումը շինութեան ժամանակակից համարինք, պէտք էր որ անոր չորս անկիւններն ալ միևնոյն ձևով քանդակուած լինէին, որպէս ժամանակակից սովորական ոճ, մինչդեռ այս ձևի քանդակումը կատարուած է միմիայն արևմտեան անկիւններու վրայ, արևելեան անկիւնները միանգամայն պարզ են: Այս պարագան արդէն ցոյց կուտայ, որ Մրենի տաճարին արևելեան կամ արևմտեան ճակատները իրարմէ տարբեր ժամանակներու մէջ փոփոխութեան են ենթարկուած: Այժմ փորձենք գտնել, թէ ո՞ր ճակատը կամ անկիւնները ինչ ժամանակ նորոգուած կամ փոփոխուած լինելը հաւանական է:

Մրենի տաճարը այցելելէս անմիջապէս յետոյ գրեցի Ալէքսանդրապօլ հրատարակուող «Ախուրեան» լրագրին մէջ արևելեան հարաւային կողմին վրայ տեսածս տարօրինակ նորոգութիւններու և կարկատաններու մասին*): Այս կ'որկատաններուն մէջ է, որ տասնեակ զանազան մեծութեամբ խաչքարեր հիւսուած են

*) Հարաւային ճակատի արևմտեան անկիւնին մօտ, պսակէն մինչև դրան




Պատկեր 9. Տեկորի տաճարի արեւմտեան ճակատը


պատին մէջ թէ ներսէն և թէ դրսէն: Խաչքարերու քանդակագործութեանց ոճերն ալ ցոյց կուտան, որ ամենահինը 10-րդ դարը շանցնիր: Ասկէց զատ ինծի շատ հաւանական կը թուի, թէ ի յիշատակ մեռելոց եկեղեցիներու պատերուն վրայ խաչքարեր քանդակելու սովորութիւնն ալ 10-րդ դարէն առաջ չէ եղած: Այդ սովորութիւնը հազիւ զգայի է 10-րդ դարուն. իսկ չափազանցուած 13—14-րդ դարերուն մէջ: Յիրաւի 10-րդ և 11-րդ դարերէն առաջ կանգնուած եկեղեցիներու պատերուն վրայ յաճախ կը գտնենք քանդակուած խաչքարեր, սակայն անոնք մեծ մասամբ 13—14-րդ դարու քանդակագործութիւններ են: Ինչպէս կերևի այս վերջին դարերուն մէջ հայ կղերին մի մենավաճառը դարձած էր ի յիշատակ հանգուցելոց պատարագ ծախելու նման, նաև խաչքար քանդակելու համար եկեղեցիներու պատերուն վրայ տեղ ծախելը: Հռոմոսի վանքին մէջ տոհմային դամբարաններ կան, որոնց պատերուն (մանաւանդ ս. Յովհաննէսի տաճարին հիւսիսային արևելեան կողմին կից) գրեթէ իւրաքանչիւր քարին վրայ խաչքարեր քանդակուած են զանազան ժամանակներու և զանազան վարպետներու գործ: Անշուշտ այս խաչքարերը կը պատկանէին դամբարանին մէջ թաղուածներու յիշատակին: Ս. Յովհաննէսի հարաւային պատին կից դամբարանին պատին վրայ կայ մի խաչքանդակ, որուն ներքև շատ բնորոշ կերպով գրուած է, — «Խոնթ Խաթունին է»:

Կարելի է որ նախ քան 10-րդ դար գերեզմաններու վրայ կանգնուած խաչքարեր կային, բայց երբէք հաւանական չէ եկեղեցիներու կամարը (նմանապէս արեւմտեան կողմն ալ) չորսէն մինչև հինգ մէթր լայնութեամբ՝ սկսած ըարծրէն՝ արեւմտեան անկիւնէն վերէն վար հակուղին ձևով դէպի արեւմուտք, ամբողջութեամբ պատուեր են պատը և վերստին տեղը նոր քարեր շարեր են: Այս քանդուած կամ փոփոխութիւնը, հնացած կամ որևէ արկածով վնասուած մասի մը նորոգութեան երևոյթը չունի ամենեկին. կարծէք թէ յատկապէս այդ մասին վրայէն մի յիշատակութիւն կամ մի ուրիշ անհաճոյ բան անհետացընելու դիտումով քանդած և վերաշինած են: Այս ըսածիս հաւանական ճշմարտութեան կը համոզուին ամեն անոնք, որոնք մասնագիտօրէն քննելով կը տեսնեն, թէ ինչպէս պատին վրայ դեռ մինչև այսօր ալ առողջ մնացած մեծ ծաւալով քարեր հակուղիդ ձևով տաշուած և անոնց վրայ նոր քարեր պատշաճեցուցուած են: Հաւանականաբար այս փոփոխութիւնը կատարուեր է 13-րդ դարուն, որովհետև այդ մասին վրայ գրուած արձանագրութիւններ կան, որոնց ամենահինը 2. թուականը շանցնիր: («Ախուրեան» 1909 օգոստոս 9):


Ձև 3.



Ձև 2.



Ձև 1.



Պատկեր 10. Հայոց հին քանդակներու սիւնանման անկիւնանմաներ

րու պատերուն վրայ գտնուիլը միևնոյն նպատակով, ինչպէս որ էր 10-րդ դարէն սկսած: Հին եկեղեցիներուն վրայ տեղտեղ պատշաճութեան համար իբրև զարդաքանդակ միայն շինուած են, ինչպէս կայ Տեկորի տաճարին հիւսիսային դրան և արևմտեան արտաքին որմասիւններու խոյակներէն մէկուն վրայ: Վերջին ժամանակներու մէջ եկեղեցիներու պատերուն վրայ քանդակուած խաչերը մի բնորոշ յատկութիւն ունին, որ դեռ 10-րդ դարուն ալ այնքան շեշտուած չէր, այսինքն անպայման եկեղեցիի պատերուն վրայ պիտի ընտրէին այնպիսի մի տեղ, որ քանդակուած խաչին ճակատը դէպի արևմուտք նայէր: Մրենի մէջ թէև մեծ մասամբ արևմտեան պատին վրայ շարուած են, սակայն կան նաև հարաւային պատին վրայ ալ ագուցուածներ:

Գալով գերեզմաններու վրայ կանգնուած խաչքարերու ձևին, անոնք առհասարակ տապանաքարերուն արևելեան կողմը խորանարդ կամ առտիճանաւոր պատուանդանի վրայ կանգնուած երկար քառակուսի հաստ քարէ տախտակներ են, որոնց արևմուտք նայող ճակատին վրայ քանդակուած են խաչի պատկերը շրջապատուած զանազան քանդակագործութեամբ, դարու ճաշակին համաձայն:

Այս ձևի խաչքարերու մէջ իմ տեսածներուս ամենէն հինը հազիւ 10-րդ դարու սկզբին հասնի: Իսկ անկէջ առաջ հաւանական է, որ եղած լինէին խորանարդ պատուանդանի վրայ կանգնուած քառակուսի սիւնանման կոթողներ զանազան բարձրութեամբ: Այս ենթադրութեան առիթ կուտան ինծի պ. Ն. Մառի երբերուքի պեղումներէն և պ. Յակոբ Կարանեանցի Ագրակէն բերած կոթողանման քարերը, որոնք այժմ կը գտնուին Մնիի հնագիտական թանգարանին մէջ: Թէև ոմանց կարծիքով այս քարերը վէմ քարեր ալ եղած լինին, սակայն ես բոլորովին չեմ կարողացած համաձայնիլ, որովհետև կան այնպիսի բարձրութեամբ քարեր, որոնք եթէ իբրև վէմ քար ծառայէին, հազիւ թէ պատարագիչ քահանային հասակը բաւականանար նոյն բարձրութեան հասնելու: Իսկ ոմանք ալ խորանարդ պատուանդաններ ունին, վրան քառակուսի փորուածքով կոթողը ագուցանելու համար: Կոթողներն ալ ունին վերի ծայրերուն վրայ քառակուսի փորուածքներ, որոնք անշուշտ մետաղեայ, քարեայ խաչեր անցընելու յատուկ էին, թէ պատուանդանին և թէ կոթողին շուրջը պատկերաքանդակներով զարդարուած են: Եթէ



Սեան. Ս. Առաքելոց եկեղեցու հար. դուռ.
Sevan. Дверь церкви св. Апостоловъ
Sevan. la porte de l'église de S. Apôtres

հաստատութիւն կը գտնէ իմ այս կարծիքս, այն ատեն կարող ենք ըսել, որ 7-րդ դարէն մինչև 10-րդ դար հայոց տապանաբարերուն ձևն էր այս: Իսկ 10-րդ դարուն կսկսին վերև նկարագրուած քարէ տախտակներու ձևով խաչքարերը, որ տևած է մինչև 17-րդ դար: Ուրեմն Մրենի տաճարին արևելեան և հարաւային պատերու մէջ ազուցուած խաչքարերը 10-րդ դարու գերեզմաններու վրայէ քանդելով բերած շարած են այնտեղ: Հաւանականօրէն տաճարը նորոգողի տոհմին յիշատակարաններն էին անոնք. հետևաբար Մրենի տաճարը պէտք է որ նորոգուած լինի 10-րդ դարու կէսէն յետոյ, եթէ ոչ աւելի շատ ուշ, որով անկիւններու սիւնանման քանդակուածքն ալ կը լինի 10-րդ դարու կէսէն յետոյ շինուած գործ:

Այս տեսութեամբ ալ Տեկորի տաճարին արևելեան անկիւններու սիւնանման քանդակուածքը (պատկ. 7, D) դատելով իր աւելի նախնականութենէն, (archaïque), եթէ համարենք աւելի կանուխ քան 10-րդ դար, սակայն շատ դժուար է հասցնել մինչև 7-րդ դարը: Վերջապէս երբ ալ որ լինի անոր ճիշտ ժամանակը, քիչ յետոյ պիտի տեսնենք, որ տաճարի շրջապատի սիւնազարդ ծածկոյթները (portique) քանդուելէն ալ յետոյ անոնց քանդակուած լինելուն մեծ հաւանականութիւն կայ:

Այժմ սկսիմ պարզել այն հիմունքը, որոնց վրայ հաստատուած պիտի ապացուցանեմ կարծուածէն աւելի հին ժամանակ՝ ուրիշ շէնքի մը գոյութիւնը, որուն վրայ կազմուած է մեր այսօրուան տեսած Տեկորի տաճարը, դարուց ի դարս ալ կարևոր փոփոխութիւններու ենթարկուելով: Պիտի աշխատիմ ցոյց տալ ոչ միայն այդ կրած փոփոխութիւնները, այլև շէնքին ամենակզբնական ձևը:

Չափազրեղու ժամանակ ամենէն առաջ ուշադրութիւնս գրաւեց տաճարի պատերուն արտակարգ թանձրութիւնը, որոնք 135-էն մինչև 145 սանթիմի կը հասնին՝ առանց որմասիւններու աւելորդ դուրս ցցուածքին: Եւ որովհետև հայոց հնագոյն յիշատակարաններու մի կարևոր մասին մէջ պատերու թանձրութեան համար գործածուած ամենաբարձր չափերը ինձի յայտնի էին, և սա բաղադրամբ անոնց՝ մեծ տարբերութիւն ունէր, բնականաբար չէի կարող զիպուածի վերագրել: Նոյնիսկ իրեն ժամանակակից յիշատակարաններու պատերու թանձրութիւնները, ինչպէս էջմիածին, Երեւոյթ, 120 սանթիմը չեն անցնիր. Երեւոյթի տաճարի պատերու ամե-

նաթանձր մասը 117 սանթիմ է: Նմանապէս 7-րդ դարու յիշատակարաններու մէջ ամենէն թանձր պատ ունեցողը Բագարանի աւանդաբար Ս. Թէոդորոս անուանուած եկեղեցւոյ պատերն են, որուն արեւելեան պատը միայն 125 սնթ. է, որ անշուշտ առանց պատճառի չէ. իսկ միւս պատերը 117 սնթ. թանձրութիւն ունին:

Ի հարկէ պատերու թանձրութիւնը բոլորովին հաստատուն փաստ չէր կարող նկատուիլ Տեկորի տաճարին մեծամեծ փոփոխութիւններու ենթարկուած լինելուն, եթէ նաև ուրիշ շարք մը համոզիչ ապացոյցներ չլիթայուած չի լինէին պատերու արտակարգ թանձրութեան հետ:

Երբերուքի մէջ սիւնազարդ ծածկոյթի կամարը հանգչեցնելու համար, Տեկորի տաճարին նման պատէն դուրս առանձին թանձրութիւն չիկայ ստորին մասին վրայ (պատկ. Տ, Ա), այլ կամարը ծնունդ առած է ուղղակի պատի 117 սնթ. թանձրութեան մէջէն*) թէև այս կերպով երբերուքի տաճարի սիւնազարդ ծածկոյթը (portique) բուն շէնքին հետ միաժամանակ շինուած լինելու հաւաստիքը կը ներկայացնէ, այնու ամենայնիւ դարձեալ բոլորովին կասկածանքէ ալ ազատ չէ, որում մասին պիտի տեսնուի քիչ յետոյ:

Շինարարական արուեստի (construction) մէջ անհրաժեշտ պայման է, որ սրբատաշ քարերով շինուած պատի մը քարերը ներսի և դրսի կողմէն հաւասար բարձրութիւն ունենան իւրաքանչիւր շարքի մէջ, և թէ իւրաքանչիւր քար իր լայնութեան, բարձրութեան նաև պատին թանձրութեան համեմատական խորութիւն ունենայ, որպէսզի թէ լաւ հանգչի պատին վրայ և թէ երբեմն ալ մօտենալով հանդիպակաց քարին, վրայէն դուրս քարով կապուին ներքևի երկու կողմի քարերը:

Ի հիմանէ նորոգ կառուցուած շինութիւն մը երբ այս օրէնքին հակառակ կը շինուի, ապօրինի լինելէն զատ, վտանգաւոր իսկ կը համարուի, որովհետև նախքան կրաշաղախին բոլորովին չորանալը, որ երբեմն տեղին և կլիմային համեմատ տարիներ կը տևէ, մէկ կամ միւս կողմէն պատը ուռելով փլուզման վտանգ կապառնայ: Իսկ երբ շինարարական օրէնքի պահանջներ ճշդիւ գործադրուած են,

*) Հիւսիսային և հարաւային կողմերը միայն, արևմտեան կողմը դարձեալ Տեկորի տաճարին նման յետնագոյն շինուածք է, որուն մասին պիտի տեսնենք իր տեղը:

որոշ տարիներ անցնելէ յետոյ, պատը չորանալով միակտուր զանգուածի մը կը փոխուի: Ահա այն ատեն բոլորովին անվտանգ է անոր մէկ կամ միւս երեսի քարերը մաս առ մաս քանդել և անոնց տեղ նոր քարեր շարելը: Նոյնպէս նաև կարևորութիւնէ զուրկ կը մնայ, եթէ նորոգ շարուած քարերը չափով թէ միմեանց և թէ հանդիպակաց քարերու չափերուն չի համապատասխանեն:

Տեկորի տաճարին նախնական շինութիւնը, որ անշուշտ դարուց ի դարս կանգուն մնալու ձգտումով շինուած էր, չէր կարող այս ընդհանուր օրէնքին հակառակ շինուած լինել, մինչդեռ այսօր, ընդհակառակը պատերու ներքին և արտաքին երեսներու վրայ քարերու լայնութեանց և բարձրութեանց անհաւասար չափերու լիակատար խառնուրդ մը կը ներկայացնէ, որով ամենափոքր կասկած իսկ չի մնար, թէ ամեն դարու մէջ անընդհատ փոփոխութիւններ և նորոգութիւններ պակաս չեն եղած Տեկորի տաճարին ամեն կողմին վրայ:

Այս բոլոր խառնակութեանց մէջ մի բան շատ պարզ է, որ արտաքին երեսներու վրայ քարերու յետնագոյն շարուածքը հմուտ ճարտարագետի մը հսկողութեան տակ կարող որմնահիւսի մը ձեռակերտն է:

Փլուած մասերուն վրայէն կը տեսնուի, որ արտաքին երեսներուն վրայ շարուած քարերը առ առաւելն 25 սանթ. խորութիւն ունին, այն ալ ոչ ամենը, ինչ որ շատ քիչ է: Իսկ երբ խնդիրը յետնագոյն նորոգութեան կամ նախապէս գոյութիւն ունեցող պատի մը այժմեան չափով թանձրացման վրայ կը կայանայ, այն ատեն քարերու և շաղախի կանոնաւոր խտացման համար նոյն չափէն աւելի խորութիւն ալ չէր կարող տրուիլ:

Հիւսիսային բաց մնացած*) դրան մէջէն ալ կը տեսնուի, որ յետնագոյն յաւելուածի համար դրսի երեսին վրայ առանձին բարաւոր և վերնաստեամ է շինուած՝ առանց հիւսերը բանդելու կամ տեղէն շարժելու:

Նոր աւելցուած մասերուն հաստատուն և ապահով լինելուն կասկած չէր կարող լինել, որովհետև նախ վարէն մինչև վեր յաւելումը 5 մէթր միայն բարձրութիւն ունէր: Երկրորդ, դրանց աղեղ-

*) Հիւսիսային կողմը ունի երկու դուռ, որոնց մէկը այժմ փակուած է:

նագարդ զոյգ սիւներու և որմասիւններու (collonne-engagé), (պատկեր 31, 32 և 33) ըստ բաւականին խիտ շարքը՝ միացած շուրջանակի ծածկուած կամարին և անշատ սիւներու շարքին, իբրև ապահով յենարան պիտի ծառայէին ոչ միայն պատի նոր յաւելուածին, այլև ամբողջ հին շինութեան: Թէև առանց այս ապահովութիւններուն ալ հին հայոց արհեստաւորներուն համար զժուար չէր շէնքերու մաշուած ճակատները բարակ քարերով վերանորոգութեան ենթարկել, ինչպէս կը տեսնուի Անիի կաթողիկէին քանի մը մասերուն վրայ վերին աստիճան յաջողութեամբ իրագործուած:

Մի ուրիշ անվիճելի փաստ ևս կուգայ վերջ դնել բոլոր կասկածանքներուն և հաստատել, թէ արտաքին որմասիւններ (colonne-engagé) շուրջանակի սիւնագարդ ծածկոյթով հանդերձ յետնագոյն յաւելուածներ ևն կանխաւ գոյութիւն ունեցող շինութեան մը վրայ:

Շատ պարզ է, որ այսօրուան մեր տեսած բոլոր դռներն ու պատուհանները (բացի հիւսիսային և հարաւային fronton-ներու անմիջապէս ներքև գտնուող զոյգ պատուհաններէն) նախնական շէնքին վրայ գոյութիւն ունէին, և կը տեսնուի որ հակառակ յետագայ դարերու հայ ճարտարապետաց համաչափութեան օրէնքներու դէմ ընդվզող յատկութեան, որչափ զժուարութիւններու հանդիպել է Տեկորի տաճարին յաւելումները կատարող համաչափութեան ծայրայեղ սիրահար ճարտարապետը, որչափ որ բոլորովին չէ յաջողը սակայն անոր ջանքերուն անշնչելի հետքերը մնացեր են շէնքին վրայ:

Նախ ձեռք առնենք հիւսիսային ճակատը, կը տեսնենք, որ սիւնագարդուելիք 18 մէտր 48 սնթ. +, 0—*) 19, 18 երկարութիւնը զրեթէ ուղիղ մէջտեղէն կիսելով, միջին կէտը առեր է ճարտարապետը և երկու կողմին վրայ համաչափ բաժանումով դասաւորեր է որմասիւնները: Բայց այդ միջին կէտին (պատկ. 5, J) երկու կողմին անմիջապէս յաջորդող (պատկ. 5, E E) սիւներէն արևմտեան կողմինը աւելի մօտ է միջին կէտին (պատկ. 5, J): Ասոր ալ պատճառը շատ պարզ է, որովհետև արևմտեան դրան լայնութիւնը (հիւս. ճակատի վրայ) իր երկու կողմի զոյգ սիւներով 350 սնթ. է, մինչդեռ արևելեան կողմինը 3,25 սնթ., ուստի այդ միջին կէտին վրայ եթէ

*) Սոյն 70 սնթ. յաւելուածը արևմտեան կողմի (պատկ. 5, H) որմասիւնին արևելեան կողմէն համապատասխանող որմասիւնն է, որ մէկ կողմէն թաղուած (պատկ. 5, L) կիսաբոլորակին (abside) պատին մէջ (պատկ. 5, I):

սիւններու հեռաւորութեան հաւասարութիւնը պահել ուզէր, զրեթէ անհնար պիտի դառնար: Եթէ միջին կէտի (պատկ. 5, J) արևմտեան կողմի որմասիւնը մի քիչ աւելի հեռացնելով դէպի արևմուտք շարժէր, դրան մեծութիւնը կարգելէր, եթէ միւս կողմի սիւնը մօտեցնէր միջին կէտին, արևելեան կողմի դռնէն կը հեռանար և անհաճոյ անհամաչափութիւն մը յառաջ կը գար: Պահ մը ենթադրենք, որ արևելեան կողմէն (պատկ. 5, E կամ պատկ. 7, A) շարժէր դէպի արևմուտք բնականաբար A և E (պատկ. 7) որմասիւններուն միջոցը պիտի լայնանար 2ս սնթ., եթէ նոյն համաչափութիւնը փոխադրեր արևմտեան կողմի A և F (պատկ. 7) սիւններու հեռաւորութեան վրայ, մէկ կողմէն դռնէն պիտի հեռանար F սիւնը, միւս կողմէն պատուհանը պիտի ծածկէր, որնոր այժմ ալ հազիւ ազատած է որմասեան ետևը մնալէն: Վերջապէս ամեն կերպ քննութիւն ցոյց կուտայ, որ մանրամասն հաշիւներով մտածուած և դասաւորուած են որմասիւնները (colonne engagé), միշտ ի նկատի ունենալով հին շէնքին վրայ կանխաւ գոյութիւն ունեցող դռներն ու պատուհանները:

Արևմտեան ճակատի վրայ թէև որմասիւններու համաչափ դասաւորութեան համար մեծ արգելքներ չի կային, սակայն իսկզբան այս ճակատին վրայ ալ դռան ճիշդ մէջտեղը չի գտնուելը և պատուհաններուն ալ փոքր ի շատէ անհամաչափ դիրք ունենալը դարձեալ յառաջ բերեր է որոշ անյարմարութիւններ, թէև քիչ զգալի, ինչպէս կը տեսնուի պատկ. 1, C կամ պատկ. 9, B. պատուհանը մտեր է մի քիչ որմասիւնի խոյակի նի ետևը:


Հարաւային ճակատը աւելի մեծ արգելքներ տուեր է որմասիւններու համաչափ դասաւորութեան: Այս կողմին վրայ ամենէն անյարմար դիրքը զբաւուած է մտից գուռը. պատուհաններէն մէկը (պատկ. 1, D) դարձեալ հազիւ ազատած է որմասեան ետևը մնալէն:

Պահ մը եթէ փորձի ենթարկենք այս կողմի որմասիւններուն մի ուրիշ կերպ դասաւորութիւն տալ, պիտի տեսնենք, որ անկարելի է: Ճարտարապետը միւս ճակատներու նման այստեղ ալ մտից դրան նախապատուութիւն տալով, եթէ անոր երկու քովերը հաւասար հեռաւորութեամբ որմասիւններ դնէր, այն ստեն դէպի արևելք մինչև դուրս ցցուած սենեակին պատը գտնուած միջոցը պիտի լայնանար. հեռաւորութեան նոյն լայնութեան մէջ, որ այժմ մէկ որմասիւն կայ, պէտք էր երկուքի վերածէր, որով այնչափ կընեղնային որմասիւններու մի-

Նոցները, որ նոյն չափով դասաւորութիւն զրան դէպի արեւմուտք եղած մասին վրայ անկարելի էր առանց պատուհաններ փակելու, և կամ որմասիւններու թուական համեմատութիւն յառաջ բերելու: Եթէ բնաւ որմասիւն չի դնէր զրան քովի որմասեան և դուրս ցցուած սենեակի (պատկ. 5, K) թևին մէջ, այն ատեն հանդիպակաց ծածկոյթի անջատ սիւներն ալ նոյն համաչափութիւնը պիտի պահանջէին, որով դուրս ցցուած թևի անկիւնի որմասիւնէն դէպի միւս անջատ սիւնը ձգուելիք աղեղին տրամագիծը չափազանց պիտի լայննար և բարձրութիւնն ալ պիտի անցնէր քան միւս կողմերը. հետեւաբար նաև ծածկոյթի կամարն ալ պիտի բարձրանար քան կտուրի սահմանը: Իսկ եթէ զրան անմիջապէս քովը մի որմասիւն դնելով մինչև սենեակի պատը եղած լայնութեան մէջ ալ մէկ որմասիւն միայն դնել ուզէր ճիշդ մէջտեղը (պատկ. 5, M), պատուհանը պիտի փակուէր:

Միևնոյն անտեղութիւնները և դժուարութիւնները յառաջ կուգան սոյն ճակատի մտից դռնէն դէպի արեւմուտք մնացած մասին վրայ, այնպէս որ ոչ մի որմասիւն չէ կարելի տեղէն շարժել, աւելցընել կամ պակսեցնել գոնէ այսօրուան փոքր ի շատէ ներդաշնակ դասաւորութիւնը առանց զգալի խանգարման ենթարկելու:

Սիւնազարդ ծածկոյթի կամարին բարձրութիւնը անպայման նոյնն է, ինչպէս որ գծուած է պատկ. 11, A A, չէի կարող աւելի բարձր ենթադրել, քանի որ գոյութիւն ունին վերոյիշեալ երկու կամարաքարերը (պատկ. 5, E E. պատկ. 7, A A), հիւսիսային ճակատի երկու որմասեանց խոյակներուն վրայ, և անոնց կորութիւնը արդէն ապացոյց է, որ որմասեանց խոյակէն սկսած էր բոլորուիլ կամարը: Հետեւաբար երբ շէնքի ճակատի որմասիւններն ալ հիւսիսային կողմէն դուրս ցցուած թևի վրայ եղող կիսաբոլորակ խորանի abside-ի երկու կողմի որմասիւններու հետ հաւասար բարձրութեան վրայ են, բնականաբար նոյն բարձրութեան վրայ պիտի բոլորուէր շուրջանակի ծածկոյթի կամարը: Կամարաքարերէն մէկը, որ աւելի խոր, պատին հաւասար դրուած է, նա ևս ցոյց կուտայ, որ ծածկոյթի իսկական կամարը կը բոլորուէր abside-ի կատարը պսակող corniche-ին անմիջապէս վրայէն (պատկ. 9, C, պատկ. 11, C): Միւս կամարաքարը, որ պատէն դուրս որմասեան խոյակի վրայ դրուած է, ցոյց կուտայ, որ կամարին ներքեւէն դուրս շեշտուած աղեղներ կամ գօտիներ կային



Պատկեր 11. Տեկորի սահարի նախկին շէնքի հիւսիսէն հարաւ հասուածը

փոքր abside-ը պսակող corniche-ին հաւասար բարձրութեամբ, որոնց ծայրերը բնական ուղղութեամբ պէտք էր, որ հանգչէին անջատ սիւներու գէպի ներս շեշտուող խոյակներու վրայ (պատկ. 6, BB):

Սիւնագարդ ծածկոյթի (portique) կտուրին թեքութեան աստիճանը, որ այսօրուան երևեցած ուղղութեամբ գծեր եմ, ինծի անյարմար կերևի. որովհետև այդ ձևով շատ կը ծանրաբեռնուին ծածկոյթը շրջապատող անջատ սիւները կամարի և տանիքի արտակարգ թանձրութիւնով: Ինծի հաւանական երևեցաւ այն ուղղութիւնը, որ կէտաշար ցոյց տուեր եմ պատկ. 11-ի վրայ (պատկ. 11, EE). այս ուղղութեամբ ինչպէս կը տեսնուի ներսի կողմէն ալ ոչ մի արգելքի չի հանդիպիր:


Արտաքուստ ծածկոյթը կրող անջատ սիւներու իսկական ձևի մասին հաստատ ոչինչ չեմ կարող ըսել, բայց քանի որ իւրաքանչիւր սիւնի խոյակ երեք զանազան կողմերէ ձգուող աղեղներու ծայրին հանգիստ պիտի տար, բնականաբար պիտի ունենային այն ձևը, որ կը տեսնուին պատկ. 6, յատակագծին մէջ *): Կարելի է կարծել, որ փոխանակ պատկ. 6-ի մէջ երևցածին նման իւրաքանչիւր դուրս ինկած մասերը քառակուսի լինելու, գուցէ կիսաբոլորակ կը վերջանային, ինչպէս պատկ. 12, A B C: Թէև սիւներու այս ձևի ծագումը ընդհանուր ճարտարապետութեան մէջ մինչև եգիպտական հնութեան կը հասնի, բայց հայոց մէջ մտնելու սկիզբը երբ լինելը տակաւին ինծի յայտնի չէ, 11-դ դարէն սկսած մինչև 14-դ դար յաճախ կը գտնենք հայ յիշատակարաններու մէջ:

Մի ուրիշ հարց ինձ համար անլուծելի մնացած է, այն է սիւնագարդ ծածկոյթի անջատ սիւները միացնող աղեղներէն մէկուն ձևը կամ բարձրութեան չափը (պատկ. 6, A արևմտեան կողմ):

Արևմտեան դրան դիմաց գտնուելով այդ աղեղը կրող անջատ սիւները plate-forme-ի արտաքին եզերքին վրայ, բնականաբար հանդիպակաց որմասիւններու համաչափօրէն պիտի զետեղուէին:

Այս ձևով ալ անհամեմատ լայն կը մնայ նոյն սիւնամէջը, քան միւս բոլոր մնացած սիւնամէջերը, ուստի այդ լայնու-

*) Երեբուքի մէջ այս սիւները բոլորովին կտրու են, սակայն նախ այնտեղ կարիք չկար ուրիշ ձևի, քանի որ կամարը, ուղղակի սիւները կապող աղեղներու վրայէն ծնունդ առած է և չունի կամարին ներքէն դուրս շեշտուող աղեղներ, միմիայն երկու աղեղներու միացեալ ոտքերը պիտի նստէին իւրաքանչիւր խոյակի վրայ:




Պատկեր 12. Տեկուրի սանաքին արեւելեան կողմին վրայ կրած երեք սեսակ փոփոխութիւնները

թեան վրայ երկու սիւները միացնելու համար, եթէ ուղիղ կիսաբոլորակ (pleine de cintre) աղեղ մը գծենք, չափէն աւելի բարձրանալով կը մտնէ ծածկոյթի կամարին մէջ: Շատ ենթադրութիւններ կարելի էր ընել այս մէկ աղեղի ձևի մասին, բայց ոչ մէկը վճռական չի կարող համարուիլ. միակ պատշաճ ձևը arc surbaissé կամ anse de panier-ն է. բայց որովհետև այս երկու ձևը հայոց ճարտարապետութեան զարգացման բոլոր դարաշրջաններուն մէջ չեն երևցած և ոչ մի յիշատակարանի վրայ, հետևաբար այս հարցը պիտի մնայ առ այժմ անստոյգ:

Հիւսիսային կողմի դուրս ցցուած թևին վրայի փոքր abside-ին սիւնազարդ ծածկոյթի (portique) հետ միաժամանակ շինուած լինելը հերքող փաստեր գտնելը եթէ դժուար է, այնուամենայնիւ, կասկածանքներէ ալ ազատ չէ, (պատկ. 5, L) (պատկ. 6, C): Նախ որ հակառակ կողմին վրայ չկայ նոյն abside-ը, ինչպէս ունի Երեբունի տաճարը, երկրորդ, եթէ պահ մը չեղած համարինք այդ abside-ը, այն ատեն աւելի համանմանութիւն և ներդաշնակութիւն պիտի ստանանք հարաւային կողմի թևին և սիւներու դասաւորութեան հետ առանց փնասելու հիւսիսային թևի սենեակին ամբողջութեան:

Յատակագծի մէջ կը տեսնենք, որ հիւսիս արևմտեան մասը ունի երկու սիւնամէջ (entre-colonnement) (պատկ. 6, D D) մինչև միջին լայն սիւնամէջերուն հասնելը: Մինչդեռ միւս կողմէն մէկ հատ միայն կայ, (պատկ. 6, E), եթէ անոր րով abside-ի պատին զբաւած տեղին վրայ մէկ հատ ևս աւելցընենք, կամ պատկ. 7, 1. պատկ. 9, K. որմասիւնը անշատ սիւն համարինք, վերջին սիւնամէջին ծայրը կը հասնի հարաւային կողմի դուրս ցցուած թևին պատին հաւասարութեան. որով կունենանք երկու կողմին վրայ ալ պատշաճ համաչափութիւն սիւներու դասաւորութեան: Ես հակուած եմ միանգամայն հաւատալու, որ abside-ը սիւնազարդ ծածկոյթի յաւելումէն յետոյ է կցուած հիւսիսային թևին՝ բացի վերոգրեալ պատճառներէն, նաև արուեստի զարգացման ժամանակազրուութեան տեսակէտով նոյն ժամանակներու հայոց եկեղեցիներու մէջ abside-ը մուտ գտած լինելը կասկածելի լինելու պատճառաւ, որուն մասին պիտի յայտնեմ իմ կարծիքս քիչ յետոյ:

Պարբերաբար կասարուած նորոգութիւններէն և յաւելումներէն շէնքը գտելով կը տեսնենք, որ ներսի կիսաբոլորակ խորանը (abside)



Պատկեր 13. Տեկորի քանարի այժմեան ձևի քառակուսի-արեւելի-արեւմտիս հասնածականը

ևս սիւնազարդ ծածկոյթէն ալ յետոյ է աւելցած, ամենանախնական ձևը եղած է նախ քան սիւնազարդ ծածկոյթի ալ շինուելը, պատկ. 6-ի մէջ երևցած սև յատակագիծը, որուն արևելեան կողմին վրայ ներսէն ուղղանկիւն խորշ մը, իսկ դրսէն ուղղանկիւն ցցուածք մը կը ներկայացնէ (պատկ. 6, F, H.):

Այս սև յատակագիծին վրայ աւելցեր է մի ժամանակ շուրջանանակի սիւնազարդ ծածկոյթը, ամենայն հաւանականութեամբ դարձեալ առանց արևելեան կիսաբոլորակ խորանի (abside), այս ժամանակ միայն երկու կողմի սենեակները աւելնալով և արևելեան կողմէն աւելի դուրս ցցուելով դրսէն ալ ձևացուցեր են ուղղանկիւն մի խորշ (պատկ. 12, E), ինչպէս ներսի կողմէն (պատկ. 6, F): Այս ենթադրութիւնը կը հաստատէ բացի այժմ տեսնուած նշաններէն, նաև արևելեան կողմէն ևս սիւնազարդ ծածկոյթ գտնուելուն ապացոյցները, որուն վրայ խօսեցանք: Եթէ սիւնազարդ ծածկոյթը արևելեան կողմին վրայ գոյութիւն ունեցած ժամանակ խորանն ալ դուրս հանուէր, ո՞չ միայն աններքի տեղութիւններ յառաջ կուգային ծածկելով միանգամայն ազատ plate-forme-ը, այլև կառուցումն ալ անկարելի ըսուելու չափ կը դժուարացնէր:

Տակաւին առիթ պիտի ունենամ abside-ի մասին խօսելու, որ առաւել կամ նուազ չափով պիտի հաստատուի սոյն կարծիքս, սակայն առայժմ ընդհատելով այստեղ ձեռնարկենք պատկ. 6. սև ներկուած յատակագիծի արևելեան կողմէն ստացած ձևի քննութեան:

Հայոց հին եկեղեցիներու կազմութեան օրէնքներուն մէջ կը տեսնուի, որ առանց բացառութեան երկու զանազանութիւն կայ արևելեան կիսաբոլորակ խորաններու գրաւած դիրքին մէջ, կամ արևելեան պատէն բոլորովին ներս են անոնք և կամ բոլորովին դուրս են ամբողջ կիսաբոլորակով: Միջին բարձր տանիքի fronton-ի մակերևոյթն ալ հաւասար է ամբողջ շէնքի մակերևոյթին հետ, եթէ նոյնիսկ խորանը ամբողջովին դուրս ալ հանուած լինի արևելեան պատէն, այսինքն fronton-ը և կողմնակի սենեակներու արևելեան պատերը մի մակերևոյթի վրայ են: Մինչդեռ Տեկորի տաճարին վրայ այս մասը միանգամայն բացառութիւն է, կողմնակի սենեակներու արևելեան պատերը (պատկ. 5, N N) (պատկ. 6, G G) 170 սնթ. աւելի դուրս են քան միջին բարձր fronton-ի մակերևոյթը. (պատկ. 12, F), այնպէս որ եթէ fronton-ի պատին projection-ը վար առնենք

(պատկ. 13, A A A) յատակագիծին մէջ կստանանք կէտաշար նշանակուած տեղը (պատկ. 5, 00), այժմեան խորանին մէջ, որնոր միացընելով շրջապատի սև շրջանակին հետ կստանանք պատկ. 6-ի յատակագիծին մէջ H. դիրքը: Փակագծի մէջ ըսինք, որ ահա այս դիրքին վրայ է, որ սենեակներու արևելեան կողմէն դուրս ցցուած պատերը աւելնալէն յետոյ, կը ձևանայ արտաքին խորշը (պատկ. 12, E), և այժմեան խորանի abside-ը ոչ մի կերպով հարազատ կապ չունի այս ձևերու հետ: Բացի այս, այնպիսի անբնական կերպով պատը պատուուած (պատկ. 6, H) և խորանի abside-ը դուրս հանուած է, որուն նմանը յետնագոյն նորոգութիւններու և փոփոխութիւններու մէջ միայն ներքի է տեսնել շինարարական արհեստի տեսակէտով:

Շինարարական օրինաց բնական կարգով պէտք էր խորանի կամարին վրայ մի պատ բարձրացընել, որպիսին է Տեկորի տաճարին արևելեան միջին fronton-ի պատը, այն ալ անպայման խորանին երկու կողմէն զուգահեռաբար ձգուող պատերը (պատկ. 5, P P.) միացնող կամարին վրայ դրուէր, և այդ պատէն դուրս սկսուէր կազմուել խորանի կիսագմբէթը: Մինչդեռ այժմ կը տեսնենք, որ հակաբնական կերպով fronton-ին պատը դրուած է խորանի գմբէթարթին վրայ (պատկ. 13, B) և ապահովութեան համար ալ արթարթին վրայ (պատկ. 13, B) և ապահովութեան համար ալ արթարթի կարգի թանձրութիւն դրուած է գմբէթարթի այդ մասին: Թէև այս ապօրինի շինութեան պատճառով ընդմիշտ նորոգութիւնն ալ պակաս չէ եղած խորանին մէջ թէ ներսէն և թէ դրսէն: Յաճախ խակի նորոգութիւններ ալ ոչ թէ յառաջ եկած են վրայի fronton-ի պատին ճնշումէն, այլ նախապէս զանուած յատի մը պատառուածքի ներքէն կամար դարձընելու ապօրինի և դժուար գործողութենէն, որովհետև անհնար էր բարերը պատառուած պատին ներքէն այնպէս որովհետև անհնար էր բարերը պատառուած պատին ներքէն այնպէս ինչպէս որ պիտի լինէր արձակ միջոցի մէջ, եթէ ոչ հաստատուն և կանոնաւոր շինուած պատի մը նոյն չափով պատառուելէն ոչ մի ճնշում յառաջ չէր կարող գալ:


Ձեռնարկենք այժմ ներքին մասերու և տանիքներու քննութեան, որոնք ալ իրենց կարգին շատ հետաքրքրական փոփոխութիւններ կըրեր են և այդ փոփոխութիւններն ալ զանազան դարաշրջաններու աւանդութեանց և արուեստի զրոյմը կը կրեն:

Բնականաբար ամեն տեսնող պահ մը պիտի մտածէ, թէ ի՞նչ պատճառաւ յառաջ եկեր են Տեկորի տաճարին ներքին գմբէթակիր մոյթերու (pilier) այսօրուան անկանոն, անհամաչափ, անհաւասար և անճաշակ ձևերը՝ հակառակ ուրիշ մասերու վրայ երեցած ընդհանուր կանոնաւորութեան:

Չափագրութիւնը ցոյց կուտայ, որ ներքին որմասիւնները 570—575 սնթ. համաչափ հեռաւորութեամբ դասաւորուած են հիւսիսային և հարաւային պատերու վրայ: Որմասիւնները միջին հաշուով ունին 70 սնթ. լայնութիւն *): Արեւելեան ու արևմտեան որմասիւններն ունին 112 սնթ. լայնութիւն (պատկ. 5, ՉՉՉՉ և պատկ. 6, $H_1H_1H_1H_1$): Այս բոլոր որմասիւններ օրինական կարգով դէմ դիմաց զետեղուած են ուղիղ գծի վրայ, այսինքն հիւսիսայինները հարաւայիններուն դիմաց, և արեւելեանները արևմտեաններուն դիմաց, ինչպէս կը տեսնուի պատկ. 6-ի մէջ, մէջ տեղը եղած չորս անջատ գմբէթակիր մոյթերն են, որ այս կողմ այն կողմ շեղուած և ծռուած են անճաշակ կերպով, որնոր առանց պատճառի չէր կարող լինել: Հակառակ այդ յառաջացած անկանոնութեան անպայման պէտք էր, որ օրինաւոր կապակցութիւն գտնէինք կանոնաւորապէս շարուած որմասիւներու և անկանոն ձև ստացած մոյթերու (pilier) մէջ, որպէսզի հնարաւոր լինէր յետնագոյն ձևը ստանալէն առաջ նախնական ձևը գտնել: Մի շատ պարզ և բնական միջոց կար այդ գաղտնիքը գտնելու համար, այն է աղեղներով ամեն կողմէն միմեանց հետ կապել բոլոր մոյթերը և որմասիւնները. այսինքն պէտք էր, որ իւրաքանչիւր որմասիւն իրեն դիմացը գտնուող մոյթի հետ աղեղով մը և իւրաքանչիւր մոյթ ալ դարձեալ իրենց դիմացը եղող մոյթերու հետ աղեղներով կապուէին իրենց վրայ ծածկոյթ կամ տանիք մը կրելու համար: Այս կապերը գտնելու համար բաւական էր այսօրուան յատակագծին վրայ, արտաքին պատերու վրայի որմասիւնները իրենց լայնութեան չափով ուղիղ գծերով իրարու միացնել: Ահա այս գծերու (պատկ. 6, I I ...) խաչաձևումով յատակագծի մէջտեղ կստացուի չորս քառակուսի մոյթերու տեղերը այսօրուանէն թէև տար-

*) Չանագան ժամանակներու մէջ համբաւ ձեռքերու կատարած նորոգութիւններով թէ որմասիւններ և թէ որմասիւններու միջոցներ 1-5 սանթիմ աւելցեր և պակսեր են, այդ պատճառով ալ միջին չափը ընտրել եմ յատակագծի պատրաստութեան ժամանակ:

բեր, սակայն բոլորովին օրինական ձևով: Որովհետև այս ստացուած քառակուսիներին ամեն կողմին վրայ հարկաւոր է աւելցնել իւրաքանչիւր հանդիպակաց որմասիւնէն մեկնող աղեղի հանգստեան համար շեշտուած մասերը, այդ մասերն ալ աւելցնելով կստանանք պատկ. 6-ի մէջ սև գոյնով երեցած խաչաձև անջատ մոյթերը: Այս արդիւնքին առջև ամենափոքր կասկած իսկ չի մնար, որ Տեկորի տաճարին ներքին չորս մոյթերուն սկզբնական ձևը և անոնց դասաւորութիւնը այդ էր: Կանոնաւոր խաչաձև մոյթերէն դուրս այսօրուան երեցածները, որոնք թուիս գոյնով ներկուած են, անպայման յետնագոյն յաւելուածներ են:




Պատկեր 14. Տեկորի տաճարի նախնական շէնքի արեւելեան արեւմուտքի հասուածականը

Հին ձևը նորէն զանազանելէն յետոյ, երբ հին ձևին համար հիւսիսէն հարաւ և արևելքէն արևմուտք կտրուած (coupe) և élévation շինենք, կտանանք պատկ. 11 և 14 ձևերը, որոնց վրայ թէ նոր յատակագծի և թէ նոր élévatin-ի coupe-երու համեմատութեամբ կրտսնենք, թէ ինչ տեսակ փոփոխութիւններ է կրեր հին շէնքը այսօրուան ձևը ստանալու համար: Պատկ. 11 և 14-ի մէջ երեցած բոլոր կէտաշար գծերը ցոյց կուտան յետնագոյն յաւելուածները:

Հիւսիսէն հարաւ կտրուածքով կը տեսնուի, որ հինին մէջ ի սկզբբան գոյութիւն ունեցող անշատ մոյթերու միջին բարձր աղեղները մեծ փոփոխութիւն չեն կրած, միայն մի քիչ ցածցած են: Պատկ. 8-ի մէջ C C այժմեան կամարագծերը հինին մէջ համապատասխան են պատկ. 11, G. կէտաշար կամարագծին, որնոր ի հնումն գոյութիւն չունէր. իսկ արևելքէն արևմուտք կտրուածքին վրայ (պատկ. 14) մեծ փոփոխութիւն կայ համեմատելով նոր շինութեան արևելքէն արևմուտք կտրուածքին հետ, (պատկ. 13): Հին շէնքը թէև նորին նման ունեցեր է միջին լայն և կողմնակի նեղ երկու թևեր (nef) և այս թևերուն վրայ որմասիւններ է և անշատ մոյթերու վրայէ ձգւած աղեղներու օժանդակութեամբ արևելքէն դէպի արևմուտք երկարած կամարներով ծածկուած էր, բայց ոչ վրան գմբէթ ունէր և ոչ ալ արտաքուստ հիւսիսային և հարաւային կողմերէն fronton-ներ: Ներքուստ մոյթերը համաչափ հեռաւորութեան վրայ գետեղուած էին որմասիւններու համաչափութեամբ: Արևմտեան և արևելեան պատի որմասիւնները, աւելի լայն էին (112 սնթ.) քան միւս պատերու որմասիւնները այն բնական պատճառաւ, որ երկու զանազան կողմերէ եկող կամարներու ծանրութիւնները իրենցմէ դէպի մոյթերը ձգուող աղեղներուն վրայ պիտի հանգչէին, հետևաբար երկու տարբեր կամարներու ոտքերուն հանդիստ տալու չափ լայնութիւն և անոնց ծանրութիւնը կրելու չափ թանձրութիւն պէտք էր որ ունենային:

Ներքուստ հին շէնքին թևերը (nef) ծածկող կամարներու դիրքին համաձայն արտաքուստ անոնց վրայի ծածքն ալ եղած է երկու կողմէն միջին տանիքէն ցած թեք տանիքներով. (պատկ. 15, AA): Միջին մասը բարձր երկու կողմէն վրայ թեքուած տանիքով (պատկ. 15, BB) և ցած ու բարձր տանիքներուն մէջ ուղղահայեաց բարձրացող երկու կողմի պատերուն վրայ (պատկ. 15, C C C) մանր պատուհաններ կարգաւ շարուած (պատկ. 15, D D D), որոնք



Պատկեր 15. Տեկորի սահարի նախնական տեսքը արտաքուստ

մինչև այսօր պահուած են շէնքին վրայ թէ ներսէն և թէ դրսէն (պատկ 14, A A A և պատկ. 11, F F) թէև վաղուց խցուած են:

Թէ ինչու եղեր են այս փոփոխութիւնները, սա ինքն ըստինքեան մի հարց է, որուն մասին իմ ամենահաւանական տեսութիւնս է, թէ սի օր ցանկութիւն ունեցեր են հնօրեայ շէնքին վրայ տեսէ, թէ սի օր ցանկութիւն ունեցեր են հնօրեայ շէնքին վրայ տեսէ, թէ սի օր ցանկութիւն ունեցեր են հնօրեայ շէնքին վրայ տեսէ, թէ սի օր ցանկութիւն ունեցեր են հնօրեայ շէնքին վրայ տեսէ, թէ սի օր ցանկութիւն ունեցեր են հնօրեայ շէնքին վրայ տեսէ:

մայր տաճարին վրան շինուած կերևի դեռ 5-րդ դարու վերջերին և իբրև նախատիպ ծառայած է յետագայ դարերու բոլոր մեծ ու փոքր եկեղեցիներու տանիքներուն:

Սակայն այդ ցանկութիւնը պէտք էր իրագործել մեծ ինայոգութեամբ, առանց ամբողջովին քանդելու հին շէնքի տանիքը:

Քանդելը պայմանական է եղած, այնչափ միայն, որչափ որ անհրաժեշտ էր գմբէթ մը կազմելու և տանիքը խաչաձևելու համար, ուստի սոյն ծրագիրը իրագործելու համար դիմեր են հետևեալ պարզ միջոցին:

Շէնքի կեդրոնին վրայ իբրև գմբէթի խարխիս պահանջուած հաւասարակողմ քառակուսին ստանալու համար, պէտք էր ներքուստ շէնքին երկայնութեան և լայնութեան վրայ մոյթերու անհաւասար հեռաւորութիւնը հաւասարցնել, որպէսզի անոնցմէ ձգուած հաւասար տրամագծով աղեղները իրարու միացնէին մոյթերը և կազմէին քառակուսի խարխիս կառուցանելի գմբէթին: Ուստի նախապէս հիմ բռնելով լայնութեան վրայ եղող մոյթերու տրուելիք 5,98 սնթ. հեռաւորութիւնը, դէպի երկայնութեանը եղող մոյթերու միջոցները, որ աւելի նեղ էին, լայնացուցեր են իրարու նայող դուրս ցցուած մասերը տաշելով: Պատկ. 6-ի մէջ սև ներկուած մոյթերու վրայ սպիտակ կէտաշար նշանակուած է մոյթերու տաշուածքին չափը*): Իսկ մոյթերու՝ շէնքի լայնութեան կողմի վրայ ունեցած հեռաւորութեան չափը որ 680 էր և պիտի կազմէ գմբէթի տրամագծի իսկական չափը կամ բացուածքը, հաւասարեցուցեր են նոր յաւելումով (պատկ. 6, L L L L): Այս յաւելումը, տուեր է մէկ կողմէն գմբէթի քառակուսի բացուածքի չափը, միւս կողմէ գմբէթը վերցնելու սահմանուած չորս աղեղներու տրամագիծը:

Եւ որովհետև մոյթերու ներսի կողմերը տաշուելով անոնք ըստ բաւականի կը տկարանային, միւս կողմէն նոր կազմուելիք գմբէթակիր աղեղներ որոշ լայնութեամբ իրենց ծայրերուն հանգիստը (retombé) կը պահանջէին, հետևաբար այս երկու բնական պահանջները իրագործելու համար, անհրաժեշտ էին աւելցնել այն

*) Թէև բոլորովին չեն յաջողած հաւասարեցնել, ինչպէս կերևի նշանակուած չափերէն, մէկ կողմը 5,98 է միւս հանդիպակաց կողմը 5,80, տարբերութիւն կայ 18 սնթ. կամ վախեցեր են այն ատեն աւելի տաշելու, կամ յետոյ նորոգութիւններու ժամանակ վերստին թանձրացուցեր են մոյթերը:

մասերը, որոնք կը տեսնուին պատկ. 6 յատակագծի վրայ թուի գոյնով ներկուած, որով ստացած են մոյթերը այսօրուան բոլորովին հակաօրինական և անհամաչափ ձևերը. մոյթերու խարխիսներուն վրայ ալ նոյնպէս տարբեր տեսակներով moulure-ներ և քանդակագործութիւններ կան, որոնք կ'որոշեն իւրաքանչիւրին քանդակման ժամանակի ոճը և նորոգութեան դարաշրջանը: Այս մասին աւելորդ կը սեպեմ աւելի մանրամասն բացատրութիւն տալ, որովհետև հին և նոր յատակագծերու (պատկ. 5, և պատկ. 6) վրայ մասնագիտօրէն կատարուած քննութիւնը պարզ կը ցուցնէ մնացած ամեն ինչ:

Մոյթերու վրայ եղած յաւելուածները երբ նախկինին հետ ձուլուելով բարձրացած են անոր հաւասարութեամբ, կը մնար զանոնք աղեղներով կապել և վրան գմբէթի խարխիսը կազմել: Ուստի պատուեր են միայն հիւսիսէն հարաւ երկնցող միջին թևի տանիքը, առանց ձեռք տալու միւս մասերու տանիքին ու կամարներուն, և աղեղներով նորոգ կապեր են նոր կազմուած մոյթերը միմեանց հետ: Այս նոր փոփոխութեան արդիւնքը եղեր է, արևելքէն արևմուտք շարուած մոյթամէջերուն միջինին (պատկ. 14, B B B) լայննալը և բարձրանալը (պատկ. 14, C), որով ստացուեր է պատկ. 13 հատուածականի ձևը, իսկ միւս կողմին (հիւսիսէն հարաւ) վրայ մոյթերուն իրարու մի քիչ մօտենալուն պատճառաւ (պատկ. 11, H H), նախապէս գոյութիւն ունեցող մեծ աղեղներու տրամագծերը մի քիչ փոքրացեր են (պատկ. 11, G), երկու ծայրերուն վրայ եղած մոյթամէջերը (պատկ. 14, D D), որոնք մոյթերու յաւելումով (պատկ. 14, E E) նեղցեր էին քան նախկին չափը, նոր աղեղներով կապուեր են նմանապէս աւելի ցած քան նախկինը (պատկ. 14, E E և նոյն տեղ կէտաշար աղեղներ): Մոյթերու այս յաւելումէն յառաջ եկեր է հիւսիսային ճակատի դէպի արևմուտք բացուած դրան մեծ մոյթին ետևը բոլորովին խափան դիրք ստանալը (պատկ. 14, F. պատկ. 5), որուն նմանը կը տեսնուի Անիի Գագկաշէն Ս. Գրիգորի մէջ յետնագոյն մոյթերու յաւելման պատճառով:

Ուշադրութեան արժանի է այս փոփոխութիւններով յառաջ եկած համաչափական մի երևոյթ, որնոր յետոյ 7-րդ դարու եկեղեցիներուն մէջ իբրև նախատիպ ծառայած է յատակագծային բաժանումներու:

Ինչպէս կը տեսնենք երկու ծայրերու սիւնամէջերը (պատկ. 14, D D), որ նախապէս հաւասար էին, յետոյ ալ հաւասարաչափ յաւելումով դարձեալ համաչափ մնացին, հետեւաբար իւրաքանչիւր թևի (nef) երկարութեան վրայ ձևացան միջին մեծ և երկու կողմերը հաւասար լայնութեամբ երկու սիւնամէջեր: Նոյն համաչափութիւնը կը տեսնենք օրինակնացած 7-րդ դարուն կանգնուած էջմիածնի մօտ Ս. Գայրիանէի վանքին յատակագծին մէջ (պատկ. 2, D D, E E), որնոր առանց ուէ փոփոխութեան նախնական յատակագծով մեզ հասած կը թուի:

Տանիքի վրայէն եղած փոփոխութեան ձևը և սահմանը կերևի պատկ. 15-ի վրայ կէտաշար գծերով նշանակուած, որ ցոյց կուտայ թէ ամեն գործողութիւն միջին թևի (հիւսիսէն հարաւ) սահմանէն դուրս չէ ելած. միայն ստորին տանիքներու ծածքերը (պատկ. 15, A A) մի քիչ բարձրացած են, որով ծածկուեր են վերին և ստորին տանիքներու մէջտեղ գտնուած պատուհաններու (պատկ. 15, D D D) ստորին մասերը:

Աւելի յետնագոյն ժամանակ ևս ստորին տանիքի թեքութեան աստիճանը աւելցնելու համար միջին տանիքի կողմը եղած ծայրերը աւելի բարձրացուցեր են, այնպէս որ վերին և ստորին տանիքներու մէջ գտնուող հին ուղղահայեաց պատէն, որուն վրայ շարուած են փոքր պատուհաններ (պատկ. 15, D D D), հազիւ մնացեր է 25 սնթ. բարձրութիւն կամ միջոց երկու տանիքներու միջև (պատկ. 1, E E և պատկ. 9, D D):

Վերին և ստորին տանիքներու մէջտեղ, ստորին տանիքի թեքութեան աւելնալովը մասամբ ծածկուած այս պատուհաններն են, որ ցոյց կուտան թէ ներքին կողմի կողմնակի թևերէն որմասիւններուն միացող աղեղները ի հնումն 40—50 սնթ. ցած էին, որովհետև տանիքներու միջև եղած պատուհաններու բարձրութիւնը անփոփոխելի է, քանի որ այժմ ալ կան անոնք (թէև խցուած) կատարով հասած վերին տանիքի պսակին (corniche), իսկ մինչև ներքև բարձրութիւններն են 129 սնթ., հետեւաբար նոյն պատուհաններու ստորին եզերքէն էր, որ (պատկ. 11, J J) պիտի սկսէին թեքուիլ կողմնակի ստորին կտուրները դէպի ցած, այդ ուղղութեամբ ալ ներքին կողմնակի թևերը կապող աղեղները սահման չէին գտներ նոյն բարձրութեամբ տանիքի տակ բոլորուելու:

Ծածքին վրայ կատարուած կտուրներու խաչաձևումով յառաջ եկած է ահամայ մի անհամաչափութիւն, որ ի հիմանէ նորոգ շինուած եկեղեցիներու մէջ նոյն ձևով խաչաձև կտուր շինուելու համար ծրագրուած տանիքներուն մէջ չի պատահիր:

Բոլոր եկեղեցիներու մէջ հիւսիսէն հարաւ և արևելքէն արևմուտք ձգուած խաչաձև տանիքներու լայնութիւնները հաւասար են, որուն բնական հետևանք խաչաձևումի միջին կէտին վրայ կը ստացուի հաւասարակողմ քառակուսի հատուած մը գմբէթի խարխուսին յատուկ և չորս ձակատներուն վրայ չորս հաւասար չափով fronton-ներ տանիքի թեքութեան համաչափ: Տեկորի տաճարին fronton-ները այս բնութիւնը օրէնքին դէմ մեղանշած են. արևելեան և արևմտեան fronton-ներուն լայնութիւնն է 9,38 սնթ. (պատկ. 1, F և պատկ. 9, F), իսկ հիւսիսային և հարաւային fronton-ները 7,08 սնթ. լայնութիւն ունին (պատկ. 1, G₁ և պատկ. 7, H...), որոնք անհամեմատ նեղ են քան միւսները:

Արևելեան և արևմտեան fronton-ներու չափերը նոյնը մնացած են անփոփոխ, ինչ որ էին ի հնումն և կը ներկայացնեն արևելքէն արևմուտք երկընցող միջին տանիքը, որնոր հանգչած էր իսկզբանէ անտի մեծ մոյթերը իրարու և զանոնք հանդիպակաց արևելեան և արևմտեան պատերուն միացնող աղեղներու վրայ (պատկ. 11, K K): Բայց հիւսիսային և հարաւային կողմերուն վրայ նոյն լայնութեամբ թէ տանիք և թէ fronton կազմելու համար առանձին հաստատուն խարխուս էր հարկաւոր նոյնքան լայնութեամբ, որ կը բացակայէր: Նոր շինուելիք fronton-ներուն իբրև խարխուս պիտի ծառայէին հիւսիսային և հարաւային պատերու որմասիւններէն դէպի միջին չորս մոյթերը ձգուող աղեղները (պատ. 5, RRRR և պատկ. 6, I I I I): Բայց որովհետև նոյն աղեղները կրող որմասիւնները իրենց տեղը հաստատուն էին և չափով ալ նեղ, 5,70—5 հեռաւորութեամբ, ուստի այս կողմերու fronton-ներն ալ միւս կողմերու fronton-ներու հաւասարեցնելու համար հարկ պիտի լինէր որմասիւնները իրարմէ հեռացնել, որով հարկ կը լինէր նաև հին տանիքներու և կամարներու մէկ մասն ալ քանդել: Հին որմասիւնները քանդել և փոխարէն նորերը շինել պահանջուած հեռաւորութեան վրայ, արդէն գործը կը ծանրացնէր և որ աւելի անպատշաճ էր, որմասիւններու տեղափոխութեան պատճառաւ հիւսիսային կողմէն այժմ բաց մնացած (դէպի արևմտեան կողմի)


դուռն ալ պիտի փակուէր, որոնց գոյութիւնը պահելու համար, ինչպէս տեսանք վերև տրուած բացատրութիւններէն շատ զոնոշութիւններ եղած էին: Հետևաբար, մէկ կողմանէ հին շինութիւնը ընդհանրապէս պահպանելու, միւս կողմանէ էջմիածնի մայր տաճարով նուիրագործուած գմբէթաւորեալ խաչաձև տանիք մը ունենալու բաղձանքին զոհեր են համաչափութեան և վայելչութեան որոշ պահանջներ, և աչք գոցեր են աւելի կամ նուազ զգալի եղող անկանոնութիւններուն: Այս պատճառով ալ նեղ են այսօր հիւսիսային և հարաւային fronton-ները քան միւս կողմիները:

Այսքանը բաւական չէ Տեկորի տաճարին նախնական ճիշդ ձևը գտնուած համարելու համար: Անորոշութիւն մը կը մնայ դեռ արևելեան կողմին վրայ, որնոր գծուար է լուծել առանց իւր նմաններու ուսումնասիրութեան դիմելու. ինչպէս Մրենի, Երեբունքի, Քասախի և Օձունի տաճարները:

Մրենի տաճարը ներքին կողմէն քննելով կը տեսնուի, որ հիւսիսային և հարաւային պատերու վրայ որմասիւններու համաչափ բասաւորութիւնը պահուելով հանդերձ, գմբէթակիր մոյթերը միևնոյն անկանոնութեան մասնուած են, ինչպէս Տեկորի տաճարին մոյթերը (պատկ. 16). այլևս կասկած չէր մնար, որ այստեղ ալ յետնագոյն փոփոխութիւններ կատարուած պէտք էր որ լինէին: Յատակագծի վրայ միևնոյն փորձնական գործողութիւնները կատարելով, ինչպէս Տեկորի տաճարին յատակագծի վրայ անմիջապէս կը պարզուի թէ Մրենի տաճարը ևս եղեր է մի ժամանակ Տեկորի տաճարի նախնական շինութեան նման, արևելքէն արևմուտք ձգուած միջին լայն և կողմնակի նեղ թևերով (nef) խաչաձև անշատ մոյթերով կամարակապ մի շէնք, առանց գմբէթի (պատկ. 17), որուն նախնական կառուցումէն շատ յետոյ, տուեր են այսօրուան ձևը (պատկ. 16):

Տեկորի տաճարին չափագրութեան մէջ տեսանք, որ ներքին կողմի որմասիւններու միջոցները 5,70—5 էր, սակայն արևելեան կողմէն մինչև կողմնակի սենեակներու դուռը եղած միջոցները (պատկ. 5, S S և պատկ. 6, M M) անսպասելի կերպով լայնցած են աւելի քան 50 սնթ., որով միջոցը կը հասնի 6,20 սանթիմի:

Յիրաւի հայոց հին շինութիւններու մէջ համաչափական անկանոնութիւններու, ծուռութիւններու հանդիպել անսպասելի չէ, և նոյն իսկ Տեկորի տաճարին մէջ այսօր ոչ մի ուղիղ և կանոնաւոր




Պատկեր 16. Մրենի տաճարի այժմեան յատակագիծը:

չափ չէ կարելի գտնել մասնաւորապէս պարբերաբար եղած նորոգութիւններու պատճառաւ, սակայն այս միջոցին մէջ 50 սնթ. տարբերութիւնը շատ մեծ էր և պատահական պատճառներու կամ վարպետներու անզգուշութեան չէր կարելի վերագրել *):

Աւելի հաստատուեցայ համոզմանս վրայ, երբ Մրենի տաճարին մէջ ալ նոյն մասի վրայ գտայ չափերու զգալի տարբերութիւն, (պատկ. 16, A A և պատկ. 17, A A):

Մրենի տաճարին մէջ, ուր աւելի կանոնաւոր պահուած են հին չափերը և աւելի խնամքով կատարուած են յետնագոյն յաւելումները, կը պարտաւորէի գտնել այս յատուկ պատճառէ մը ծագում առած

*) Ես կը կարծեմ, որ հակառակ գաղափարի մեծութեան և արուեստագործութեանց կատարելութեան, հայոց հին շինութիւններու մէջ անկանոնութիւններ յառաջ եկեր են անոնց գործածած չափերուն մանր ստորաբաժանումներ չունենալէն, ինչպէս ֆրանսական սանթիմետրը կամ սաժէնի ԿՕՒ-երը: Նաև լայն միջոցներ չափելու համար հաւաքական չափեր չեն ունեցեր, որպիսին է այսօրուան roulette-ը, այլ չափեր են պարզ լարերով կամ չուաններով, ինչպէս դեռ կը գտնուի Հայաստանի խորքը այդ ձևով դեկավարուող տեղեր մինչև այսօր ալ: Ճշմարիտ է որ հայերը համաչափութիւն չեն սիրած, սակայն մասեր կան շինութեանց մէջ որոնք անհրաժեշտ չափերու միօրինակութիւն կը պահանջեն. այդպիսի տեղերու վրայ ալ յաճախ անկանոնութիւններ տեսնուիլը ինծի առիթ կուտայ մտածելու, որ արուեստագործութեան մէջ այնքան մաքրութիւն և կանոնաւորութիւն սիրող վարպետներ չէին սխալուեր չափերու մէջ, եթէ իրենց ձեռքը գտնուած չափերը զերենք խաբույ յատկութիւններ չունենային: Իսկապէս արհեստաւորը շատ անգամ խաբողը իր ձեռքը գտնուած առանց մանր ստորաբաժանումի չափն է: Անձնական փորձերով տեսեր եմ Ալէքսանդրապոլցի վարպետներու մէջ, որ երբ որմնահիւսը քարտաշին պիտի յանձնարարէ ունէ չափով քար տաշել, չափը կուտայ հետեւեալ ձևով. այսքան վերջոր չէթ մը, ասմիջկա մը, նայիսսա մը: Այս նայիսսա ըստձը, երբեմն 3 միլիմէթրէն աւելի է, ի բաց առեալ այն տարբերութիւնը, որնոր աւելի կը թողուն տեղի վրայ հիւսելու ժամանակ յղկելու համար, այսպիսի անորոշ տարբերութեամբ երբ քանի մը քարեր միկնոյն տեղի համար տաշուին, արդէն շարուելէն յետոյ վերջին քարին վրայ դուրս կուգայ տեղին անպատշաճ չափ: Տեղական այսօրուան գործածական արշինները, եթէ մէթրի ստորաբաժանումները չունեն սակայն դարձեալ բաւական մանր բաժանուած են, երբ ի նկատի առնենք հին արշիններ և էնտաղէներ, որոնք բոլորովին զուրկ էին այդ մանրիկ ստորաբաժանումներէն: Հետեւաբար շատ բնական էր, որ միկնոյն չափով յանձնարարուած քարերը տարբեր չափ պիտի ստանային հին վարպետներուն ձեռքին մէջ և պիտի յառաջ գային այն մանր ու խոշոր անկանոնութիւնները, որոնք կը տեսնուին հին յիշատակարաններու վրայ:



Պատ. 17. Մրենի տաճարի կրած փոփոխութիւնները պարզող յասակագիծ.

տարբերութեան գաղտնիքը: Սակայն ինչ լուծում ալ որ տայի, թէ Տեկորի և թէ Մրենի մէջ եղած այս տարբերութիւններուն, ամեն ինչ ենթադրութիւններու և կարծիքներու վրայ պիտի հիմնուէին, ուստի աւելի համոզիչ եզրակացութեան գալու համար, հարկ էր աւելի դրական օրինակներու դիմել, որոնք բարեբախտաբար պահուած կան տակաւին: Այդ օրինակներն են ի միջի այլոց Երեբունքի և Քասախի տաճարները:


Երեբունքի տաճարը Տեկորի տաճարէն կը տարբերի արևմտեան անկիւններու վրայ երկու սենեակներով, (պատկ. 18, A A): Բայց այս Երեբունքի մէջ փոխանակ չորս անշատ մոյթերու, կը գտնուին վեց անշատ մոյթեր, առանց սակայն գմբէթի և խաչաձևուած տանիքի:

Տեկորի մէջ արևմտեան անկիւններու վրայ սենեակներու բացակայութիւնը իմ կարծիքով կը բացատրուին անոր շինութեան ժամանակակից հայոց դաւանաբանական կամ ծիսական վարդապետութիւններով: Բնականաբար Տեկորի շինութեան ժամանակ այդ արևմտեան սենեակներու պահանջը չէ եղած, ինչպէս որ կար Երեբունքի շինութեան ժամանակ:

Երեբունքի տաճարը եթէ Տեկորի տաճարին ձևին վերածել ուզենք, բաւական է, որ միմիայն արևմտեան անշատ մոյթերը (պատկ. 18, C C) և անոնց հանդիպակաց հիւսիսային և հարաւային որմասիւները միացնող աղեղներուն projection-ը արևմտեան պատ համարինք (պատկ. 18, B B B), չեղած համարելով միւս մնացած արևմտեան մասերը, կստանանք Տեկորի տաճարին ճիշդ ձևը. և զարմանալի մի գուգադիպութեամբ ալ ամբողջ խորութիւնը ենթադրեալ արևմտեան պատէն մինչև խորանին կից սենեակներու պատը, կունենանք 19 մէթրէն քիչ աւելի խորութիւն, որ քանի մը սանթիմով միայն աւելի է Տեկորի տաճարին խորութիւնէն:

Այս արդիւնքը Երեբունքի տաճարին վրայ ստանալէ յետոյ, կամայակամայ կը մնայ համոզուիլ, որ Տեկորի տաճարը ունեցեր է երբեմն ալ պատկ. 6 յատակադիծը, անոր սև և թուխ ներկուած մասերը միասին առնելով և ճիշդ նման Երեբունքի տաճարին, երկու կարգի վրայ վեց անշատ մոյթերով կամարակապ. բացի արևմտեան անկիւններու սենեակներէն, որոնց գոյութեանը ապացոյց ասեմքին չերևիր Տեկորի տաճարի վրայ:

Քասախի եկեղեցին, որ աւելի պարզ նմանութիւն է Երեբունքի



Պատկեր 18. Երեբունքի տաճարի յատակադիծը:

տաճարին, անոր մէջ յաւելուած է միայն արևելեան կողմէն խորանը, մնացեալ բոլոր մասերը նոյնութեամբ կը մնան գրեթէ առանց կարևոր փոփոխութեան, բացի շրջապատող սիւնազարդ ծածկոյթին բանդուելէն: Սիւնազարդ ծածկոյթին որմասիւնները հիւսիսային ճակատին վրայ դեռ պահուած են մինչև այսօր: Այստեղ կողմնակի սենեակներ ալ չկան խորանին երկու կողմը այն ձևով, ինչպէս ունին Տեկորն ու Երեբուքը: Թէև հիւսիսային կողմէն մի ժամանակ մի սենեակ աւելցուցեր են շէնքէն բոլորովին դուրս՝ դռնով միայն հաղորդակցող տաճարի հետ, սակայն այդ սենեակը տաճարին շինութեան հետ բնաւ կապուած չէ, որ կը նշանակէ թէ Քասախի եկեղեցին աւելի նախնական վիճակի մէջ մնացած է քան Տեկորի ու Երեբուքի տաճարները:

Այս եկեղեցիներուն մի ուրիշ օրինակն է Օձունի եկեղեցին, որուն մէջ ներքին ձևը Երեբուքի, Քասախի տաճարներուն նման պահուած լինելէն զատ հիւսիսի կողմէն սիւնազարդ ծածկոյթն ալ դեռ կը մնայ*): Այստեղ ալ արևելեան և արևմտեան կողմերու վրայ միւսներէն տարբերող շեղումներ կը նկատուին, սակայն այդ մասին չեմ կարող առ այժմ կարծիք յայտնել, մինչև որ ինծի յաջողուի մանրախոյզ քննութիւն կատարել տեղին վրայ: Դեռ կան այս տիպի տաճարներ շատ տեղեր, սակայն անոնց ոչ մէկը տակաւին չէ ուսումնասիրուած, ուստի առ այժմ պիտի բաւականանամ յիշածս չորս տաճարներու, այսինքն Երեբուքի, Մլենի, Քասախի և Օձունի տաճարներու հետ համեմատել Տեկորի տաճարը:

Այս տաճարներու վրայէն (այսինքն Տեկորի, Երեբուքի, Քասախի և Մլենի) եթէ պահ մը վերցընենք քրիստոնէական ծիսական խորհրդանշան կազմող մասերը, այսինքն խորան, աւանդատուն, սենեակներ, որոնց յետնագոյն պարբերական յաւելուածներ լինելուն փաստերը պիտի տեսնենք, այն ատեն ամենն ալ կը մնան կէտ առ կէտ իրարու նման շինութիւններ հետեւեալ ձևով. երկայն քառակուսի սրահներ երկու կարգ երեքական մոյթերով միջին լայն և կողմնակի երկու նեղ երեք թևերու բաժնուած, մոյթերը աղեղներով իրարու միացած, թևերու վրայ կամրակապ ծածկուած արևելքէն արևմուտք

*) Միւս կողմերու սիւնազարդ ծածկոյթներն ալ պահուած են եղեր մինչև վերջին տարիները: Քանի մը տարի առաջ քանդեր են նորոգութեան մը առթիւ:

երկարութեանը վրայ. արտաքուստ՝ ստորին ու վերին երկու կողմէն թեքուած տանիքներով: Շատ պարզ է, որ մի ժամանակ ընդհանուր պահանջ է եղեր Հայաստանի մէջ այս ձևով շինութիւններուն և բաւական թուով կանգնուեր են: Յետոյ ալ կամաց կամաց մարդիկ անոնց գոյութիւնէն օգտուելով փոխարկեր են իրարմէ որոշ չափով տարբերուող ձևերու, փոխարկման ժամանակին աւանդութիւններուն և ծիսական պահանջներուն համաձայն:

Թէ ինչ շինութիւններ կարող էին լինել ասոնք հին ժամանակ, այդ մասին դատելէ առաջ պիտի փորձեմ արուեստի զարգացման և փոքր ի շատէ ալ քրիստոնէական աւանդութիւններու տեսակէտով մի ժամանակագրական կարճ տեսութիւն կատարել, յուսալով որ մօտաւորապէս կարելի կը լինի գտնել այս շէնքերու փոփոխութեանց հաւանական ժամանակը:

Վերև կատարուած քննութիւններէն տեսանք որ 7-դ դարէն սկսեալ շինուած տաճարներէն միանգամայն զանազանող յատկութիւններ ունին Տեկորի և իր նման տաճարները, որոնց գլխաւորներն են արևելեան կողմէն դէպի հիւսիս և հարաւ դուրս ցցուած թևերը, այդ թևերուն մէջ եղող նեղ ու երկայն հիւսիսէն հարաւ ձգուած սենեակները, արտաքուստ շէնքը շրջապատող սիւնազարդ ծածկոյթները (portique) և առանց խաչաձև տանիքի ու գմբէթի ծածկոյթները:

Թէև երբեմն պատահեր է, որ զանազան երկիրներու մէջ իրարմէ բոլորովին անկախ, միանման երևոյթներ յառաջ եկեր են, սամէ քրիստոնէական անկախ, միանման երևոյթներ մասնաւորապէս արուեստներու համար կայն քանի որ գիտութիւնը մասնաւորապէս արուեստներու համար փոխանցման օրէնքը ընդունել է, բնականաբար ես ալ կը պարտաւորիմ փոխանցման օրէնքին վրայ հիմնուած գտնել Տեկորի տաճարին և իր նմաններուն յատկազօծային ոճի կամ ձևի ծագման վառարանը:

Հայ արուեստը, եթէ ուշի ուշով քննենք օտար արուեստներու իր վրայ ունեցած ներգործութեան տեսակէտով, անոր մէջ մինչև իսկ ամենահին Ասորա—Քաղդէական արուեստներու զօրեղ գծեր կը գտնենք. ասկէ զատ ոչ նուազ զգալի են Սասանական և Սիրիական արուեստներու հետքերը: Սակայն գտնուեր են դարաշրջաններ, արուեստներու հետքերը: Սակայն գտնուեր են իրենց ներգործող մէջ Յունա—Հռոմէական արուեստներն ալ իրենց ներգործողութեան դրոշմը թողեր են հայ ճարտարապետական արուեստին վրայ: Ինչպէս հին Ասորա—Քաղդէական, Սասանական, նոյնպէս Յունա—Հռոմէական արուեստներու ներգործութիւնները երկարատե

չեն եղած, շուտով ձուլուած են հայ արուեստի որոշ ինքնուրոյն ոճին մէջ և լիովին կերպարանափոխուած են:

Յունա—Հռոմէական արուեստի հայ ճարտարապետութեան վրայ թողած ներգործութեան դրոշմը ես կը տեսնեմ 5-րդ դարէն սկսած դէպի յետ հին դարերը, յետոյ ալ 10 և 11-րդ դարաշրջաններու մէջտեղ: 7-րդ դարու Զուարթնոցը, բացի յատակագծի ոճէն, բոլորովին բացառութիւն է Յունա—Հռոմէական արուեստի վերջին աղօտ շառաւիղները իր վրայ ցոլացնող:

Այս տեսութիւնը գլխաւորաբար գեղարուեստական և շինարարական ճիւղին կը վերաբերի. եկեղեցական յատակագծերու զարգացման մէջ ազդեցութեան բոլորովին տարբեր ընթացք կայ, որուն մասին պիտի յայտնեմ կարծիքս իրեն տեղին:

Կրօնական տեսակէտով դատելով երբ ընդհանուր քրիստոնէութեան նախնական վառարանը Սիրիան և Փոքր Ասիան էր, որոնք նաև եղան հայոց ալ քրիստոնէութեան աղբիւրը, բնականաբար հայոց հնագոյն եկեղեցիներու ձևի ծագումն ալ այն կողմերու մէջ փնտռել կը պարտաւորէի, և յիշաւի այնտեղերն ալ որոշ թուով Տեկորի և նմաններուն հետ ուղիղ համեմատուող եկեղեցիներ կան, որոնց կառուցման ճիշդ թուականները ինծի յայտնի չեն, սակայն ծանօթ մի քանի հեղինակներու ուսմանց կարծիքով պէտք է, որ անոնք կանգնուած լինին 5-րդ դարէն ոչ ուշ:


Իսկ գեղարուեստական ոճի տեսակէտով քննելով կարգ մը հարկեցուցիչ հանգամանքներ՝ զիս դարձեալ կառաջնորդեն դէպի արևմուտք առջևս եղած առեղծուածներուն հաւանական լուծման համար:

Գառնիի Տրդատայ թախտէն սկսած մինչև Զուարթնոց եկեղեցին հայկական շինութիւններու շարք մը կայ, որոնց վրայ աւելի կամ նուազ չափով շատ պարզ է Յունա—Հռոմէական արուեստի ներգործութիւնը հայոց վրայ: Այս շրջանին մէջ կը գտնուի Վարդապատի կաթողիկէն՝ Էջմիածինը, որուն մասին խօսել եմ արդէն առանձին աշխատութիւնով*), իսկ Զուարթնոցի մասին առանձին 1905 թ. «Մուրճի» մայիսամսուան համարին մէջ. թէև կունենանամ դարձեալ հրատարակելի լրացուցիչ տեսութիւններ Զուարթնոցի մասին:

*) Էջմիածնի տաճարը, հնագիտական հետազոտութիւն, 1910. Թիֆլիս, կամ, «О древнѣйшихъ формахъ Эчмиадзинскаго храма». С. Петербургъ, 1909 г.

Տեկորի տաճարին գեղարուեստական մասերն ալ իրենց մէջ բաւական նմոյշներ ունին Յունա—Հռոմէական արուեստի ուղիղ ազդեցութեանց: Ազդեցութիւններու այս շարքը, իբրև զբաւական նոյն դարաշրջաններու մէջ հայ և հռոմէական արուեստներու մօտիկ յարաբերութեան, թողելով նաև Սիրիան և Փոքր Ասիան, առաջնորդեց զիս դէպի Հռոմի հնագոյն եկեղեցիները, Հռոմի մէջ փնտռելու համար Տեկորի տաճարին նախատիպերը:

Դեռ 3-րդ դարուն Հռոմի մէջ շինուիլ սկսած էր Sainte Praxede անունով մի եկեղեցի, որնոր վերջացեր է 9-րդ դարուն: Այս եկեղեցին ի բաց առեալ տարածութեան մեծութիւնը, ընդհանուր ձևով նման է Տեկորի տաճարին, ունի արևելեան կողմի վրայ դէպի հիւսիս և հարաւ երկնցած թևեր¹⁾: Եթէ ստոյգ է այս տաճարի ձևին 3-րդ դարուն պատկանելը, այն ատեն կարելի է առաջին օրինակը համարել այդ ձևին:



Պատկեր. 19. Յասակագիծ Հռոմի նախկին Ս. Պետրոսի:

Ասկէց անմիջապէս յետոյ կուգայ Կոստանդիանոսի շինած նախկին Ս. Պետրոսը Հռոմի մէջ 4-րդ դարուն, որ նոյնպէս Տեկորի տաճարի համանման տիպ ունի իւր դուրս ցցուած թևերով²⁾: Ասոր ալ ձևը յաջորդէ 5-րդ դարուն Ս. Պողոսը³⁾ Հռոմի պարիսպներէն դուրս, կը յաջորդէ 5-րդ դարուն Ս. Պողոսը³⁾ Հռոմի պարիսպներէն դուրս, որոնք թէև դուրս ցցուած թևեր ունի, սակայն հազիւ զգալի չափով դուրս շեշտուած: Սոյն երեք եկեղեցիներու բաղդատութենէն կը տեսնուի, որ Հռոմի մէջ այդ թևերը դուրս հանելու սովորու-

1) Daniel Ramée. Histoire général de l'architecture, T. 2. page 730 fig 260.

2) August Choisy. Histoire de l'architecture T. 2 Paris. page 36. 37. fig 1.B.

fig 2.

3) Daniel Ramée. Histoire générale de l'architecture T. 2. page 726, fig. 257.

Թիւնը 5-րդ դարուն վերջ գտնելու վրայ էր: Արդէն անկէց յետոյ ալ ոչ արեւմտեան և ոչ ալ արեւելեան եկեղեցիներու վրայ չեն երևիր մինչև 11-12-դ դարերու Roman-ական ոճի կազմակերպուելը, որնոր գոթականին (gothique) հետ միացած վերստին ծնունդ տուին նոյն ոճին և անօրինակ շքեղութեան հասաւ այդ ձևը:

Դատելով 5-դ դարուն մէջ Յունա—Հռոմէական արուեստին հայ ճարտարապետութեան և մասնաւորապէս Տեկորի տաճարի շէնքին վրայ ունեցած ազդեցութիւնէն, նաև Տեկորի տաճարի յատակագծային ձևին աւելի հնագոյն օրինակները Հռոմի մէջ գոյութիւն ունենալէն, կողքեմ հաւատալ որ Տեկորի տաճարին յատակագծի ձևն ալ Հռոմէն եկաւ Հայաստան գեղարուեստի եկած ճանապարհով և այդ ճանապարհը հաւանականաբար եղաւ Սիւրիան և Փոքր Ասիան, ուր կը տեսնուին համանման յատակագծով եկեղեցիներ վերագրուած 5-րդ դարաշրջանին:


Մի բան ուշադրութեան արժանի է, թէ ինչու Ste, Praxede և St. Pierre, հանդէպ կողմնակի դուրս ցցուած թևերու, շէնքը շրջապատող սիւնազարդ ծածկոյթներ չունին:

Այդ տաճարներու շուրջը եթէ սիւնազարդ ծածկոյթներու (portique) գոյութեան ապացոյց չունինք, այնու ամենայնիւ մի հեռաւոր ժամանակի մէջ անոնց գոյութիւնը հերքելու ապացոյց ալ չունինք, որովհետև անոնց մասին ոչ մի պատմական նկարագրութիւն չէ հասած մեզ, թէ ի՞նչ փոփոխութիւններէ անցնելով հասան գիտութեան ծանօթ շրջանը:*) Միայն ես պիտի ըսիմ որ Տեկորի տաճարը ուրիշ մասերով անոնց նմանելէն յետոյ, երբէք ընդունելի չէ սիւնազարդ ծածկոյթի (portique) հայկական ստեղծագործութիւն լինելը:

Բազմաթիւ փաստերով գիտենք որ Տաճարներու շուրջը գտնուած սիւնազարդ ծածկոյթը Յունական և Հռոմէական Մեհենական ոճի գեփականութիւն է նախաքրիստոնէական դարերուն մէջ, և իրագործուած գրեթէ բոլոր հեթանոսական մեհեաններու վրայ: Թէ ի՞նչ կերպով այս ոճը հայոց եկեղեցիներու վրայ փոխանցուել է,

*) Daniel. Ramée Histoire générale de l'architecture, page. 726.

Parmi les anciennes Basiliques celle de St. Pierre de Vatican était surtout remarquable, s'il est vrai, que la disposition qu'elle conserva jusqu'à la fin du moyen age était celle que lui donna Constantin.



Պատկեր 20. Մեծն Սարգսի գերեզմանախաչը Սանահնի վանքի մէջ: 57

այդ մասին կարծիք յայտնելէ առաջ թուեմ նախ Տեկորի տաճարին վրայ գտնուած Հռոմէական արուեստի ներգործութիւնները, որոնք հակառակ շատ մը նորոգութիւններու դեռ կը մնան մինչև այժմ:

Հիւսիսային կողմի արտաքին կլոր որմասիւնները (colonne engagée) բացի իրենց խորիսխներէն և խոյակներու ոմանց զարդաքանդակներէն, կէտ առ կէտ Հռոմէական արուեստի համաչափութեան կը պատկանին իրենց համեմատական թանձրութիւններով և բարձրութիւններով: Խոյակներու ոմանց եթէ քանդակները արևելեան են, սակայն անոնց կողովները (panier) Հռոմէական խոյակներու ձևն ու համաչափութիւնը ունին, իսկ ոմանք ալ անյաջող հետևողութիւն են յունական արջմագիլներով (acanth) զարդարուած Կորնթական խոյակներու: Արևելքի մէջ հայ վարպետի մը հրաբղխային աւազաքարի վրայ աշխատութեան, ատկէց աւելի յաջող արդիւնք չէր սպասուէր արդէն:

Արևելեան ճակատի վրայ մինչև այսօր պահուած fronton-ի tympan-ը (պատկ. 1 G) (պատկ. 9 F) Յունական և Հռոմէական արուեստի յատուկ է և անպայման ամենանախնական շինութեան մնացած է թէև մասնակի նորոգութիւններով. բացի Գառնիի մէջ Տրդատայ թախտ անուանուածէն, ոչ մի հայ յիշատակարանի մէջ այլևս չենք գտներ Յունա—Հռոմէական ոճի tympan-ը: Հռոմէական արուեստի ազդեցութեան ենթարկուած էջմիածնի կաթողիկէն ալ դուրս ձգուած կերևի, քանի որ առ այժմ ոչ մի ապացոյց չիկայ անոր երբեմնի գոյութեան:

Ուրեմն երբ որ Տեկորի տաճարին վրայ եղող երեք զանազան ուղղութեամբ ձգուած corniche ներու միջոցաւ կազմուած fronton-ի tympan-ը միակն է ամբողջ հայ յիշատակարաններու մէջ, հետևաբար Տեկորի տաճարին սկզբնական շինութիւնը պատկ. 15 աւելի վաղ պէտք է լինի քան էջմիածնի կաթողիկէն, այսինքն նախ քան 5-րդ դար:

Յեանագոյն նորոգութիւններու ժամանակ երբ աւելցուցեր են հիւսիսային և հարաւային fronton-ները, անոնց ճակատին ալ, իբր հետևողութիւն արևելեան և արևմտեան կողմերու, որպէս թէ tympan-ի ձև տուեր են, սակայն որչափ հեռու է իսկական tympan լինելէ (պատկ. 7 HHH): Արևմտեան ճակատի բարձր դրուած գոյգ

պատուհանները (պատկ. 1, HH և պատկ. 9, QQ) իրենց անհամեմատ խոշորութիւնով հանդերձ դարձեալ tympan-ը ներքևէն փակող corniche-էն ցած դրուած են, մինչդեռ հիւսիսային և հարաւային fronton-ներուն վրայ գոյգ պատուհանները անցեր են tympan-ի հորիզոնական corniche-էն շատ վեր, որով հարկ եղած է tympan-ի հորիզոնական corniche-ը փոխանակ մէկ ուղիղ գծով ծայրէ ի ծայր տանելու, բոլորել նաև պատուհաններու կիսաբոլորակ կատարներու վրայ ալ (պատկ. 8, HHH): Fronton-ներու տակ, այդ համեմատական բարձրութեան վրայ պատուհաններ դնելը արդէն մաքուր հայկական ճաշակ է, և ամեն եկեղեցիներու վրայ գրեթէ անխտիր կը գտնենք:

Չեն պակսիր նաև ուրիշ յատկութիւններ Տեկորի տաճարին վրայ, որոնք զինքը շատ հեռու կը տանին քան 7-րդ դար: Պատուհաններու թէ ներսէն և թէ դրսէն հաւասար լայնութեամբ բացուածքը միայն Տեկորի, Երեւոյնի և Քասախի տաճարներուն յատուկ են իրենց խոշորութիւնով հանդերձ: 7-րդ դարու տաճարներուն մէջ թէև մասամբ պատուհաններու խոշորութիւնը պահուած են, սակայն ներսէն լայն են բացուածքները և դրսէն նեղ, ինչպէս Քասախի, Ալամանի և ուրիշ ժամանակակից եկեղեցիներ:

Պատուհաններու դրսէն նեղընելու սովորութիւնը 7-րդ դարէն սկսեալ անընդհատ շարունակուած է մինչև 14-րդ դարը, և հետագային այնքան չափազանցուած է, որ 10—11-րդ դարերուն անոնց արտաքին բացուածքները յաճախ երեք անգամ աւելի նեղ են քան ներքին բացուածքները, իսկ 13 և 14-րդ դարերուն արտաքուստ ներքին բացուածքները կը գտնենք: Ուրեմն Տեկորի, Եմինչև տասն անգամ նեղցածներ կը գտնենք: Պատուհաններու այդ յատկութիւնը և Քասախի տաճարներու պատուհաններու ունեցող հայ արուեստի ոճին վերագրել: Իբրև բացառութիւն տեսեր եմ միայն Քասախի կաթողիկէին չորս fronton-ներուն ներքև դրուած պատուհանները, որոնք հին ոճի յատկութիւնը պահած են:

Կարկինի մէկ հարուածով գծուած պայտածե (fer à cheval) աղեղները դարձեալ 7-րդ դարէն յառաջ հայոց մէջ գոյութիւն ունեցող մի ոճ է, 7-րդ դարէն սկսեալ այլևս չենք կարող գտնել ոչ մի տեղ: Իբրև հնագոյն դարերու յիշատակ այդ ոճը յետին ժամանակներ գործածուած են նեղ պատուհաններու և զանոնք պակասող cor-

niche-ներու վրայ: 7—11-դ դարերու մէջ թէև կը տեսնուին մոյթեր միացնող մեծ աղեղներուն ծայրերը պայտածևի յատկութեամբ դէպի ներս կորացած՝ խոյակներու վրայ, սակայն կատարները բեկուած են տարակեղրոն երկու աղեղներու միացումով: Միակեղրոն աղեղներու շատ հազուադէպ օրինակներ կան 13—14-դ դարերուն մէջ:




Աշխատութեանս սկիզբէն ինչ յատկութիւններ որ տեսանք հայկական յիշատակարաններու վրայ, հայ ճարտարապետութեան նախ քան 7-դ դարուն յատուկ, և անոնց մի կարևոր մասին Յունա-Հռոմէական արուեստի հետ մօտիկ առնչութիւնը, զիս կը պարտաւորեն համոզուիլ, որ Տեկորի տաճարը կանգնուած է Յունա-Հռոմէական քաղաքական և կրօնական արուեստներու հայ արուեստին վրայ ներգործած շրջանին մէջ, որ շատ վաղ է քան 7-դ դար և հազիւ թէ անցնի 5-դ դարէն ալ այս կողմ: Ամենամախնակաւ շինութեան հաւանական ժամանակը գտնելու համար փորձենք յաւելումներու ժամանակը գտնել և հետզհետէ յառաջ գնալ դէպի ամենաճինը:

Հայոց եկեղեցիներու վրայ գմբէթներու գոյութիւնը կապացուցուի 5-դ դարուն էջմիածնի կաթողիկէով*) և պատմութեան աւանդութեան նայելով, էջմիածնի կաթողիկէին գմբէթը փայտով շինուած էր. այժմ Տեկորի տաճարին գմբէթը կուգայ մեզի բացատրելու թէ ինչո՞ւ համար փայտով էր շինուած և ոչ քարով:

Պատասխանը շատ պարզ է այլևս, որովհետև 5-դ դարուն հայերը թէև ունեցեր են եկեղեցիները գմբէթաւորելու ճաշակը, սակայն քարէ գմբէթ շինելուն կերպը չի գիտնալով կը շինեն եղեր փայտէ գմբէթներ:

Իսկ 7-դ դարուն արդէն փաստացի ապացոյցներ շատ կան, որ թմբուկաւոր, կոնաձև ծածքով քարէ գմբէթ կազմելու արուեստը բաւական մեծ յառաջգիժմութիւն ըրած էր հայոց մէջ: Ուրեմն Տեկորի տաճարին գմբէթի շինութեան ժամանակը պէտք է փնտռել 5-դ և 7-դ դարաշրջաններու մէջտեղ:

*) Յովհ. Կաթ. Մոսկվա 1853, երես 43: Յետ որոյ ապա քակեալ սորա (Կոմիտաս կաթ.) զփայտայարկ գմբէթ սրբոյ կաթողիկէին որ ի վաղարշապատ քաղաքի, շինէ գնա...



Պատկեր 21.

Տեկորի սանախին գմբէթի հասուածականը եւ յասակագիծը նախնական ձևի ծածկոյթով:

Տեկորի տաճարի գմբէթի շինութեան կերպը իր շինարարական ոճով ամենանախնական արուեստագործութիւն կը ներկայացնէ, և բաղդատելով զինքը յետագայ դարերու գմբէթներուն հետ, կը սորվինք թէ հայոց մէջ ինչպէս է ծագեր քարէ գմբէթ շինելու գաղափարը և դարէ ի դար ինչպէս քայլ առ քայլ յառաջ գնացեր և հասեր է մինչև 13—14-դ դարերու կատարելագործեալ գմբէթներուն ամենաչքեղ ձևերուն:

Հայ ճարտարապետութեան մէջ, գմբէթները իրենց ծագումէն մինչև կատարելագործուիլը երեք տեսակ վերածնութիւն ունեցեր են: Որովհետև 5-դ դարուն փայտէ գմբէթներուն ձևերը մեզի անծանօթ են, ուստի առաջին ձևը պիտի համարենք Տեկորի տաճարին գմբէթը: Այս գմբէթի շինութեան ամենանախնական կերպն է, որ խոր հնութիւն կապացուցանէ և ըստ ինքեան շատ հետաքրքրական է հայ արուեստի շինարարական ճիւղին մէջ, որուն մասին արժէ մի քանի մանրամասնութիւններ տալ:


Տաճարի ներքին չորս մոյթերը իրարու միացնող աղեղները կապուելէն յետոյ, երբ անոնց կառուցումէն յառաջ եկած եռանկիւնի բացուածքներն ալ ուղղահայեաց պատով լեցուցեր են աղեղներու բարձրութեան հաւասարութեամբ, բնականօրէն գոյացեր է քառակուսի բացուածք մը, որուն վրայ պիտի բարձրանար գմբէթը:

Եւ որովհետև արտաքուստ թմբուկ կազմելու գաղափարն ալ չէ եղեր տակաւին, այլ միմիայն ցանկացեր են գնդաձև (spherique) ծածկոյթ մը ունենալ նոյն քառակուսի բացուածքին վրայ. ուստի ծածկոյթը կազմելու համար դիմեր են հետևեալ պարզ և միանգամայն բաւական ճարպիկ միջոցին. պիտի աւելցընեմ նաև որ նոյն իսկ նախապէս առանց գիտնալու, թէ սրչափ պիտի բարձրանար և ինչ որոշ ձև պիտի ստանար:

Քառակուսի բացուածքի չորս անկիւններու վրայ շեղակի դրեր են չորս փոքր քարեր (պատկ. 21, A A A A), որով քառակուսին ստացեր է անհաւասար կողմերով ութանկիւնի ձև: Յետոյ սկսեր են աստիճանաբար դէպի կեդրոն հակուած պատեր բարձրացնել (պատկ. 21, BBBB, CCCC, B₁B₁B₁ C₁C₁). բայց միևնոյն ատեն նեղ ճակատներուն պատերը (պատկ. 21, C₁C₁) հետզհետէ լայնացնելով և լայն ճակատներուն պատերը հետզհետէ նեղցնելով (պատկ. 21, B B B B- B₁B₁B₁B₁):

Որպէսզի աստիճանաբար դէպի յառաջ կարկառուող քարերը միմեանց վրայ անհաւասարակշիռ ծանրութիւն աւելցնելով՝ դէպի վար թափելու վտանգը չեզոքացնեն, հետզհետէ նաև շարեր են արտաթափելու վտանգը չեզոքացնեն, հիւսուած ներքին հակուղիղին հետ քին երեսը ուղղահայեաց պատ, հիւսուած ներքին հակուղիղին հետ (պատկ. 21, DD) յառաջակարկառ քարերուն ծանրութիւնները հակադրելու համար, որուն բնական հետևանքն է այսօրուան արտաքուստ խորանարդաձև գմբէթը: Այս գործողութիւնը շարունակելով որոշ բարձրութեան մը վրայ ութ անհաւասար կողմերը ինքնին հաւասարուելով, կեդրոնին վրայ կազմուեր է մի հաւասարակողմ ութանկիւնի (պատկ. 21 F F.....): Այս բոլորը նկատելի է այսօր կէտ առ կէտ Տեկորի տաճարի գմբէթին վրայ:

Կը կարծեմ որ ութանկիւնի բացուածքը պատրաստուելէն յետոյ, բոլորովին ծածկելու գործողութիւնն ալ նոյն ոճով շարու-



Պատկեր 22. 7-րդ դարէն մինչև 10-դ դարու գմբէթները ներսի կողմէն:


նակուած էր (պատկ. 21, G G): Որովհետև քանի որ բոլորակի մը խարիսի և գմբէթարթի կաղապարներ պատրաստելու արուեստը դեռ անծանօթ էր հայոց մէջ, հետևաբար չէ կարելի ենթադրել որ այսօրուան տեսնուած ամենայն կանոնաւորութեամբ կաղապարուած գդակը (calotte) այն ժամանակուան շինուածը լինէր: Այս գործողութեան բնական ընթացքին հետևելով, արտաբուստ կազմուած խորանարդին վրայ (պատկ. 21, H H) դժուար է երևակայել մի ուրիշ ձև քան (պատկ. 21, K) բրգաձև ծածկոյթը. միայն թերևս աւելի մի քիչ սուր և բարձր էր:

Այս օրուան տեսնուած թէ ի ներքուստ գդակը (calotte)-ը և թէ արտաբուստ բազմակուսի կոնաձևը ամենայն հաւանականութեամբ 10-դ դարուն շինուած գործեր են:

Թէև 7-դ դարուն գմբէթներու շինութեան կերպը ըստ բաւականի զարգացած էր հայոց մէջ, սակայն անոնց մէջէն դեռ չեն անհետացած Տեկորի տաճարին գմբէթի նախնականութիւնը յիշեցնող գծերը:

Տեկորի տաճարին գմբէթին մէջ բարձրէն կազմուած ութանկիւնի բացուածքը 7-դ դարուն իշած է ցած և պատրաստուած է ուղղակի չորս մոյթերը միացնող աղեղներու բարձրութեան վրայ (պատկ. 22, A A): Անկիւններու վրայ շեղակի դրուած բարերը այլևս այնքան խոշոր են, նաև գմբէթարթ ձևով ներքին ալ փորուած ու քանդակազարդուած (պատկ. 22, B B B), որոնց զետեղումով միանգամայն կազմուեր է հաւասարակողմ ութանկիւնի բացուածքը: Բայց որովհետև կազմուած անկիւնները տակաւին որոշ չափով սուր էին, և վրայէն դարձուած բոլորակ պսակը (corniche) աւելի պիտի կախուէր անկիւններու դատարկութեան վրայ, ուստի անկիւններու սրութիւնը բթացնելու և բոլորակ շրջանակի մօտեցնելու համար, կազմուած աղեղիկներու թևերուն վրայ, անոնց հաւասար բարձրութեամբ զետեղեր են ուրիշ ութը փոքրիկ աղեղներ ևս (պատկ. 22, C C), որով անկիւնները բազմապատկուելով՝ բացուածքը մօտեցեր է բոլորակ շրջանակի մը, որուն վրայ այլևս հեշտ էր պսակը բոլորել և թմբուկը բարձրացնել:

Թմբուկը բարձրացնելէն յետոյ, 7-դ դարուն վրան ծածկուելիք calotte-ը ըստ օրինի կաղապարի վրայ ձուլելու կերպը ծանօթ լինելէն զատ, գիտէին նաև անոր մէջը բարձրաքանդակ զարդարել



Պատկեր 23. 10-դ դարէն սկստալ գմբէթները ներսի կողմէն

ինչպէս Հռիփսիմէի վանքին և Մրենի տաճարին գմբէթները: 7-դ դարէն յետոյ շինուած գմբէթներուն մէջ այս զարդաքանդակները չեն երևիր, հաւանականաբար կարելի է որ պատկերներ նկարելու սովորութիւնը մտնելով՝ վերջ տուաւ քանդակազարդութեան:

Գմբէթներ կազմելու այս ոճը տևած է մինչև 10-դ դարուն վերջերը. Մարմաշէնի եկեղեցին տակաւին այս ձևով գմբէթ ունի, նմանապէս Կարսի Առաքելոց եկեղեցին. կան և ուրիշներ, սակայն 10-դ դարուն ասոնց մէջ սկսած են երևնալ voûte pendentif-ներ (պատկ. 23, A) և հետզհետէ վերջ դրած նախկին չարատանջ և աննպատակայարմար աշխատութիւններուն: Վերջին ոճը հնարաւորութիւն տուած է նաև արտաքին կողմով ալ զեղեցիկ և վայելուչ ճոխութեամբ գմբէթներ կազմելու:


Շատ հետաքրքրական է այս տեսակէտով քննել Հոռոմոսի աւանդաբար Ս. Մինաս անուանուած եկեղեցին, որուն գմբէթը ունի լանդաբար Ս. Մինաս անուանուած շեղակի փոքրիկ կամարաթէ հին ձևով անկիւններու վրայ դրուած շեղակի փոքրիկ կամարաթէ ձև քարեր և թէ անոնց վրայ շարունակուած լինչև բոլորակ COR-

niche-ը voûte pendentif-ներ: Այս եկեղեցիին գմբեթին մէջ պարզ կերևայ հին ոճին վրայ նոր ոճի սկզբնական ներգործութեան բնորոշ գծերը. և որովհետև կարծեցեալ Ս. Մինասը կանգնուած է 10-դ դարուն, հետևաբար նաև 10-դ դարն էր voûte pendentif-ներու կիրառութեան սկիզբը հայ ճարտարապետութեան մէջ:

Ինչպէս ներքուստ, այնպէս ալ արտաքուստ իրենց կառուցման դարաշրջաններու յատուկ ձևեր ունեցեր են հայկական եկեղեցիներու գմբեթները: Տեկորի տաճարին վրայ կը տեսնենք, որ ցածրիկ ութ անկիւնի թմբուկի մը ներքև բառակուսի կամ խորանարդ պատուանդան մը կայ տանիքի կատարէն 2,80 մնթ. բարձր (պատկ. 24, A A) և թմբուկի բարձրութիւնը հազիւ հասնի 50 մնթ.-ի: Բազարանի մէջ 7-դ դարու սկիզբին կանգնուող ժողովրդական աւանդութեամբ Ս. Թէոդորոս անուանուած եկեղեցիի վրայ պատուանդանը ցած իջած է և տանիքի կատարէն մինչև թմբուկը 1,30 մնթ. է (պատկ. 25, A A): Հռիփսիմէի վանքի գմբեթին պատուանդանը աւելի մօտեցած է տանիքի կատարին, թէև այսօր մի քիչ աղաւաղուած, սակայն որոշ չափով յայտնի է, որ 50 մնթ.-էն ոչ պակաս բարձր էր պատուանդանը տանիքի կատարէն:

Մրենի տաճարին վրայ, եթէ երբէք փոփոխութեան չէ ենթարկուած, տանիքի կատարին հաւասար է գմբեթին պատուանդանը (պատկ. 26, A A):

Սկսեալ 10-դ դարէն գմբեթի խորանորդ պատուանդանները ցած իջած են գրեթէ վերին տանիքի բարձրութեան կէսին չափ (պատկ. 27, A), ուր շնորհիւ voûte pendentif-ի շատ մեծ դիւրութեամբ բոլորակ խարիսխ կազմուելէն յետոյ, փոխանակ քառակուսիի, պատուանդանին մէկ մասն ալ բոլորակ ձևով շարունակուած է մինչև տանիքի կատարին հաւասար՝ իբրև խարիսխ գմբեթի, և նոյն նեղ առանձին moulure-ով մը շրջապատուելէն յետոյ, սկսած են վրայի գմբեթի թմբուկը բարձրացնել բոլորովին բոլորակ կամ բազմանկիւնի ձևով. մինչդեռ նախկին դարերու գմբեթներ իրենց ներքին կազմութեան պատճառաւ առհասարակ ութանկիւնի եղած են: Եթէ Հռիփսիմէի վանքին գմբեթը տասն և վեց անկիւնանի շինուելը հնարաւոր եղած է, այն ալ շնորհիւ իւր յատակագծային ձևին է, որն որ որոշ յարմարութիւններ ինքնին կուտար այդ բազմանկիւնիին: Ուրեմն հայկական եկեղեցիներու գմբեթներու համեմատութիւ-



Պատկեր 24. Տեկորի տաճարի գմբեթը

նով ալ Տեկորի տաճարին վրայ եղած յաւելումներու՝ ընդ նմին նաև գմբեթի կառուցման ժամանակը 7-դ դարէն առաջ դէպի 5-դ դարու ժամանակամիջոցին մէջ պէտք է փնտռել:

Սիւնազարդ ծածկոյթներու (portique) տեսակէտով ալ բոլորովին նոյն բանը կարելի է ըսել: Մրենի տաճարը ինչպէս տեսանք վերև, որ ուրիշ կամսարականի մը ձեռքով փոխարկուած է այսօրուան ձևին 7-դ դարուն մէջ, և սիւնազարդ ծածկոյթի հետքը ամենևին չերևեր անոր շուրջը, կը նշանակէ թէ նոյն դարուն արդէն վերջ գտած էր այդ սովորութիւնը: Նմանապէս եթէ որևէ կերպով հաստատուի, որ եթէ Տեկորի տաճարին կէսէն բաշուած corniche-ին նման էջմիածնի կաթողիկէին կէսէն շրջապատուած corniche-ն ալ քանդուած շուրջանակի սիւնազարդ ծածկոյթի մը (portique) նետեանք է, դարձեալ աւելորդ ապացոյց կը լինի սիւնազարդ ծածկոյթներու 6-դ դարուն մէջ գոյութեան և 7-դ դարուն սովորական լինելէ դադրելուն, որովհետև էջմիածնի տաճարին բարձրութեան կէսէն շրջապատուած corniche-ը 7-դ դարուն շինուած է:


Քասախի եկեղեցիին արևմտեան և հարաւային կողմերուն վրայ բազմաթիւ նորոգութիւններով, շուրջանակի սիւնաղարդ ծածկոյթի (portique) հետքը միանգամայն կորած է. միայն հիւսիսային կողմին վրայ դեռ կը մնան որմասիւններ իբր ապացոյց վաղեմի գոյութեան: Թէ երբ քանդուեր և վերցուեր է այնտեղ սիւնաղարդ ծածկոյթը, առ այժմ դժուար է ըսել առանց երկար ուսումնասիրելու և շուրջը հարկաւոր եղած պեղումները կատարելու: Երերուքի տաճարին նման, բացառաբար պահուած է մինչև այսօր Օձունի եկեղեցիի շրջապատի սիւնաղարդ ծածկոյթը. ինչպէս կերևի, այդ եկեղեցին կամ երկար ժամանակ նորոգութեան պէտք չէ ունեցեր, և կամ երերուքի տաճարին նման վաղուց անուշադրութեան է մատնուած, մեծամեծ փոփոխութիւններ կատարող մարդ չէ գտնուեր իր միջավայրի մէջ:

Այժմ փորձենք հետազօտել, թէ ինչպէս կարող էին սովորութիւն դառնալ շուրջանակի սիւնաղարդ ծածկոյթները հայոց եկեղեցիներու մէջ և ինչ նպատակով:

Այս հետազօտութեան մէջ ըստ բաւականի հաւանական եզրակացութեան հասնելու համար պէտք է հայոց հեթանոսութենէ դարձի ժամանակին ունեցած ծէսերն ու աւանդութիւնները փոքր ի շատէ գիտնալ, որոնց հետ սիրտ կապուած են եկեղեցիներու ալ յատակագծային ձևերը:

Ընդհանուր քրիստոնէութեան մէջ, առաջին դարուն ծիսական բարդ արարողութիւններ չի գտնուելուն պատճառաւ, տաճարներն ալ որոշ ձև չէին պահանջեր, աղօթատեղիին ձևը նշանակութիւն չունէր, հաւատացեալները իրենք էին տաճար Աստուծոյ: Աղօթատեղիի համար բաւական էր մի սրահ, որուն մէջ հաւաքուած կատարէին հաց կտրելու գլխաւոր արարողութիւնը և շատ համեստ չափով ալ աղօթք կամ սաղմոսերգութիւն: Այս հաւաքումը աւելի ընտանեկան կամ եղբայրական խմբակցութեան երևոյթը ունէր:

Մինչև 4-դ դար անսպասելի կերպով բազմացող քրիստոնեայ հասարակութիւններ թէև ունեցան վարչական ուրոյն կազմակերպութիւններ, ծիսակատարութեան օրէնքներ, որոնք առաջին դարու պարզութենէն դուրս եկած էին, սակայն պարբերաբար խստացող հալածանքներու պատճառով ոչ հաստատուն եկեղեցիներ հիմնուած էին և ոչ ալ եկեղեցիներու ձևի համար մշակուած որոշ հա-



Պատկեր 25. Բագարանի (Ս. Թէոդորոս?) կաթողիկէին գմբէթը 7-դ դարու սկզբին:

մանմանութիւն: Այդ ձևը կամ համանմանութիւնը պիտի տար արևմտեան կայսրութեան մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակուիլը:

Կոստանդիանոս կայսեր ինքզինքը քրիստոնէութեան պաշտպան յայտարարելը ասպարէզ բացաւ ոչ միայն հազարաւոր եկեղեցիներու միաժամանակ հիմնարկուելուն, այլև եկեղեցիներու ձևի մէջ ալ փոքր ի շատէ համանմանութիւն տեսնուելուն:

Քրիստոնէական ճարտարապետութիւնը ուսումնասիրող գիտնականներ կը հաւաստեն թէ, մինչև 4-դ դարու վերջն ալ ընդհանուր քրիստոնէից եկեղեցիներու յատակագծային ձևի մէջ համանմանութիւն չի լինելէն զատ, մինչև 7-դ դար ալ տակաւին իրարանմանութիւն չի լինելէն զատ, մինչև 7-դ դար ալ տակաւին իրարանման վարդապետութիւններ և ըստ հաճոյս Ս. Գրքի տրուած մեկնութիւններ արգելք եղած էին միշտ եկեղեցիներու միօրինակ ձև և միօրինակ ծիսակատարութիւն ստեղծուելուն:

Այս անօրինակ խառնակութիւնը սակայն արգելք չէր քրիստոնէութեան ազատութեան օրերուն մէջ, անթիւ անհամար եկեղեցիներու հիմնարկութեան: Պահանջը շատ մեծ էր և պէտքը անմիջական. բաւական չէին նախկին փոքր ու անշուք սրահ—աղօթատեղիները, բաւական չեղան նաև հետզհետէ նոր կանգնուել սկսող մեծ ու փոքր եկեղեցիները, այս անդիմադրելի ընդհանուր պահանջին գոհացում տալու համար Կոստանդիանոս կայսրը քրիստոնէից տրամադրութեան տակ զբաւ բոլոր նախկին հեթանոսական մեհեանները և Basilique ըսուած շինութիւնները:¹⁾

Հեթանոսական շինութիւնները անխտիր ընդունուեցան և սրբագործուեցան նոր կրօնի անունով: Միայն Basilique ըսուած շէնքերու մի բնորոշ մասը, այսինքն կիսաբոլորակ ձիւղձիկը հետզհետէ ընդունելի և պատշաճ համարուեցաւ աւելացնել ամեն ձևի եկեղեցիներու մէջ: Basilique-ի կիսաբոլորակ abside-ը, որ ի սկզբան հանրային մեծ խնդիրներ վճռելու յատուկ ժողովականներու նախագահին—թագաւորին ու խորհրդականաց յատուկ էր, տաճարի մէջ, երկնաւոր թագաւորաց թագաւորի երկրաւոր գահուն յատկացուեցաւ:²⁾


Ընդհանուր քրիստոնէական եկեղեցիներու յատակագծային ոճին զարգացման այս ուղղութիւնը հայոց նախնական եկեղեցիի մէջ բաւական տարբեր է:

¹⁾ Basilique-ներու քրիստոնէից տրամադրութեան տակ զբոսելու ճիշտ թուականը յայտնի չէ, յամենայն դէպս 312 էն առաջ չէ. իսկ երբ ի նկատի առնենք, որ Կոստանդիանոս կայսրը 312-ին Միլանի հրովարտակով լիակատար հաւասար իրաւունքներ կուտար ինչպէս քրիստոնէաներու, նոյնպէս հեթանոս կրօնը դաւանողներուն, հետեւաբար ամենևին հաւանական չէր, որ այս թուականին հեթանոս պաշտաման յատուկ շէնքեր կարելի լինէր համարձակ յանձնել քրիստոնէաներուն ձեռքը: Այդ պէտք էր որ լինէր 324 թուականին, յորում Կոստանդիանոս յաղթահարած բոլոր թշնամիները ոչ միայն բացարձակապէս քրիստոնէից կողմն անցնելով պետական կրօն հռչակեց քրիստոնէութիւնը այլև խուլ հալածանք հանց հեթանոսութեան դէմ: Հետեւաբար արևմուտքի մէջ մեհեաններ և Basilique-ներ սրբագործուելու սկզբնաւորութիւնը մօտաւորապէս 25 տարի յետոյ պէտք է համարել քան հայոց մեհեաններու փոխարկումը Տրդատի և Ս. Գրիգորի ձեռքով:

²⁾ Դատելով ի հնուն Յոյն և Լատին կղերականներու եկեղեցւոյ խորանին մէջ բռնած դիրքէն, abside-ի պատշաճութիւնը ընդունուած կը կարծեմ իբրև հետևողութիւն Յոն. Յայտ. Դ. և Ե. գլուխներու նկարագրութեան:

Միջագետքի և Սիւրիայի ճանապարհով քրիստոնէութիւնը աւելի շուտ մտաւ Հայաստան, քան հռոմէական կայսրութեան ուրիշ երկիրները. և համեմատաբար աւելի կարճ ժամանակի մէջ այնպիսի ուժեղ դիրք և ազդեցութիւն ձեռք բերած էր, որուն առջև հայոց միահեծան թագաւոր Տրդատը 15—20 տարի առաջ ստիպուեցաւ խոնարհիլ և քրիստոնէութեան դրօշակին տակ վնասուել Հայաստան աշխարհի բախան ու խաղաղութիւնը:

Հայոց Լուսաւորիչ Ս. Գրիգոր պետական և նախարարական գանձին վրայ ըստ հաճոյս իշխելէն զատ, զինուորական բանակներն ալ իր բացարձակ հրամանին տակ դրուեցան¹⁾: Մէկ կողմանէ



Պատկեր 26. Մրենի սանարին գմբէթը 7-դ դարուն:

¹⁾ Ազաթանգեղոս, Տփիսիս 1909, երես 403: Առնոյր այնուհետև խորհուրդ հաւանութեան ընդ թագաւորին և ընդ իշխանսն, նախարարօքն և զօրօքն հանդերձ՝ վասն խաղաղութեան հասարակաց, փակել, կործանել, բաւաւալ զգայթակղութիւնսն ի միջոյ, ի բաց կորուսանել....:


զինու գորութեամբ անխնայ քանդեց ու աւերեց նոր կրօնին անսաստող հեթանոս հայութեան բոյները, յափշտակեց անոնց ձեռքէն բոլոր մեհեանները և փոխարկեց քրիստոնէական տաճարներու ¹⁾, միւս կողմանէ ալ սկսեց նոր եկեղեցիներ, մատուռներ ու վկայարաններ կանգնել երկրին ամեն կողմը:

Ազաթանգեղոսի տուած տեղեկութիւններէն յայտնի կերևի, որ Տրդատի հեթանոսութեան օրերուն քրիստոնէայ հայութիւնը այնքան խիստ հալածանքի չէր ենթարկուած, որչափ հեթանոս հայութիւնը Տրդատի քրիստոնէութիւնը ընդունելէն անմիջապէս յետոյ: Տրդատ և Ս. Գրիգոր ոչ մի միջոցի առաջև կանգ չառին կարճ ժամանակի մէջ «Բառնալ զգայթակղութիւնն ի միջոյ, ի քաց կորուսանել...»: Ազազայ պատմութիւնն ալ ցոյց կուտայ, որ բաւական մեծ յաջողութիւն ունեցան իրենց նպատակին հասնելու. երկու-երեք տարուան մէջ ճնշեցին ամեն ընդդիմութիւն և կամայ թէ ակամայ հնազանդեցնելով բոլոր հակառակորդներ, խաղաղեցուցին երկիրը: Հետևաբար մինչև արևմտեան կայսրութեան մէջ քրիստոնէութեան հալածանքէ ազատուելով պետական կրօն յայտարարուելը, որ անուագն տասն և հինգէն քսան տարի անցեր էր, Հայաստան բոլոր ներքին շփոթութիւններէն ու խառնակութիւններէն հանդարտած, խաղաղ կերպով զարգացնելու վրայ էր իր անկախ եկեղեցական կազմակերպութիւնը. վաղուց սրբագործուած էին մեհեաններ, կանգնուած էին նորակառույց եկեղեցիներ, և մշակուած ինքնուրոյն յատակագծային ձև հայկական եկեղեցիներու:

Արդ այժմ ինքնին հարց կը ծագի թէ, երբ՝ բացի Հայաստանէն ոչ մի տեղ քրիստոնէութիւնը պարբերական հալածանքէ ազատ չէր, և չունէին հաստատուն հիմունքներ, երբ յունական մեհեաններ ու Basilique-ներ սրբագործուած չէին, նաև Հայաստա-

¹⁾ Ազաթանգեղոս, Տիբիս 1909. երես 439: Սոյնպէս և ի տեղիս մեհեանացն զոր կործանեաց յառաջագոյն, սոյնպէս և յԱրտաշատ քաղաքի և յամենայն տեղիս, յաշխարհս և ի գաւառս առ հասարակ, սոյն օրինակ գործեաց (այսինքն եկեղեցիներ շինեց) և բազմացոյց զեկեղեցիս:

Փաւ. Բիւզ. Ս. Պետերբուրգ 1883. երես 7: Քանզի այսպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետն հայոց, հանդերձ թագաւորօրն և մեծամեծօրն, նախարարօրն և աշխարհախումբ բազմութեամբ պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կոռցն և ապա յանուն աստուածութեան սրբեան և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեր:



Պատկեր 27. Անիի կաթողիկէ մայր եկեղեցիի գմբէթը 11-դ դարու սկիզբին:

նի մէջ Basilique ըսուած շէնքեր բացարձակապէս գոյութիւն չունէին, այն ժամանակ ինչ ձև կարող էին ունենալ Հայաստանի մէջ անկախ կերպով զարգացող հայկական եկեղեցիները:

Անշուշտ պիտի կարծուի որ նախ քան Ս. Գրիգորի միջոցաւ ընդհանուր դարձը, երբ հայոց քրիստոնէութեան վառարանը Ասորիքն ու Միջագետքն էր, հետևաբար պէտք է որ հայոց եկեղեցիները, այդ երկիրներու եկեղեցիներուն նմանէին. բայց մենք մինչև այսօր ոչ մի օրինակ չունինք նախ քան 4-դ դար Ասորիքի և Միջագետքի եկեղեցիներու, որոնք կարելի լինէին համեմատել մեր սորիքի ու Միջագետքի մէջ ալ չէր կարող լինել, քանի որ դեռ հնագոյն եկեղեցիներու հետ: Բացի այդ, ինչպէս վերև տեսանք, Ասորիքի ու Միջագետքի մէջ ալ չէր կարող լինել, քանի որ դեռ կը շարունակուէր հոմէական կայսրութեան հալածանքը և թոյլաւորուած չէր մեծամեծ եկեղեցիներ կանգնել նոյն նախնայներուն տրուած չէր մեծամեծ եկեղեցիներ:

մէջ: Ուստի հայոց եկեղեցիներու սկզբնական ձևի ծրագրումը դարձեալ պիտի փնտռենք Հայաստանի մէջ գտնուած կանգուն ու կիսականգուն յիշատակարաններուն մէջ, որոնք փոքր ի շատէ համեմատուելով պատմութեան հետ, ըստ բաւականի հաւանական եզրակացութեան կառաջնորդեն մեզ:

Ինչ եռանդով որ Լուսաւորիչ գործի ձեռնարկած էր գալթակղովթիւնը մէջտեղէն վերցնելու և հեթանոսութիւնը միանգամայն ջնջելու համար, այդ արդէն բաւական ապացոյց կարող է լինել մեզ, որ նոյնքան եռանդով ալ պէտք էր շուտով եկեղեցիներ պատրաստէր նորահաւատ հայերու համար: Բնականաբար հեշտ չէր Հայաստանի ամեն կողմը քանի մը տարուան մէջ մեծամեծ տաճարներ կանգնել ժողովրդի անհրաժեշտ հոգևոր պահանջին գոհացում տալու համար, ամենէն կարճ ճանապարհը հայոց մեհեանները քրիստոնէական տաճարներու փոխարկելն էր: Այդպէս ալ եղաւ, բազմաթիւ մեհեանները բռնի ոյժով եկեղեցիներու փոխարկուեցան, մինչև որ նորերն ալ հասան. հետևաբար հայոց նախնական եկեղեցիներու վրայ ամենէն աւելի հայ-հեթանոսական մեհեաններու դրոշմը պէտք է փնտռել և քննել, թէ անոնք կարող էին բաւականութիւն տալ նոր քրիստոնէական ծէսերուն: Սակայն այս մեհեանական դրոշմը ճանչնալու համար պէտք է նախ գիտենալ, թէ ի՞նչ ձև ունէին հայոց մեհեանները, որ բոլորովին մեզ համար անստոյգ չեն կարող համարուել յենուելով հաւանական ենթադրութիւններու և պատմական վկայութիւններու վրայ:

Հայերը որչափ բարեպաշտ եղան քրիստոնէական կրօնի մէջ, նոյնչափ բարեպաշտ էին հեթանոս կրօնին մէջ, նամանաւանդ երբ հեթանոսութիւնը երկար դարերէ ի վեր սրբագործուած իրենց նախնեաց կրօնն էր, և այդ կրօնի պաշտպանն էին շարք մը միահեծան թագաւորներ մինչև անոնց վերջինը՝ մեծն Տրդատ, անկախարելի էր որ Հայաստանի ամեն կողմը, քաղաք ու աւան, բազմաթիւ մեհեաններով ծածկուած չի լինէին: Ո՛ւր մնացին այդ բազմաթիւ մեհեանները, որոնք 4-դ դարէն մինչև 5-դ դար չի հասան: Արդեօք կարելի է հաւատալ, որ մոզական գաւազանի մէկ հարուածով վայրկենապէս ոչնչացան ամենն ալ: Ի հարկէ անկարելի էր, անշուշտ անոնք երկար ատեն իրենց գոյութիւնը պահեցին և անոնցմէ ոմանք ալ մինչև մեր օրերը հասան քրիստոնէութիւնով սրբագործուած նոր տարազով մը:

Հայոց հեթանոսական կրօնը թէև արևելեան դիցապաշտութեամբ իւրանուած էր, սակայն Արշակունի թագաւորներու օրով ընդհանրապէս անոր վրայ մեծ ազդեցութիւն ունէր Յունա—Հռոմէական դիցապաշտութիւնը: Մանաւանդ հայոց վերջին հեթանոս թագաւոր Տրդատը ծայրայեղ նախաձախնդիր յունական ծէսերու, առանձին հրովարտակով խիստ պատուէր կուտար ժողովրդին կէտ առ կէտ հնազանդիլ այն բոլոր օրէնքներուն, որոնք կը գործադրուէին յունաց աշխարհին մէջ*):

Յունա—Հռոմէական կրօնին այս աստիճան ենթարկուող մի ժողովրդի մեհեաններն ալ անկասկած պէտք էր, որ յունական մեհեաններու նմանութիւն ունենային:

Յունա—Հռոմէական մեհեաններու ձևը հասկնալ շատ դժուար չէ. երևակայենք մի երկար քառակուսի սրահ, որուն մէկ ծայրին վրայ երբեմն փոքրիկ բաժանումներ կուր արձաններուն յատուկ, եթէ շատ լայն էր շէնքը, անտարակոյս ամենիքը ծածկելու դիւրութեան համար ներքին մասը՝ դէպի երկայնութեանը շարուած երկու կարգ սիւներով երեք թևերու (nef) բաժանուած, նաև արտաքուստ ալ յաճախ շէնքը շրջապատուած էր սիւնազարդ ծածկոյթով մը (portique):

Բաղդադենք այս նկարագրութիւնը մեր պատկ. 6 Տեկորի տաճարի, պատկ. 17 Մրենի տաճարի և պատկ. 18 Երբրուքի տաճարի յատակագծերու հետ, յետնագոյն յաւելուած համարելով ա-

*) Ազալթանգեղոս. Տփլիս, 1909. երես 74. Ամենայն ոք գիտացէ ի մերոց հրամանացս որ առ ձեզ, զի վասն ձեր շինութեան եմք հոգացեալք. զի յորժամ էաք մեք ի Յունաց աշխարհին, անդ տեսանէաք զհոգաբարձութիւն թագաւորացն, ի հոգալ ընդ շինութիւն իւրեանց աշխարհին, ի պատուել թագաւորացն, ի հոգալ ընդ շինութիւն և սպանդիւք զոհիցն, և երևելի պազազինս դիցն աստուծոց շինուածովք և սպանդիւք զոհիցն, և ի պտղոցն՝ յամենայնէ տարագացն ընծայիւք, և գունակ գունակ նուիրօքն և ի պտղոցն՝ յամենայնէ գամենայն նոցա մատուցանելով, և ջերմեռանդն եռալ գեռալ պաշտամանն, շքեղացուցանելով և զարդուքն զարդարելով և զերևելի զհոյակապ զանեղծ դիան մեծարելով: Եւ զայն ևս տեսանէաք ի նոցանէ՝ ի նոցունց դից անտի՛ զխաղաղասէր շինութիւն մարդաշատութեան, հո՞ծ բազմամբոխ լիութեամբ պարարտութեամբ՝ նոցա զայն փոխադարձ փոխարինացն շինութիւն շնորհեալ, ամենալրիւք բարութեամբ մեծացեալք, խաղաղացեալք ի բարիան վայելէին:

նոնց կցուած սենեակներն, որոնց մասին ապացոյցներ դարձեալ պիտի տեսնենք ի ստորև *):

Վերև բացատրուած շարք մը փաստերով տեսանք, որ այդ յաւելուած համարուած մասերէն ոմանք՝ ինչպէս portique-ները 7-դ դարէն յառաջ միայն գործածական եղած են, այժմ փորձենք մի ժամանակագրական կտրուկ գտնել միւս մասերու յաւելմանց կամ փոխարկմանց մասին, որոնցմով պիտի ապացուցուին Տեկորի, Մրենի, Երերուքի, Քասախի, Աշտարակի, Օձունի և այլ նման եկեղեցիներու աւելի վաղ ժամանակի մէջ բոլորովին իրարու նման շէնքեր լինելը, որոնք անշուշտ կանգնուած էին ամեն կողմ հասարակական որևէ անհրաժեշտ պահանջ մը գոհացնելու համար:

Ի՞նչ էին այդ միօրինակ հսկայ շինութիւններ 3-դ կամ 4-դ դարուն մէջ գոյութիւն ունեցող, որոնց վրայ ոչ կանոնաւոր շինութեան արձանագրութիւն կայ և ոչ ալ պատմագրական յիշատակութիւն: Հայոց պատմագիրներ այս շէնքերէն շատ նուազ կարևորութիւն ունեցող եկեղեցիները յիշատակել են և երկնանման փառքերով պատկեր են, այլև զանոնք կանգնողներու սրբութիւնն ու բարեպաշտութիւնը փառաբանելու համար բանաստեղծական ներբողներ են հիւսեր: 7-դ դարուն Դաւիթ Սահառունիի մը Մրենի մէջ շինած եկեղեցին, որուն այսօր հետքը չկայ, չէ մոռցուած յիշատակելու, իսկ անոր քովի կը կամսարականի մը ձեռքով կանգնուած (աւելի ճիշտը փոխարկուած) հսկայ եկեղեցին ի՞նչ պատճառ կար չի յիշելու: Արդեօք այդ շէնքերու ծագումը մոռցնել տալ կուզէին մեր պատմագիրներ, թէ՛ իսկապէս իրենց օրով կանգնուած շինութիւններ չէին անոնք: Այս վերջինը աւելի հաւանական է: Սոյն մի շարք հսկայ տաճարներու մասին ոչ միայն 7-դ դարու պատմագիրներ լուռ են, այլև 5-դ և 6-դ դարու պատմագիրներ, յիշելով հան-

*) Իրենց նախնական ձևին մէջ աւելի անաղարտ պահուած են այսօր Քասախի և Աշտարակի հնագոյն եկեղեցիները: Ասոնց վրայ յաւելուած են միայն արևելեան կողմերէն կիսաբոլորակ խորանները (abside), իսկ ներքին կողմէն պարզ սրահներ են, երկու կարգի վրայ երեքական մոյթերով երկու նեղ և մէկ լայն թևերու (nef) բաժանուած: Իսկ Օձունի եկեղեցին տակաւին պահած է մէկ կողմին վրայ արտաքին portique-ը: Թէև այս եկեղեցիի մասին չեմ կարող հաստատ կարծիքներ յայտնել մինչև որ անձամբ չի քննեմ:

դերձ իրենց օրով կանգնուած եկեղեցիներու անուններն ու տեղերը, երբէք չեն արձանագրած գոնէ միւսներուն մէկ կամ երկուքին անունը: Շատ պարզ է, որ մեզ ծանօթ 5-դ և 6-դ դարու պատմագիրներու ապրած թուականներէն առաջ կանգուն էին անոնք, այլևս ի՞նչ հարկ պիտի ստիպել զիրենք գրելու:

Չէ՞նք կարող արդեօք այս ձևի հնագոյն տաճարներու վրայ հայոց հեթանոսական մեհեաններու պարզ դրոշմը տեսնել, բանի որ անոնք հեթանոս հայոց կրօնակից Յունա—Հռոմէական մեհեաններուն շատ մօտիկ նմանութիւն ցոյց կուտան: Ըստ իս՝ Տեկորի, Քասախի տաճարները պարզապէս հեթանոսական մեհեաններ են, իսկ մնացածները, եթէ ոչ մեհեաններ, գոնէ մեհեանական ձևերու ազդեցութեան տակ կանգնուած հայոց բրիստոնէութեան նախնական տաճարներ. թէև աւելի հաւանականը ըստ իս այն է՝ որ միւս նմաններն ալ հեթանոսական շէնքեր էին միայն մի քիչ աւելի ուշ փոխարկուած քան Տեկորի ու Քասախի տաճարները: Որչափ որ հայ պատմագիրներ կը ջանան մեզ համոզել, որ կուսաւորչի օրով այլևս հեթանոս հայեր չի մնացին, սակայն գիտնականներու խորթափանց քննադատական հետազօտութիւնները կը հաստատեն թէ՛ դեռ 5-դ դարու վերջերն ալ կային հեթանոս հայեր և հեթանոսական տաճարներ, որոնց դէմ կռուելու համար բաւական չեղան բարոյական միջոցները, առանց պետական ոյժի միջամտութեան: Ուստի տարօրինակ չի լինիր ենթադրել, որ եթէ Երերուք և Մրեն և այլ նմաններ մեհեանական պարզ դրոշմը կը կրեն, կարող էին աւելի ուշ ժամանակ փոխարկուած լինել քան իրենց նախորդները, փոխարկման ժամանակի քրիստոնէութեան ծիսական պահանջներուն համեմատ յաւելուածներու ենթարկուելով:

Մինչև այստեղ կատարուած քննութիւնները բաւական կը համարիմ ապացուցանելու, որ Տեկորի տաճարը երբեմն ունեցեր է պատկ. 6 սև ներկուած ձևով յատակագիծ, առանց կիսաբոլորակ խորանի (abside), միայն արևելեան կողմէն դուրս ցրցուած ներքին ուղղանկիւն խորշով մը (պատկ. 6) և այս եղեր է անշուշտ մինչև 5-դ դարու սկիզբները, երբ դեռ կիսաբոլորակ խորանի (abside) ոճը Հայաստան չէր հասած: Շէնքին արտաքին և ներքին պարզութենէն ալ կերևի, որ տակաւին այն ժամանակ ծիսական բարդ արարողութիւններ չեն եղած, որովհետև անոր մէջ

չեն տեսնուեր ինչպէս կիսաբոլորակ խորան, նոյնպէս աւանդատուներ, հաստատ կարելի է վճռել որ նոյն իսկ Լուսաւորչի օրով ընդունուած ձևն է սա անպայման, որուն վրայ յետոյ պարբերաբար աւելցեր են նոր ծիսական պահանջներու համապատասխանող մասեր, այսինքն՝ աւանդատուներ և ապաշխարութեան գաւիթ *):

Տեկորի տաճարին վրայ շուրջանակի սիւնազարդ ծածկոյթներու (portique) աւելի ուշ ժամանակ աւելցուած լինելը ինծի ենթադրել կուտայ թէ՛ ինչպէս Յունաստանի մէջ, այնպէս ալ Հայաստանի մէջ մեհեաններու ձևը երկու ուղղութեամբ զարգացած էր, այսինքն կային շուրջանակի սիւնազարդ ծածկոյթներ ունեցող և չունեցող մեհեաններ: Ուստի երբ բրիտանացիական եկեղեցիներու մէջ ալ հեթանոսական սիւնազարդ շուրջանակի ծածկոյթը ծիսական որոշ պահանջներու ծառայեցնել անհրաժեշտ սեպուեցաւ, այն ժամանակ Տեկորի տաճարին շուրջն ալ աւելցուցեր են սիւնազարդ ծածկոյթ, աւելցնելով միաժամանակ արևելեան կողմէն դէպի հիւսիս և հարաւ ցցուած թևերը (պատկ. 5 D D և պատկ. 6 U U), որոնց մէջ կան դէպի հիւսիս և հարաւ ուղղուած երկար քառակուսի սենեակներ (պատկ. 5 A A), բայց առանց դարձեալ կիսաբոլորակ խորանի (abside): Թևերու յաւելումով արևելեան կողմէն ուղղանկիւն խորշ մը միայն գոյացեր է (պատկ. 12 E) նման ներսի կողմէն եղած խորշին (պատկ. 6 F): Հետևաբար այս յաւելումն ալ պէտք է որ համարենք դարձեալ 4-դ դարու վերջին քառորդին, կամ առ առաւելն 5-դ դարու սկիզբը, քանի որ դեռ կիսաբոլորակ խորան գոյութիւն չունի, նոյն իսկ չէր շինուած ոչ գմբէթ, ոչ ալ խաչաձև տանիք:

Քասախի տաճարը կերևի որ հիմնարկուած օրէն ունեցեր է շուրջանակի սիւնազարդ ծածկոյթ (portique) և փոխարկման ժամանակ առանց վնասելու անոր ամբողջական ձևին, միայն աւելցուցեր են կիսաբոլորակ խորան (abside): Համոզուած եմ, որ այս

*) Երևացած այս ակներև փաստերուն առջև այլևս հնացած պէտք է համարել այն ընդհանուր կարծիքը, թէ էջմիածնի կաթողիկէի ձևը պահուած է անփոփոխ Լուսաւորչի հիմնարկած ձևով: Լուսաւորչի հիմնարկածը ոչ կարող էր abside ունենալ, ոչ ալ գմբէթ խաչաձևած տանիքով: Լուսաւորչաչէն կաթողիկէին համար չէ կարելի ենթադրել ուրիշ մի ձև քան Քասախի, Տեկորի, Աշտարակի և այլ նմաններու յատակադձային ձևը:

տաճարը աւելի երկար մնացեր է նախնական վիճակին մէջ, ծառայելով իբրև մեհեան կամ եկեղեցի, վասն զի միմիայն կիսաբոլորակ խորանն է որ յաւելուած է. և այդ կիսաբոլորակին Հայաստան հասնելն ալ 5-դ դարէն առաջ հաւանական չէ: Նայելով իր տան հասնելն ալ 5-դ դարէն առաջ հաւանական չէ: Նայելով իր բոլորովին պարզ, այսինքն՝ առանց կողմնակի սենեակներու, կամ աւանդատուներու միմիայն կիսաբոլորակ խորանի մը յաւելուածին, և անդատուներու միմիայն կիսաբոլորակ խորանի եղած լինի abside-ի կարելի է կարծել, որ սկզբնական օրինակներէն եղած լինի abside-ի և նախատիպ 5-դ դարու վերջին կանգնուող էջմիածնի կաթողիկէին չորս abside-ներուն:

Ճիշտ է որ թէև հիւսիսային կողմը կայ մի սենեակ տաճարին հետ հարողակցող, սակայն այդ սենեակը իր անկանոն ձևով և անհաշակ արհեստագործութեամբ յեանագոյն յաւելուած կը ներկայաւարտուի արհեստագործութեամբ յեանագոյն յաւելուած կը ներկայաւարտուի: Նայ, թէև դարձեալ ոչ այնչափ նոր, ինչպէս Երեբունի սենեակները: Հետևելով այս օրինակներուն, Երեբունի տաճարը փոխարկուած կարելի է համարել աւելի ուշ քան Տեկորի տաճարի երկրորդ յաւելումը: Որովհետև Երեբունի մէջ աւելի կատարելագործուած ձևով եղած են յաւելումները և աւելի ճոխ ծիսական պէտքերով: Միաեղած են յաւելումները և աւելի ճոխ ծիսական պէտքերով: Միաժամանակ աւելցուած են կիսաբոլորակ արևելեան խորանը և անոր երկու կողմի երկար քառակուսի սենեակները, նոյնպէս նաև արևմտեան անկիւններու քառակուսի սենեակները արտաքին փոքր abside-ներով միասին:

Այս փոփոխութիւնն ալ հաւանական կը համարիմ 5-դ դարու վերջերին, յորում արդէն մտած էր հայոց եկեղեցիներու մէջ թէ կիսաբոլորակ խորան և թէ արևմտեան կողմը սենեակներ ունենալու սովորութիւնը վաղարշապատի կաթողիկէ էջմիածնի օրինակով: Թևերև միևնոյն ատեն Երեբունի վրայ ալ շինելն գմբէթաւոր խաչաձև տանիք, եթէ շէնքը յարմարութիւններ տար այդ փոփոխութեան. որովհետև, նախ՝ շէնքը համեմատաբար շատ նեղ էր, երկրորդ՝ գմբէթին որոշ չափով կեղծոնական համաչափութիւն տրուելու համար անոր երկայնութիւնը և մոյթերու դասաւորութիւնը աննպաստ էր: Տեկորի մէջ գմբէթը համաչափութիւն ստացեր է արևելեան կողմի երկու մոյթերու ոչնչացումով. փոքր ի շատէ վայելաբերական համար հարկ էր, որ Երեբունի տաճարի շէնքը կարճացնէին արևելեան կամ արևմտեան կողմէն, ինչպէս Տեկորի տաճարին մէջ, և յետոյ համաչափ կեդրոն կազմող մոյթամէջերուն վրայ կանգնելն գմբէ-


թը, այն ալ անշուշտ փայտէ, պէտք էր որ շինէին էջմիածնի գմբէթին նման, ինչ որ ցանկալի չէր այնքան խնամքով և կատարեալ արուեստագիտութեամբ շինուած հսկայ շէնքի մը վրայ փայտաշէն գմբէթ դնել, վասն զի դեռ քարէ գմբէթ շինելու արուեստը Հայաստան մտած չերևիր նոյն ժամանակ:

Կը կարծեմ որ արևմտեան կողմի սենեակներուն ալ դրսէն շինուելուն պատճառը դարձեալ շէնքի նեղ լինելն է. ներսը այնչափ տեղ չի կար նոյն մեծութեամբ սենեակներ երկու կողմին վրայ շինելու համար, ինչպէս նախնական էջմիածինը, Հռիփսիմէի վանքը և ուրիշ նմաններ՝ առանց արևմտեան մուտքը խափանելու. ակամայ ստիպուած մի բացառութիւն կազմեր են Երեբունքի մէջ:


Երեբունքի արևելեան մասին վրայ կատարուած փոփոխութիւններու դրական փաստեր այստեղ առ պիտի ներկայացնելու հնարաւորութիւն չունիմ, ձեռքի տակ հարկ եղած լուսանկարներ և մանրամասն չափագրութիւններ չունենալու համար *), այնու ամենայնիւ հետաքրքիր մասնագէտներու աչքէն չեն վրիպիր բուն յիշատակաւորներն վրայ ներսէն և դրսէն շարուած քարերու ոչ համանմանութիւնը, տարբեր արուեստագործութիւնները, շինուածանիւթերու և դեղարուեստական ոճերու անհամեմատ զանազանութիւնները՝ բաղդատմամբ նախնական շինութեան: Իսկ արևմտեան կողմէն այնքան պարզ են տարբեր ժամանակաշրջաններու մէջ կատարուած փոփոխութիւններ և յաւելումներ, որ առանց արուեստագէտ լինելու ալ հետաքրքրուողը կարող է տեսնել իր բոլոր մանրամասնութիւններով:

Հիւսիսային և հարաւային ճակատներու սիւնազարդ ծածկոյթները (portique) շատ դժուար է յետնագոյն յաւելուած համարիլ, սակայն սիւններու կամ որմասիւններու դասաւորութեան մէջ բռնազբօսիկ համաչափութիւններ և ճարտարապետական ոճերու զարգացման տեսակէտով ժամանակագրական ստոյգ փաստեր մեծ մասամբ

*) Խորին ցաւով պիտի արձանագրեմ, որ հակառակ բուն ցանկութիւններու հնար չունեցայ Երեբունքի նման մի ամենակարևոր յիշատակաւորներ շուրջը մանրակրկիտ հետազոտութիւն կատարել այնպէս, որ պիտի կը պահանջէր իմ ծրագիրս, նոյն իսկ հնար չեղաւ ձեռքի տակ ունենալ քանի մը լուսանկարներ, որոնց վրայ գոնէ նշանակելով իմ տեսութիւններս և ապացոյցի կէտերս, որով աւելի դիւրըմբռնելի դառնային բացատրութիւններս: Կը քննայ ինձ հետաքրքիր ընթերցողին յանձնարարել, որ անձամբ տեսնէ ու ստուգէ իսկական յիշատակաւորներն վրայ:




Պև. 3.
Չուարթնոյի պսակը (corniche)



Պև. 2
Տեկորի տաճարի գմբէթի պսակը (corniche)



Պև. 1.
Տեկորի տաճարի միջին պսակը (corniche)



Տեկորի տաճարի պատուհանի վրա պսակներ (corniche)

Պատկ. 29. Չարդաբանդակ պսակներ Տեկորի տաճարէն եւ Չուարթնոյէն:

կասկածելի կը դարձնեն, որպիսին նկարագրեցի Տեկորի տաճարի արտաքին որմասիւններու դասաւորութեան վրայ: Բայց որ հարաւային դռները զարդարող սիւներ, աղեղներ և fronton-ներ փոփոխութիւն կրած են շատ հին ժամանակ, անվիճելի է:

Նոյնպէս նաև արևմտեան կողմը, մտից դուռը և ամբողջ սիւնազարդ ծածկոյթը ժամանակակից են հարաւային դռներու փոփոխութեան: Այստեղ Տեկորի սիւնազարդ ծածկոյթի ապացոյցներէն աւելի բնորոշ փաստեր կան, որ նախնական շէնքի բուն պատին հետ կապ չունի սիւնազարդ ծածկոյթը և առանձին շինուելով կայցուած է շէնքի ճակատին:

Երբերուքի տաճարի ամբողջական հետազօտութիւն գրել այստեղ անկարելի է նախ՝ անոր համար, որ անհամեմատ շատ նիւթ կը բովանդակէ իր մէջ քան Տեկորի տաճարը, երկրորդը՝ առաջագրուած նպատակէն ալ մեզ կը հեռացնէ, ուստի առ այժմ պիտի բաւականանամ մի քանի փաստեր ևս արձանագրելով, որոնք պիտի ապացուցանեն թէ Երբերուքի փոխարկումը աւելի ուշ է կատարուած քան Տեկորի երկրորդ յաւելումը:


Բոլոր moulure-ներ և ուրիշ զարդաքանդակներ Երբերուքի տաճարին վրայ, հին ոճէն դէպի նոր վերածնութիւն՝ փոխանցման շրջան մը կը ներկայացնեն հայ ճարտարապետութեան զարգացման մէջ. կան այնպիսի detail-ներ, որոնք հայ ճարտարապետութեան մէջ 5-դ դարուն բնաւ գոյութիւն չունին, իսկ սկսած են երուրէն շարունակուած կը գտնենք մինչև հայ-ճարտարապետութեան անկումը՝ 13—14-դ դար:

Արևելեան կողմէն կիսաբոլորակ խորանին (abside) պատէն ներս ամփոփուելը 5-դ դարու վերջին էջմիածնի նախնական օրինակով կը հաստատուի, բայց չէ կարելի հաստատել, որ Տեկորի մէջ սիւնազարդ ծածկոյթը և արևելեան թևերը աւելցուած ժամանակ շինուեցաւ նաև հիւսիսային կողմի արտաքին abside-ը սիւնազարդ ծածկոյթի տակ:

Զարդաքանդակները և ուրիշ ճարտարապետական moulure-ներ այլևս օտար են Հռոմէական արուեստի ոճին, որուն մեծ ներգործութիւնը անուրանալի է հայ ճարտարապետութեան մէջ մինչև 5-դ դարու վերջերը: Այստեղ սկսած է Ասորական և Սասանական ներգործութիւն, որ տեւած է մինչև հայ արուեստի վերջնական ան-

կումը: Երբերուքի տաճարին վրայ բոլոր պսակներ (corniche), պատուհաններու շրջանակներ պարզ Սասանական են: Թէև ունին իրենց մէջ ատամնաշարեր (denticule), որոնք կարող են յունական կամ հռոմէական համարուել, բայց ե՞նչ քննենք անոնց համաչափութիւնները և դասաւորութեան եղանակը՝ կը տեսնենք որ Սասանական ոճին կը պատկանին, որոնք երևեցան Պերսեպոլիսի բեկորներուն մէջ:

Երբերուքի մէջ գտնուած մի խոյակ, որ սիւնազարդ ծածկոյթի արտաքին անջատ սիւններուն կը վերաբերի, պարզ ցոյց կուտայ իր Ասորա—Քաղդէական հնագոյն ոճը, որ Սասանական արուեստի միջոցաւ փոխանցուած է թէ Հայաստան և թէ Միջագետքի ու Սիւրիայի ճանապարհով մինչև Երուսաղէմ, մի ուրիշ ճանապարհով ալ մինչև Հնդկաստան: Գնդազուլուս սիւններու այս ձևը առանց համաչափական մեծ փոփոխութիւններ կրելու պահուած է հայոց մէջ շատ քիչ քան 13—14-դ դարերը: Երբերուքէն յետոյ Զուարթնոցի մէջ կայ մինչև



Պատկեր 30. Տեկորի սանարին ներքին մեծ աղեղներու նորոգութեան ժամանակ փառերու ասամնաւոր արուածքը:

7-դ դարուն, Պանայի մէջ 10-դ դարուն, 11-դ դարուն Անիի Գագկաշէն Ս. Գրիգորի և ուրիշ շատ մը փլատակներու մէջ: 10—11-դ դարէն սկսած բոլոր հայ յիշատակարաններուն արտաքին որմասիւնները միևնոյն ձևով խոյակներ և խարիսխներ ունին: Իսկ վերջին շրջանի վերածնութեան մէջ, մի քիչ աւելի բարեփոխուած էին անոնց abaque-ները և երբեմն անկիւնաւորուած գունդերը:


Երբերուքի, Զուարթնոցի և Պանայի գնդազուլուս խոյակներու վրայ փորուած զարդաքանդակները ինծի պահ մը ենթադրել կուտան, որ եթէ խոյակներու լերկ ձևը ուղղակի Ասորա—Քաղդէական ներգործու-

Թիւն է հայ արուեստին մէջ, այնուամենայնիւ այս երեք եկեղեցիներու մէջ գտնուած քանդակազարդուած ձևը Սիւրբիական արուեստի ազդեցութիւն լինի հայոց գեղարուեստին վրայ: Նախաքրիստոնէական շրջանի մէջ նոյն ձևի սիւներու գործածութիւնը Սիւրբոյ մէջ հաստատուած է, բայց աւելի հնագոյն օրինակ կը ներկայանան Սողոմոնի տաճարին համար Փիւնիկեցի Քիրամին շինած խոյակները, որոնց նկարագրութիւնը ճշդիւ կը պատկերացնէ Երերուքի, Զուարթնոցի և Պանայի խոյակները ցանցակերպ հիւսուած քանդակազարդութեամբ *):

Ահա Երերուքի և Էջմիածնի կատարելագործուած օրինակներն են, որ Տեկորի տաճարին վերջնական ձև տուեր են. Երերուքը իր արևելեան ներքին և արտաքին մի ռ ու փոքր կիսաբոլորակ խորաններով, Էջմիածինը իր գմբէթով և խաչաձև տանիքով: Հետևաբար Երերուքի այսօրուան տեսքին փոխարկուելու ժամանակը պէտք է լինի ամենաուշ 6-րդ դար:

Թէ ինչու ընդունուեցան շուրջանակի սիւնազարդ ծածկոյթները (portique) հայոց եկեղեցիներու մէջ, այդ մասին իմ հաւանական կարծիքս է թէ՛ քանի որ քրիստոնէութիւնը չէր մերժած Հին կտակարանը, և հին օրինաց շատ մը ծէսեր ընդունուեցան քրիստոնէական եկեղեցւոյ մէջ, անկասկած Եբրայական տաճարի հեթանոսաց գաւիթն ալ ընդունուեցաւ նոյնութեամբ հայոց եկեղեցիներու մէջ: Բայց երբ սկսեց անոր կանոնաւոր գործածութիւնը՝ ինծի յայտնի չէ, միայն թէ 325-ի Նիկիոյ ժողովին կանոններուն մէջ որոշ յօդուածներ կան այդ մասին: Հետևաբար թէ ընդհանուր քրիստոնէից և թէ հայոց եկեղեցիներու մէջ շուրջանակի սիւնազարդ ծածկոյթները հին դարերու մէջ անպայման ծառայեցին իբրև հեթանոսաց կամ ապաշխարողաց գաւիթ: Յոյն և Լատին եկեղեցիներու մէջ 3-րդ դարուն իսկ գործադրութեան դրուած կերևի ապաշխարութեան գաւիթի օրէնքը, Գր. Սքանչեւագործի կանոնական թղթով. սակայն հայոց մէջ նախ քան Ս. Գրիգոր պարտաւորիչ էր թէ ոչ յայտնի չէ ինծի. կը կարծեմ որ հայոց մէջ սկսած լինի այդ օրէնքին խստիւ գործադրութիւնը Նիկիոյ ժողովին կանոնները Հայաստան բերուելէն յետոյ: Բայց որովհետև ցուրտը, — ձմեռը սաստիկ ու երկարատև երկրի մը մէջ դժուար էր ապաշխարողաց համար բացօդեայ սպասել,

*) Գ. Թագ է գլ. 17, 18, 41, 42 հմբ.




Պատկ. 31. Տեկորի քանդակի արձանի ու մասիւններու խոյակ և խարսիլ

հաւանական է որ յետոյ մտածեցին բացօդեայ portique-ներու փոխարէն աւելցնել արեւմտեան սենեակները իբրև ցրտէն ու բուքէն պատսպարուած ապաշխարողաց կայան ձմերնային օրերու համար*):

Բայց շատ զարմանալի մի երևոյթ է, որ 7-դ դարէն սկսած ոչ միայն սիւնազարդ ծածկոյթ շինելու սովորութիւնը վերացած է հայոց մէջէն, այլև հեթանոսական գաւիթ համարուող բաժանումներ ևս չկան հայոց եկեղեցիներու մէջ մինչև 11-դ դար: Կարծեմ թէ այս սովորութեան ընդհատումէն յետոյ առաջին երևոյթներէն մէկը պէտք է համարել Հոռոմոսի վանքի մէջ Յոհաննէս Սմբատ թագաւորի շինած գաւիթը: Թէև այս դարերէն սկսեալ շինուած գաւիթներն ալ, եթէ ի սկիզբան իբրև ապաշխարողաց կայան շինուած էին, այնուամենայնիւ անոնք շուտով փոխեր են իրենց կոչումը և ծառայեր են իբրև տոհմային դամբարաններ: Շինութեան կերպով ալ շատ կը տարբերին իրենց հաստատուն և փակ շրջապատով և կանոնաւոր ծածքերով. փոխանակ նախնական բացօդեայներու, գեղեցիկ կամարակապ սիւնազարդ սրահներ են անոնք: Միակ բացառութիւն այս գաւիթներու հայոց մէջ ընդունուած ոճին, Անիի Ս. Գր. Լուսաւորիչ (նախընթաց) եկեղեցին է, որ բացօդեայ սիւնազարդ ծածկոյթ (portique) ունի արեւմտեան կողմէն (պատկ. 4 B), որնոր լիովին կը յիշեցնէ Փոքր Ասիական, Յունական և յունականի ազդեցութեան ենթարկուած հայոց եկեղեցիները:

Տարօրինակ չէ Անիի Լուսաւորիչ եկեղեցիի այս օտար յատկութիւնը. այնտեղ մենք կը տեսնենք ուրիշ ապացոյցներ ևս, որ մի ժամանակ այդ եկեղեցին սեփականութիւն դարձեր է այլադաւան քրիստոնեայ մի հասարակութեան: Հայոց եկեղեցիներու մէջ բացարձակապէս անընդունելի սովորութեան մը հակառակ մեռելներ

*) Թէև շատ ուշ ժամանակի վկայութիւն, սակայն թերևս իբրև հաստատութիւն ծառայէ սոյն կարծիքիս: Աղթամարի հակաթոռ Ջաբարիա կաթողիկոս 15-դ դարուն Ս. Սաչ եկեղեցիի կից շիներ է ամառնային և ձմեռնային գաւիթներ, որուն մասին թովմա Արծրունիի պատմութեան յաւելուածին մէջ կկարդանք.—Դարձեալ ի յաթոռ հայրապետութեան իւրոյ ի կղզիս Աղթամար, ի գուն Սուրբ Սաչիս շինեաց գեղեցիկ և մեծանիստ տեղեօք ի թիկունս Սուրբ Սաչիս զժամատունն մեծ յաւուրս ձմերայնոյ, իսկ ի կողմն արևմտից զժամարակն ամարայնոյ մեծանիստ կամարակապ ձևօք կրակապ և սրբագործ. Պատմ. Տանն Արծրունեաց ի թովմայ վարդապետէ Արծրունոյ. Կոստանդնուպոլիս, 1852, երես 263—264:



Պատկ. 32. Տեկորի ամառային արտաքին և ձմեռային արտաքին խոյան

թաղուած են *) խորանին առջև, որոնց մէկուն տապանաքարին վրայ մինչև այսօր կը մնայ վրացերէն տառերով արձանագրութիւն: Նաև ներսը և դուրսը նկարուած պատկերներու վրայ արձանագրութիւններ վրացերէն գրուած են: Այս բոլոր ստացական օտար յատկութիւններ շատ կը հեռացնեն Անիի Լուսաւորիչ եկեղեցին մշտնջենապէս հայ լուսաւորչականաց սեփականութիւն համարուելէ:


Մրենի տաճարին տանիքի խաչաձևումը և գմբէթաւորումը անշուշտ 7 դարէն առաջ չէր կարող լինել այն պարզ պատճառաւ որ, եթէ առաջ լինէր, պէտք էր որ շուրջանակի սիւնազարդ ծածկոյթ ալ ունենար ժամանակի պահանջին համաձայն: Բայց ինչպէս տեսանք, 7-դ դարուն բոլորովին վերջացած էր այդ սովորութիւնը հայոց մէջ: Բացի այդ գմբէթին և պսակներուն (corniche) ոճը միայն 7-դ դարու հայոց արուեստին կը պատկանին, որոնք այդ շրջանէն ոչ առաջ և ոչ ալ յետոյ այլևս գոյութիւն չունին հայ-ճարտարապետութեան մէջ: Բայց արդեօք ի սկզբանէ, նախ քան յաւելումները գմբէթի և խաչաձև տանիքի կատարուիլը սիւնազարդ ունէր, թէ ոչ, այդ հարցին չէ կարելի դրականօրէն պատասխանել. կարող էր նախնականն ալ առանց արտաքին սիւնազարդ ծածկոյթի լինիլ ըստ մեհենական ոճի այլազան զարգացման:

Իբրև բացառիկ երևոյթ նկատելի է Մրենի տաճարին վրայ, արևելեան կողմէն կիսաբոլորակ խորանին դուրս շէշտուիլը: Ինչպէս կերևի, 7-դ դարուն բոլոր խաչաձև եկեղեցիներու վրայ կիսաբոլորակներու (abside) դուրս շէշտուիլը ընդհանրացած նորաձևու-

*) Հայերը շատ խստիւ պահած են այս հնաւանդ օրէնքը եկեղեցիի հայրերու կողմանէ հաստատուած: Յատկապէս ուշադրութեամբ փնտռած եմ բոլոր հին եկեղեցիներու մէջ և չեմ գտած մեծել թաղուած անոնց մէջ. եթէ կան ալ, անոնք հազիւ թէ 17-դ դարէն անդին անցնին: Այս խիստ օրէնքը ըստ ժողովոց պատմութեան նախ աւանդուած է Ս. Սահակի կանոններով, յետոյ ալ Դուինի Բ. ժողովով 551 թուին: Կանոնը սրբոյն Սահակայ. Յօդ. ԴԳ. Եւ որպէս եղև անառակ սովորութիւն քահանայից և նոցին կանանցն որ զգերեզմանս առ եկեղեցիս առնել, ի տեղիսն սրբութեան ի սուրբ սեղանուոյն. առաջ մի իշխեսցին առնել այլ ի ժողովրդանոցն հանգստարանս եղիցին և քահանայից հանգստարանք, զի սրբութեան տեղին պարկեշտութեամբ պատուեսցի:


Կանոն Դուինի Բ. ժողովի Յօդ. 20: Գերեզմանս յեկեղեցիս մի իշխեսցեն առնել, ապա թէ գացի ոք արարեալ, յեկեղեցւոյն պատարագ մի ոք իշխեսցէ մատուցանել մինչև մաքրեսցին զտեղին:

թիւն էր, թերևս այդ նորաձևութիւնն է որ ազդեր է Մրենի տաճարին վրայ *), բայց որչափ տևեր է այդ նորաձևութիւնը՝ յայտնի չէ, տեղութիւնը հասկնալ կարելի կը լինէր եթէ մենք ունեւայինք մինչև 10-դ դար յաջորդաբար կանգնուող եկեղեցիներ. դժբախտաբար 8-դ և 9-դ դարեր հայոց մէջ միանգամայն դադար առած է գեղարուեստի յառաջադիմական մինչև 7-դ դարու կէսին երևցող գորեղ շարժումը. անշուշտ արաբական արշաւանքի պատճառաւ տնտեսական քայքայումը և գերեվարութիւնները եղան պատճառ այս մեծելային անշարժութեան: 10-դ դարուն մօտիկ է որ յանկարծական զարթում կը տեսնուի հայոց գեղարուեստական կեանքին մէջ. հայ ճարտարապետութիւնը կը սկսի նոր վերածնութեամբ մը



Պատկ. 33. Տեկուրի քանարին արձափն ումասիւներու խոյակ:

*) Թալինի, Դուինի կաթողիկէներն ալ ազատ չեն կարող համարուիլ փոխարկման կասկածանքէն, որոնց վրայ յետնագոյն յաւելուած են հիւսիս և հարաւ կողմերու կիսաբոլորակ խորանները, մանաւանդ որ Թալինի հիմնարկութեան թուականն ալ յայտնի չէ արդէն. ինչ կը վերաբերի յատկազօծի ձևին, պարզ բաղդատութիւն մը բաւական է հասկնալու ընդհանրացած հայ եկեղեցիներու. ձևէն արևելեան կողմի օտարութիւնը: Դուինի կաթողիկէն թէև կը վերագրուի Մեծն Վարդանի, սակայն ակնարկ կայ պատմագրոց կողմանէ, որ նա շինուած է մեհենի մը տեղին վրայ նոյն իսկ մեհենին քարերով: (Տես Թովմա Արծրունի):



Երևան

Պատկ. 34 Զարդաբանդակի գերեզմանախաչ. 13—14-դ դարերի
նմուշ. տես երես 22 և 24.

երևալ. ոչ միայն զուտ ճարտարապետական և զեղարուեստական ոճեր
այլև եկեղեցիներու յատակադասին ձևերն ալ մասնաւորապէս ար-
րևելեան կողմերէն զգալի չափով կերպարանափոխուած են:

Անշուշտ դասնաբանական նորամուտ վարդապետութեան մը
հետևանօք, հայոց եկեղեցիներու խորաններուն երկու կողմը եզոյ
սենեակները՝ որոնք 7-դ դարուն հաւատարակողմ քարակուսի ձև
ունէին, 10-դ դարուն մէջ երկնցած և ուղղուած են արևելքէն ար-
ևմուտք և անո՛ց արևելեան ծայրին վրայ աւելցած են կիսաբոլոր-
ակ խորաններ (abside) պատարագի յատուկ, այս պատճառով ալ
նեղցած են խորանի և գմբէթակիր մոյթերու միջոցը:

Երեք խորաններու ալ արևելեան պատէն դուրս ցցուիլը շինու-
թեան տեսակէտով շատ դժուարութիւններ և անյարմարութիւններ
ունէր, նախ՝ արհեստի որոշ հմտութիւն և նիւթական շատ
գոհողութիւն էր հարկաւոր, երկրորդ՝ կիսաբոլորակներու շարքին
վրայ բնակութեան յառաջ եկած բեկումներ և անկիւններ փաստաբեր
արգիւնքներու պատճառ պիտի գտնային երկրին խիստ ձիւնոտ և
անձրևոտ կլիմային ազդեցութեան տակ: Ինչպէս կերի, հանձարեղ
ճարտարապետին մէկը թէ նիւթական խնայողութիւնը, թէ աշխա-
տութեան հեշտութիւնը, և թէ բնութեան պատճառելիք փաստներու
դէմ ապահովութիւնը ի նկատի ունենալով հանդերձ միևնոյն ժամա-
նակ, երեք խորաններու նուիրագործուած դուրս ցցուելու ձևն ալ
անփոփոխ պահելու համար հետևեալ շատ պարզ և նպատակայար-
մար միջոցին է դիմեր:

Սորաններու բոլորումէն ձևացած խորշեր վերևէն աղեղներով
միացուցեր և անոնց վրայ շարունակեք է ուղիղ պատ հիւսել մինչև
տանիքի սահմանը: Այս գործողութեան ամենամեծ օգուտը եղեր է
այն, որ փոխանակ իւրաքանչիւր կիսաբոլորակի վրայ առանձին ա-
ռանձին ծածքեր շինելու, որոնք թէ դժուարութիւն են և թէ վատ
կլիմայի տակ անտեղութեանց բոյն, ընդհանուր շէնքի տանիքի տակ
ծածկեր է ամեն կերպ ապահովութեամբ երաշխաւորուած: Ահա այս
շինութեան կերպը յառաջ բերեր է հայոց եկեղեցիներու յատուկ
արտաքին պատերու վրայ օղեղնակապ դարդարուն խորշերու (niche)
ոճը, որ նախ սկսելով արևելեան կողմէն, իբրև ակնհասճոյ դար-
ոճը, որ նախ սկսելով արևելեան կողմէն, իբրև ակնհասճոյ դար-
դարանք հետզհետէ անցեր է միւս ճակատներուն վրայ ալ, որուն
ձևացման համար շատ կը նպաստէին ներքին մեծ որմամոյթերու
գոյութիւնը:

Քանի որ արտաքին խորշերու ձևացումը ներքին կողմի սենեակ-ներուն վրայ կիսաբոլորակ խորան աւելնալուն հետ անմիջական կապ ունի, հետևաբար խորշերու (niche) ոճերուն սկզբնաւորութեան ժամանակն ալ չենք կարող աւելի հեռու տանել քան 10-դ դար, և այս բանը հաստատող փաստեր ալ չեն պակսիր մեզի: Նախ 7-դ դարու եկեղեցիներէն ոչ մէկը չունին կիսաբոլորակ խորանով սենեակներ կամ աւանդատուն: Երկրորդ՝ աւանդատուններուն մէջ կիսաբոլորակ խորան ունենալու սովորութիւնը, մօտիկ կապ ունեցած կերևայ 10-դ դարուն հայոց եկեղեցին մտած դաւանաբանական օտար վարդապետութեան մը հետ, այն է հոգւոյ փրկութեան համար եկեղեցիներու մէջ բազմաթիւ պատարագներ մատուցանելու սովորութիւնը:

Մինչև 10-դ դար եղած արձանագրութիւններու մէջ բացարձակապէս չեն տեսնուիր հոգւոյ փրկութեան համար պատարագ պահանջուած, եկեղեցիներ շինողներու և կամ նուիրատուներու կողմանէ. հաւանականօրէն 10-դ դարու մէջ, Գրիգոր Պահլաւունի իշխանը իր Անիի մէջ շինած Ապուղամբէնց Ս. Գրիգոր Եկեղեցին վրայ բաւականացեր է միայն արձանագրելով հետևեալ կարճ մտոյթանքը. «Քրիստոս Աստուած յորժամ գաս փառաւք հաւը ի նորոգել զերկիր ողորմեա Գրիգորո ծառայի բո»: Գրիգոր իշխանի մահուանէն շատ յետոյ իր մէկ որդին Ապղարիա իշխանն է, որ 1010 թուին իր հօր հոգւոյն համար պատարագ սահմաներ է, շինելով անոր անուան նուիրուած Ս. Ստեփաննոս և Ս. Քրիստափոր անունով երկու մատուռ եկեղեցիին կից:

Հայ կղերին հոգւոյ փրկութեան համար պատարագներ ծախելու սովորութիւնը այնքան չափազանցուեր է 11-դ և 12 դ դարերուն, որ յանձն առնուած պատարագներու թիւը լիակատար իրագործելու համար, բաւական չէին տարւոյն օրերը, ուստի ստիպուած ամեն եկեղեցիներու մէջ աւելցուցեր են խորաններ աւանդատուններու վրայ. կրկնայարկ շիներ են աւանդատուներ յատկապէս այդ նպատակաւ: Կարծէք այդ ալ բաւական չէ եղած, եկեղեցիի արևմտեան անկիւններուն վրայ ալ շիներ են յաճախ 2—4 սենեակներ պատարագի խորաններով և վերանորոգեր են հնադարեան արևմտեան սենեակներու սովորութիւնը, այս անգամ հիններէն բոլորովին տարբեր նպատակով մը:

Այս չափազանցուած անախորժ շահավաճառութեան դէմ 12-դ դարուն, Ներսէս Լամբրոնացին ստիպուեր է հրապարակաւ բողոքելու, և այդ կրօնական առևտուրը պախարակելու, միանգամայն հակառակ համարելով նախնեաց սրբազան աւանդութիւններուն: *)

Ահա այս տեսութեամբ կասկածելի կը գտնեմ 7-դ դարու հայոց եկեղեցիներու վրայ գտնուած խորշերը՝ համարելով զանոնք 10-դ դարուն մօտ յաւելուածներ, ինչպէս էջմիածնի մօտ Ս. Հովսէփի վանքին խորշերը: Հովսէփի վանքին հետ միևնոյն դարուն մէջ կանգնուած և իրարու այնքան մօտիկ էջմիածնի կաթողիկէն և Ս. Գայիանէի վանքը խորշեր չունին. եթէ նոյն ժամանակ խորշը ընդունուած ոճ լինէր, անպայման պէտք է որ գտնէր Գայիանէի վանքին վրայ գտնուէր Հովսէփի մէջն քանի մը տարի յետոյ՝ իբրև նորոգ հիմնարկուած եկեղեցի:

*) Սրբոյն Ներսէս Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի. Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագի: Անհետիկ, 1847: Երես 178—179:

Երրորդ զի այս արդաւ է տուրեառութիւն անկաւ շնորհս, և ի թուականութիւնս քառասներորդաց, որով գտաւ ի մէջ մեր անբերելի անկարգութիւն, զի մի ստացից՝ անօրէնութիւն. քանզի ծանուցեալ եկեղեցոյ վերապահութեան թէ ըստ բազմութեան թուոցն է և վարձն և ի պէտս արծաթաւորակացութեան, բազմացուցին ի մի տեղ տասն աւելի կամ ողակաւ ծակոտեալ սիրութեան, բազմացուցին ի մի տեղ տասն աւելի կամ ողակաւ ծակոտեալ մատրուոնս խորանօք և սեղանովք. ըստ նմին և քահանայք թուոցն լրացուցիչք: Ի պէտս այսորիկ եմուտ ամենացին և մովաբացին յեկեղեցին, և կրճատեալն յիմաստութենէ և մալեալն ի շնորհաց եղև քահանայ. բարձաւ այլ դասակարգութիւն պաշտօնէից եկեղեցոյ, սարկաւագաց և կիսասարգաւորաց՝ իբր զանկարգք և զանկատարք՝ յողագս ոչ զթիւն զլիաւորելոյ: Ի ծանր աշխատ մատնեցար. և յողոց արժանաւոր մեղս և ոչ գոյ որ իմանայ, և ոչ այն որ խնդրէ զճշմարտութիւնն Աստուծոյ, աստուածավաճառք եղար, ի մարմնական շահավաճառութեան պէտս քահանայացաք և քահանայացուցար: Ո՞վ ազէտիցս, ո՞վ յիմարութեանս, յիսրայէլի մի անգամ ի տարւոջն մի քահանայ մտանէր արեւմբ օտարաւ ի սրբութիւնս և զամենայն ժողովորդն քաւէր. իսկ մեր Քրիստոսի ամենայն աւուր վասն մեր պատարագեւորոցն քաւէր. իսկ մեր Քրիստոսի ամենայն աւուր թէ քաւէ. այլ զնոյն ի զանալոցն յամենայն տեղիս՝ տկարացար հաւատալ թէ քաւէ. այլ զնոյն ի զանալոցն տեղիս և ի մի վայրն անպատուեցար, և մատուցար յանձուկ և անպաղան տեղիս և ի մի վայրն ստակաւագի, ստանց տիւ ծակոտեալ խորանսն առանց սպասաւորութեան ստակաւագի, ստանց հպ ստակութեան դպրի, առանց անուշահոտութեան խնկի, ստանց լուցման ջահի որ ի հարցն մեր ամենայն սահմանեցաւ ի պէտս նորին և ի կատալուսն: Չայսքան բարեկարգութեամբս զանց արարարք և միայն համարոցն ծառայ եղեալ՝ զպատարագելն և զհաղորդութիւն քահանայիցն ի միմեանց պառակտեցար առանձին առանձին լինել և զթիւնս աճեցուցանել:

Ակոռիի Ս. Անդրէաս եկեղեցին (ըստ Հ. Ալիշանի. Այրարատ, 473. պատկ. 182) իբրև հնագոյն եկեղեցի խորշեր ունի արևելեան կողմը, սակայն իմ կարծիքով, Հ. Ալիշանի ներկայացուցած յատակագիծը պէտք է որ նոյն իսկ Անաստաս կաթողիկոսի շինած եկեղեցին լինի և ձևով ալ նման է ջմիրածնի մօտ գտնուող Գայիանէի վանքին. այսինքն չորս անջատ մոյթերու վրայ գմբէթաւորուած: Ամենևին կասկած չիկայ, որ այդ եկեղեցին բնութեան որևէ մի արկածով վնասուեր է արևելեան կողմէն, և հաւանաբար նորոգեր են 19-դ կամ 11-դ դարաշրջաններուն, որ թէև արևելեան կողմէն կազմեր են ժամանակի ճաշակին պահանջած խորշերը, սակայն եկեղեցիի երկայնութիւնը պահպանուցեր են, որով գմբէթակիր անջատ մոյթերուն երկուքը խառնուեր են խորանին և անսովոր կերպով մնացեր են երկու գմբէթակիր անջատ մոյթեր միայն:

Անդրադառնալով Մրենի տաճարին դուրս հանուած կիսաբոլորակ խորանին, պիտի ըսեմ որ երկար բաւակուսի յատակագծով եկեղեցիներու մէջ խորանը արևելեան պատէն դուրս հանելու հագուազիւտ օրինակներէն մէկն է 7-դ դարուն մէջ: Աւելի հաւանական է 9-դ կամ 10-դ դարուն դուրս հանուած լինի, որուն անմիջապէս յաջորդած է երեք դուրս ցցուած խորաններու (abside) սովորութիւնը: Համոզուելու համար, բաւական է քննական հայեացք մը նետել խորանին արտաքոյ կարգի խորութեան վրայ, որ մէկ ու կէս անգամէն ալ աւելի է սովորական խորաններու խորութիւններէն: Մի օր պէտք տեսնելով կամ աւելի մեծ խորութեան և կամ յատկապէս խորանը դրսէն տեսանելի ընելու դիտմամբ, բանդեր են արևելեան պատը և դուրս հաներ են:

Խորանին երկու կողմի սենեակներուն ծածքը աւելի նորադոյն արուեստագործութեան դրոշմն ունի, vouûte d'arête ըսուած ոճի կամարով ծածկուած է և հազիւ 12-դ դարու հնութիւն ունի հայոց արուեստին մէջ (պատկ. 16, B B): Սոյն ձևով ծածքեր կը գտնուին 7-դ դարուն կանգնուած Բագարանի և Ալամանի եկեղեցիներու մէջ. Բագարանի եկեղեցիին չորս անկիւններուն վրայ, իսկ Ալամանի եկեղեցիին արևմտեան մասը ծածկուած է այս ոճով, հետևաբար այդ եկեղեցիները 12-դ դարուն մէջ անկասկած նորոգութիւն կրեր են:

Տեկորի տաճարին վրայ եղած ուրիշ նորոգութիւններ և փո-

փոխութիւններ կան 7-դ դարէն յետոյ, որոնց մասին ալ հարկ է աւելցնել քանի մը խօսք:

Շուրջանակի սիւնազարդ ծածկոյթներու վերացման ժամանակը ինծի կը թուի 7-դ դարէն յետոյ, բայց ոչ շատ մօտիկ 10-դ դարուն, վասնզի սիւնազարդ ծածկոյթը վերացուելէն յետոյ անոր թողած հետքերը ծածկելու համար եղած նորոգութեան ոճը մեծապէս կը գանազանի 10-դ դարու հայոց ոճերէն: Այս նորոգութեան ժամանակ պէտք է որ շինուած լինի արևելեան անկիւններու վրայ սիւնանման քանդակուածքը (պատկ. 5 G G. պատկ. 7, D) և խորանի երկու կողմի սենեակներուն կրկնայարկուիլը:

Հիւսիսային կողմի արտաքին սիւնազարդ ծածկոյթի տակ գրտնուած կիսաբոլորակ խորանին բարձրութիւնը մնացած է անփոփոխ, հակառակ անոր ետևի և հանդիպակաց հարաւային կողմի սենեակներուն կրկնայարկուելով բարձրանալուն: Ասոնցմէ դուրս եղած նորոգութիւններ և փոփոխութիւններ, անվրէպ ապացոյցներով 10-դ դարուն Բագրատունի հարստութեան շրջանին մէջ ծագող հայկական ոճի կը պատկանին:

Թէև յայտնի չէ թէ 10-դ կամ 11-դ դարուն ո՞վ է այդ նորոգութիւնները կատարող, սակայն բաւական մեծ և յիշատակութեան արժանի նորոգութիւն է կատարուած: Ամեն կողմէն շէնքին կէսէն վեր՝ որ դեղնագոյն քարերով շինուած է, բոլորովին նոր շարուած են. ամբողջութեամբ վար առնելով արտաքին ճակատներու հին շարքերը, տեղը շարեր են մեր այսօրուան տեսած դեղնագոյն քարերը: Նմանապէս բաւակուսի գմբէթի թէ արտաքին երեսները, թէ կոնաձև ծածրը առանց ներքին կողմը շտրուած քարերուն ձեռք տալու: Ամբողջ տանիքի քարեայ սալոյատակու մն ալ նոյն ժամանակի գործ է: Ծածրը փոխանակ քանդելու, թանձրացուցեր են նորոգութիւնով, որուն ներքև տակաւին կերևնայ հին ժամանակի կղմինտրեայ ծածքը: Նաև կտուրին թեքութիւնն ալ աւելցուցեր են ծածքը քարի փոխելու ժամանակ (պատկ. 1, E E, պատկ. 9, D D): Են ծածքը քարի փոխելու ժամանակ (պատկ. 1, E E, պատկ. 9, D D): Տաճարին չորս պատին վրայ ցածէն դանուած բոլոր պատուհանները փակեր են բոլորովին, իսկ բարձր պատուհաններն ալ նեղացուցեր և կարճացուցեր են:

Պատուհանները նեղցնելու սովորութիւնը չենք կարող 10-դ դարէն անդին տանիլ, ինչպէս բացատրեցի առաջուց, մանաւանդ

Տեկորի տաճարին պատուհանները նեղցնելու համար՝ մէջէն ագույ-
ուած քարերուն վրայ եղած բանդակագործութիւններ զուտ Բագ-
րատունի շրջանի վերածնութեան ոճին կը պատկանին (պատկ. 29, ձև 4): Յիրաւի թէև այդ զարդաքանդակներու մէջ մինչև 5-դ
դարու հնութեան հասնող ձևեր կան (պատկ. 29 A B), սակայն նոյն
ձևերու խառնուրդով ակնահաճոյ (nuance) հիւսքեր կազմել՝ առանց
բացառութեան առ առաւելն 9-դ դարու հայ արուեստի ստեղծա-
գործութիւն է: Հին շրջանի մէջ շատ դժուար է գտնել նոյն ոճով
հիւսուած զարդաքանդակներ:

Տանիքները քարով ծածկելու սովորութիւնն ալ բնոյնաբար կապէս
Բագրատունի հարստութեան շրջանի արուստագործութիւն է: Բագ-
րատունի կանուանեմ անոր համար, որ հայ ճարտարապետութեան
10-դ դարու վերածնութիւնը պարզապէս սկսած է այդ ցեղի վերա-
կանգնման շրջանէն և ծաղկած ու զարգացած է զրեթէ անոնց տի-
րապետութեան սահմաններուն մէջ: 10-դ դարու ճարտարապետներ
օգտուելով Շիրակի քարահանքերու նպաստաւոր յատկութիւններէն՝
կղմինտրի պաշտօնը քարին կատարել տուեր են՝ սղոցով ձևելով
իրենց պէտք եղած հաստութեամբ. երբեմն տեղեր մինչև 3 սան-
թիմ բարակութեամբ քարեր ձևուած են: Մինչդեռ 7-դ դարէն ան-
փոփոխ մեզ հասած տանիքներու վրայ առանց բացառութեան կղմին-
տրը ծածկուած է. Մրենի գմբէթին վրայ մինչև այսօր անփոփոխ
պահուած է կղմինտրի շարքը. Բագարանի Ս. Թէոդորոսի վրայ
նոյնպէս կղմինտր է եղած, թէև այժմ թափուած ու կտորտած*):
Զուարթնոցի պեղումները ցոյց տուին, որ անոր վրայ ալ կղմինտրով
ծածկուած էր. Տեկորի մասին արդէն գիտենք: 10-դ դարէն առաջ
կանգնող յիշատակարաններու վրայ եթէ այսօր քարեայ ծածք կը տես-
նենք, պէտք է անպայման հաւատալ, որ շէնքի հիմնարկութեան ժա-
մանակակից չեն, յետնագոյն նորոգութիւններով քարի փոխուած են:

Տեկորի տաճարի գմբէթին խորանարդ պատուանդանէն վեր
եղած ութանկիւնի ցածրիկ թմբուկը իր կոնաձև ծածքով չէ կարե-

*) Շատ հետաքրքրական է տեսնել այս կղմինտրները, գաղափար կազ-
մելու համար թէ որչափ յառաջ գնացած էր այս արհեստը հայոց մէջ. քիչ
կը մնայ հաւասարի մեր այսօրու Ներսիսեան կղմինտրներու հետ թէ շի-
թեան կատարելութեամբ և թէ ձևով. ունին իրարու մէջ ազուցուող մասեր,
նաև գմբէթներու կոնաձևի համար մէկ կողմէն լայն, միւս կողմէն նեղ
ձուլուածներ:

լի աւելի հին համարել քան 10-դ դար: Այդ ծածքի ձևը ամենէն
առաջ իրագործուած կերևի Խճկօնքի վանքի Ս. Աստուածածին ըս-
ուած եկեղեցիի և Մարմաշէնի Վահրամաշէն եկեղեցիի վրայ, ասոնց-
մէ յետոյ արդէն շարունակուած է մինչև հայ ճարտարապետութեան
վերջին սնկման շրջանները: Կոնը շրջապատող պսակը (corniche)
դարձեալ նախ քան 10-դ դար ամենևին չէ երևացած. Զուարթնոց
եկեղեցին 7-դ դարուն ունի թէև համանման բանդակով պսակ, սա-
կայն ինչպէս կը տեսնուի պատկերին վրայ (պատկ. 29 ձև 3), մեծ
տարբերութիւն կայ թէ համաչափութեան և թէ moulure-ներու
դասաւորութեան մէջ: Արևելեան տարագով հետևողութիւն է հին
յունական յառաջակարգառ պսակներու և ունի վերին մասին վրայի
շերտին տակ larmier ¹⁾ ըսուած փորուածքը (պատկ. 29 ձև 3 A),
որնոր երբէք գոյութիւն չունի ուրիշ բոլոր հայ յիշատակարաննե-
րու մէջ, բացի Գառնիի Տրդատայ թախթի պսակներէն. սա արդէն
պարզապէս յունական ոճի ուղիղ ազդեցութիւնն է Զուարթնոցի
վրայ: Տեկորի տաճարին մէջ գմբէթի կոնաձևի հետ միաժամանակ
շինուած է ներսի կողմէն կանոնաւոր կաղապարը վրայ ձուլուած
կիսազնդաձև ծածքը (calote): Նոյնպէս ներքին կողմէն մոյթերը և
որմասիւնները միացնող մեծ աղեղներու նորոգութիւնները, որովհե-
տև միևնոյն քարերով են շինուած այս աղեղները ինչ քարով որ
շինուած են 10-դ կամ 11-դ դարու համարուած բոլոր նորոգու-
թիւնները:

Տարակոյս չի կայ որ, որևէ շէնքի մը մէջ այնպիսի պատաս-
խանատու մասեր, որպիսիք են գմբէթակիւր աղեղներ, առանց բնու-
թեան պատահարներու ալ հանդիպելու, դժուար թէ կարողանային
դիմանալ 4-500 տարիներ. բայց ինչպէս կերևի Տեկորի տաճարին
մէջ մի անսովոր պատճառ աւելի փութացուցեր է ներքին գմբէ-
թակիր աղեղներու շատ վտանգաւոր և դժուարին նորոգութիւնը,
որնոր կատարուեր է ըստ բաւականին յանդուգն և գործին մէջ

¹⁾ Larmier ըսուածը պսակին ամենէն վերի մասին դուրս ինկած տե-
ղին վրայ ներքեւէն ամբողջ խողովակաձև փորուածք մէ, որնոր պաշտօն ու-
նի տանիքին վրայէն վաղող անձրևին ջրերուն դէպի պատը վազելն արգելիլ.
ուստի երբ կը հասնի ջուրը այդ խողովակաձև փորուածքին՝ այլ ևս չէ կա-
րող անցնել այդ փորուածքէն դէպի պատը և կը կաթի վար պսակին դէպի
գուրս կարկառած չափով հեռու շէնքին հիմէն:

համարձակ ճարտարապետի մը կողմանէ: Հին աղեղներու բոլոր քարերը քանդուներ են առանց ձեռք տալու վրայի մասերուն և ներքէն վերստին նոր քարեր շարուելով աղեղներ (arc) կազմուներ են: Եւ որովհետև շատ դժուար էր նոր աղեղները ըստ ամենայնի խրտացնել և հին շինութեան հետ ձուլել, այդ պատճառով ալ իբր պահովութեան միջոց՝ աղեղը կազմող քարերը ամենն ալ ստամնաւոր տաշելով (պատկ. 30. A A A A A A) իրարու մէջ ազցուցեր են, որուն շնորհիւ պէտք է ըսել որ, մինչև այսօր ալ մնացեր են, յիբաւի թէև հին շէնքին հետ չեն ձուլուեր և ժամանակ անցնելէն յետոյ թուրանալով վար կախուեր են քարերը, սակայն ստամնաւոր միմեանց կառչուածով մի նոր խտութիւն ստացեր են: Քարերու վար կախուելէն յառաջ եկած դատարկութեան վրայ ալ գմբէթի ծանրութիւնը ճնշելով խորանարդ պատուանդանի պատերը ճեղքուեր և միմիայն մէջ տեղի մասերը վար իջեր են, իսկ անկիւնները՝ որոնք զրեթէ չորս մեծ մոյթերու վրայ հանգչած էին, թէև վերին ստտիճան հնացած ու մաշուած, սակայն դարձեալ իրենց ուղղահայեաց դիրքն անգամ կորսնցուցած չեն:

Բագրատունեաց հարստութեան անկումէն յետոյ Տեկորի տաճարը կորսնցուցեր է իր կարևորութիւնը, այնուհետև ոչ մի կարելոր նորոգութեանց հետքեր չեն երևիր, որոնք փոքր ի շատէ յիշեցնեն 12-13-դ դարու հայ-ճարտարապետութեան վերջին վերածնութեան ոճը, թէև բոլորովին առանց նորոգութեան չէ մնացեր, սակայն այդ եղածները կարկատան ըսուելու արժէքը միայն ունին:

Ուսումնասիրութիւնս վերջացնելէ առաջ հարկ կը համարիմ քանի մը խօսք ևս աւելցնել արևմտեան դռան վրայ Սահակ Կամսարականի անունով գրուած արձանագրութեան մասին, որնոր ըստ բաւականի լուրջ կերպով կը կապուի բոլոր կատարածս ուսումնասիրութեան հետ և կը լուսաբանէ որոշ տեսութիւններ:

Պ. Ա. Բաբախանեան ինձ յատներ էր, որ մեծ գիտնական պր. Ն. Մառ, կասկածելի կամ անհարազատ համարած է Տեկորի դռան վրայի Սահակ Կամսարականի անունով գրուած արձանագրութիւնը. թէ ինչ հիման վրայ, այդ դեռ ինձի յայտնի չէ, դժբախտաբար ես առիթ չեմ ունեցած յարգելի գիտնականին կարծիքը անձամբ լսելու, սակայն նոյն արձանագրութեան մասին ես ալ ունեցայ իմ անկախ կարծիքս:

Ամենէն առաջ նկատելի է, որ Տեկորի տաճարին նման մեծ շէնք մը կանգնողի անուան յիշատակութեան վայել տեղը չէ այնտեղը, ուր փորագրուած է Սահակ Կամսարականի յիշատակարանը: Ընդհակառակը պատշաճ տեղը գրուած է Բագրատունի Գագիկ Ա.-ի գուգալից Կատրանիդէ թագունիի վի նուիրատութեան արձան սգրութիւնը:

Կատրանիդէ թագունիի արձանագրութիւնը գրուած է տաճարի արևմտեան դռան կատարը պսակող քանդակագործ աղեղի ներքէ՝ մինչև դռան վերնասեամբ իջնող կիսաբոլորակ ճակատի վրայ: Քանդակագործ վերնասեամբ մօտ կատրանիդէ թագունիի արձանագրութիւնը վերջանալէ յետոյ, սկսուած է Սահակ Կամսարականի արձանագրութիւնը, ուր հազիւ մէկ սողառեղ մնացած էր գրելու համար. որովհետև այդ մէկ տողը բաւական չէր ամբողջ արձանագրութիւնը բովանդակելու, մնացեալ մասերը փորագրեր են դռան վերնասեամբին հեղ և լայն անրանդակ մնացած շերտերու վրայ՝ իրարու անհամապատասխան մեծ ու փոքր և խիստ անճաշակ ու անկանոն տառերով: Տառերու մէջ ալ ոչ մի ժամանակագրական ոճ չէ կարելի որոշ նշմարել, ամենահինէն մինչև ամենանոր տառերու ձևեր խառնուած են:

Պահ մը ենթադրենք, որ նորոգութեան ատեն ժամանակակից թագունիի անուան նախապատուութիւն տալու համար բուն շէնքը կանգնողի անուան պատշաճ տեղը տուեր են անոր և ներքևը արևմտեան արձանագրութիւնը, բայց ստով դարձեալ հակասութիւնը չի վերջանար: Հայր Ալիշան ևս նկատեր է այդ հակասութիւնը (Շիրակ, երես 133), որ իմ ալ խորհրդածութեան գլխաւոր առարկան եղաւ:

Բագրատունեաց շրջանին (10-դ—11-դ դար) Տեկորի տաճարը ծանօթ է Ս. Երրորդութիւն անունով, մի՞ չգեո Սահակ Կամսարականի արձանագրութիւնը կանուանէ զայն «Վկայարան Սրբոյ Սարգսի»:

Ի՞նչպէս պէտք է բացատրել այս երկու տարբեր անունները միևնոյն եկեղեցւոյ ա՛ռնով, միևնոյն տեղի վրայ, մանաւանդ որ Կատրանիդէ թագունիի արձանագրութեան շարունակութեան մէջ, որ վեց տարի յետոյ աւելցուած է, դարձեալ Ս. Սարգիս անունով յիշատակուած է:

Նախ քան այս մասին իմ կարծիքս յայտնելս՝ նոյնութեամբ մէջ կը բերեմ այստեղ երկու արձանագրութիւններն ալ ընթերցողի քննադատութեան դիւրութիւն տալու համար, յուսալով որ կը գըտնուին աւելի ճշգրտոյն լուսաբանողներ:

(Սահակ Կամսարականի արձանագրութիւնը)

Ուրանայ եւ հռոռ... (ե)պիսկոպոսի եւ Տ... յրոնի Տեկորոյ Վանաց երիցու եւ Մանանայ հազարապետի հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յոհաննու հայոց կաթողիկոսի եւ Յոհաննու Արշարունեաց յիւր բարեխաւսութիւն եւ բոլոր ազգիս եւ ամուսնի եւ որդեկաց եւ սիրելեաց Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան սրբոյ Սարգսի: ¹⁾

(Կատրանիդէ թագուհիի արձանագրութիւնը)

Ինծէ թուականութեանն հայոց—Յանուն Աստուծոյ կամ եղեւ ինձ Կատրանիդէ Հայոց թագուհի դուստր Վասակա եւ ամուսին Գագկա թողեալ եմ զՏեկորոյ շարյատն վասն Գագկայ շահնշահի արեւշատութեան եւ իմ որդեացն. եւ վերակացուք սորա պարտական են զերանի որում թողութիւն ասեն հանապազ արդ թէ (մի) որ իշխեսցէ լուծանել ի սուրբ Երրորդութիւնէն: ²⁾ Եւ ես Աշոտ թագաւոր հաստատեցի եւ թողեալ եմ զհարկն ընդվիմբ յաւիտենից եւ զթաստակն վասն իմ արեւշատութեան եւ իմ ծնողաց եւ եղբարց զաւակաց իմոց որ աւր: Թ: կ: Հայոց ն: Կ: Գ: էր. արդ եթէ որ հակառակ զա կամ հարկիս կամ շարիատիս թողլու ՅԺԸ-իցն նգոված է երբեալ լիցի որպէս Կանան անիծեալ որպէս Քանան բաժին նորա ընդ Ուզաի եւ ընդ խաշահանուացն եղիցի. վասն Սուրբ Սարգսի շինութեան եւ վասն մեր հոգեացս ազատեցար զազգ եւ հայր եւ մայր եւ որդիքս արդ մեր մեղացս եւ մեր ազգի մեղացս տէր է որ ընդզիմանա...

Սահակ Կամսարականի արձանագրութեան մէջ «Տեկորոյ վանաց երիցու եւ Մանանայ հազարապետի հիմնարկեցաւ տեղիս» խօս-

¹⁾ Հ. Ղ. Վ. Ալիշան, Շիրակ. Վեներիկ 1881. երես 132: Այս արձանագրութեան բառերու շարքը շփոթած է հայր Ալիշանի տեղեկատուն: Շիրակի մէջ, բուն տեղին վրայ չէ Սրբոյ Սարգսի բառը. այս մասին բացատրութիւն տեսնել երես 4:

²⁾ Այստեղէն կըսկսի Աշոտ թագաւորի արձանագրութիւնը վեց տարի յետոյ գրուած:

բէն կերեի որ, նախ քան Ս. Սարգսի վկայարանի հիմնարկուելը, այնտեղ գոյութիւն ունէր Տեկորի վանք եւ վաներէց. իսկ Կատրանիդէի եւ Աշոտի արձանագրութիւններէն ալ կերեայ, որ այնտեղ եղեր են երկու եկեղեցիներ, մէկը Ս. Երրորդութիւն անունով եւ միւս Ս. Սարգիս:

Աշոտ թագաւորի արձանագրութիւնը, որ Կատրանիդէ թագուհիի պարզաւարութիւնը հաստատելու համար է պարտադիր դարձուցեր է Ս. Սարգսի ալ շինութիւնը թագուհիի նուիրատուութեան փոխարէն, որնոր նախապէս թագուհին բնաւ ի նկատի չէ ունեցեր. անշուշտ Ս. Սարգիսը հնացած կամ քանդուած մի եկեղեցի էր այդ ժամանակ Ս. Երրորդութեան մօտերը, եւ այս եկեղեցիները հաւաքաբար: «Տեկորոյ վանք» անունը ունեցեր են ¹⁾, ինչպէս Հոռոմոսի վանքը, որ քանի մը եկեղեցիներ առանձին առանձին անուններ ունին, սակայն հաւաքաբար Հոռոմոսի վանք կանուանուին ամենէն կանուխ հիմնարկուածի անունով: Օրինակ. Յոհաննէս Սմայատ թագաւորը կը դրէ իր եկեղեցիին վրայ... «յիւ կեկեղեցիս ի սուրբ Յոհաննէս գոր շինեցի ի վանսս Հոռոմոսի»: Նմանապէս Սուրբ Գէորգ եկեղեցիին վրայ կը գրէ դարձեալ նոյն թագաւորը... «Ասու զիւ կեկեղեցիին վրայ կը գրէ դարձեալ նոյն թագաւորը... «Ասու զիւ գեղս զՍահառունիս ի մեր հանգստարանս թագաւորաց ի տիեզերահոշակ վանսս Հոռոմոսի... և գեցի ի Սուրբ Գորգ (Գեորգ)...: Հետեւաբար հիմնուելով այս իրողութեան վրայ հաւանական կը զտեսնու որ Տեկորի մէջ կար մի վանախումբ Հոռոմոսի վանքին նման, որուն ամենահինին անունը մեզ յայտնի չէ եւ կամ անոնցմէ մէկը բուն ամենահինին անունը մօտ կանգնեց Սահակ Կամսարական Ս. Սարգսի վկայարանը, թերեւ վկայարանի արձանագրութիւնն ալ գրեց Ս. Երրորդութեան վրայ, այնտեղ ուր այժմ կայ Բագրատունի թագուհիին արձանագրութիւնը, որնոր 11-դ դարուն նորոգութեան ժամանակ երբ դռան կիսաբոլորակ ճակատը նորոգեցին (առանց քանդելու զայն պսակող քանդակագարդ աղեղը), այնտեղ գրեցին Կատրանիդէի արձանագրութիւնը եւ ներքեւ ընդօրինակեցին Սահակ Կամսարականի յիշատակագիրը:

¹⁾ Տեկորի այժմեան եկեղեցիէն մէկ քիլոմետր դէպի արևելք կայ մի եկեղեցիի աւերակ. թերեւ այս եկեղեցին ալ Տեկորի վանքին կը պատկաներ:

Փոքր մատուռներու և դամբարաններու արձանագրութիւնները, իրենց մօտ կամ կից մեծ եկեղեցիներու վրայ գրուելու երեք օրինակ ինծի յայտնի են: Առաջին՝ Խժկօնքի մէջ Ս. Սարգիս եկեղեցիէն դէպի հարաւ երրորդ եկեղեցիին արեւելեան ճակատի հարաւային կողմը գրուած է արձանագրութիւն մը՝ որուն կից շինուած և այժմ բոլորովին քանդուած մատուռի մը յատուկ է: Երկրորդ՝ Անիի Առաքելոց եկեղեցիին հիւսիսային դռան մօտ եղեր է մի մատուռ՝ որուն փլատակները բացուեցան պր. Ն. Մառի պեղումներով. ասոր արձանագրութիւնն ալ գրուած է Առաքելոց եկեղեցիի խորշին մէջ: Երրորդ՝ Անիի Ապուղամբենց Ս. Գրիգոր եկեղեցիի վրայ կայ մի արձանագրութիւն, որ բնաւ չի վերաբերեր Ս. Գրիգոր եկեղեցիին: Գրիգոր իշխանի որդին Ապղարիպ հայոց մարզպանը շիներ է եկեղեցիի մօտ երկու մատուռ Սուրբ Ստեփաննոս և Սուրբ Գրիստափոր անուններով, որոնք բոլորովին փլած ու անյայտացած էին. չորս տարի առաջ մասնաւոր պեղումներով երևան եկան երկու մատուռներու աւերակները, որով միանգամայն հաստատուեցաւ արձանագրութեան որով վերաբերիլը, մինչդեռ առաջ կասկածողներ իսկ կային արձանագրութեան հարազատութեան կամ թուականին վրայ: Ասոնցմէ գտտ Տիգրան Հոնենց, Անիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին շինած ժամանակ անոր արձանադրութեան մէջ մտացուցած է իր նորագած մօտակայ Բեխենց վանքի նորոգութեան յիշատակութիւնը:

Ամենայն հաւանականութեամբ յիշածս եկեղեցիներուն նման Տեկորի եկեղեցիին ալ շատ մօտիկ շինուած էր Ս. Սարգսի վկայարանը և թերեւ կանգուն նոյն իսկ Բագրատունիներու ժամանակ, որուն շինութեան համար կակնարկէ Աշոտ թագաւոր արձանագրութեան մէջ «Լասն Սուրբ Սարգսի շինութեան» բնելով և կուզէին շէն պահել բացի Ս. Երրորդութենէն նաև Ս. Սարգսի վկայարանը իբրև նախնեաց յիշատակ:

Վերոգրեալ պատճառներէն գտտ ուրիշ աւելի մեծ պատճառներ գիտ կրատիպէն համոզուիլ, որ Տեկորի այժմեան կանգուն մեծ տաճարը 5-դ և 6-դ դարերուն մէջ չէր կարող Ս. Սարգսի վկայարան լինել: Նախ, ինչպէս տաճուց բացառեցի, արուեստի թողած հետքերու և կախարականի արձանագրութեան վրայ հիմնուած, Ս. Սարգսի վկայարանի հիմնարկութեան ժամանակ կար Տեկորի տա-

ճարը և 5-դ դարուն աւելցուած էին աւելի հին շէնքին վրայ, շուրջանակի սիւնազարդ ծախոյթները (portique), հետևաբար նաև դրանց բանդակազարդ շրջանակներն ալ. երկրորդ՝ որ աւելի կարևորն է, իմ հետազօտութի նսերուս մէջ, մասնաւորապէս ուշադրութիւն դարձուցեր եմ իւրաքանչիւր դարաշրջաններու մէջ կանգնուած եկեղեցիներու անուններուն վրայ, և ոչ միայն չեմ գտած 7 դ դարէն առաջ կանգնուող մի եկեղեցի, որ բա ի կաթողիկէէն ուրիշ անուն ունենան, այլև 7-դ դարուն մէջ կանգնուած մեծ եկեղեցիներն սլ, կաթողիկէ անուամբ յորջորջուած են: Իսկ մեծ եկեղեցիներն սլ, կաթողիկէ անունը յորջորջուած են: Իսկ պատմական տեղեկութիւններով ալ գիտենք, որ ի սկզբնէ սրբոց անուան նուիր ւած շէնքեր պարզ վկայարան անունը կըստանային և փոքր ու անշուք շինութիւններ էին¹⁾, և անոնց կոչումը տուն կամ հանգստարան վկայից էր և ոչ տուն Ատուծոյ²⁾: Հետևաբար Տեկորի այժմեան կանգուն տաճարին նման հսկայ շինութիւն մը 5 դ և 6-դ դարերուն չէր կարող վկայարան լինել: Առաջին մեծ վարանը շինեց Կոմիտաս կաթողիկոս Հոսիփիմէի վկայարանին վրայ 7-դ դարուն, որ իբրև նշանաւոր իրողութիւն արձանագր'ը են ժամանակակից պատմագիրներ:

Բայց ի նկատի ունենալով որ մի գուցէ գանուէին նախ քան 7-ի դար սրբոց և մարտիրոսաց անուան նուիրուած եկեղեցիներ, որոնք ինծի յայտնի չէին, ուստի տարակոյսս փարատելու համար դիմեցի մեծանուն պատմագէտ պ. Կ. Կոստանեանցին և աջակցութիւնը խնդրեցի այս հարցի լուծման համար:

Սորին շնորհակալութեամբ պիտի արձանագրեմ այստեղ, որ պ. Կ. Կոստանեանց ոչ միայն չի զրացաւ ինձ երկ սրբէն բացառել, թէ եկեղեցիները սրբոց անուան նուիրելու սովորութիւնը 7-դ դարէն առաջ չէր կարող լինել, այլև բարեհաճեցաւ մի յօդուած գր'լ սոյն աշխատութեանս կց'լու համար³⁾:

Հետևաբար սոյն տեսութեամբս կեզրակայնեմ, որ Տեկորի տաճարին վրայի Սահակ Կախարականի անունով գրուած արձանագրութիւնը կը վերաբերի փոքր վկայարանի մը, հիմնուած Տեկորի վանաց խումբին մէջ հաւանականաբար այսօրուան կանգուն Ս. Երրորդութեան տաճարին շատ մօտիկ:

1) Պատմ. Սերէնոսի եպիսկոպոսի ի Հերակլին: Ս. Պետրոսբուրգ, 1879, եր. 88: Եւ եղև յամի ԲԸ. երրորդի թագաւորութեան Ապրուէզ Խարովու՝ քակկաց կաթողիկոսն Կոմիտաս զմատուան Սրբոյն Հոսիփիմեայ ի Վաղարշապատ բազաքի զի կարի ցած և մթին էր շինուածն, որ շինեալ ի Սրբոյն Սահակայ հայրապետի հայոց կաթողիկոսի՝ սրբոյ Սրբոյն Ներսէսի:— Կոմիտասի յաջորդը Եզր կաթողիկոս հեռանցաւ իր նախորդի օրիստի:— Կոմիտասի յաջորդը Եզր կաթողիկոս հեռանցաւ իր նախորդի օրիստի:— Կոմիտասի յաջորդը Եզր կաթողիկոս հեռանցաւ իր նախորդի օրիստի:— Կոմիտասի յաջորդը Եզր կաթողիկոս հեռանցաւ իր նախորդի օրիստի:— Կոմիտասի յաջորդը Եզր կաթողիկոս հեռանցաւ իր նախորդի օրիստի:— Կոմիտասի յաջորդը Եզր կաթողիկոս հեռանցաւ իր նախորդի օրիստի:

2) Նորայր Բիւզանդացի. Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնը: Տփիսիս. 1900, երես 254—256:

**Թէ Ի՞նչ ԱնՈՒՆ Է՞ին ԿՐՈՒՄ ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԻՆԵՐՆ ԵՒ ՈՐՆ Է ՆՈՑԱ
ՀՆԱԳՈՅՆ ԱՆՈՒՆԸ**

3) Հին յիշատակարաններում զանազան անուններով են յայտնի Հայոց եկեղեցիները. նոցա բազմազանութեան մասին զազափար կազմել կարելի է արձանագրութիւնների ցուցումներով: Այսպէս, օրինակ, յայտնի են՝ Ս. Աստուածածին (տ. 864, 901, 910, 1013 և այլ թուականների արձանագրութիւնները), Ս. Յովհաննէս Կարապետ (1038 և 1041 թուակ.), Ս. Ստեփաննոս Նախավկայ (1040 թ.), Ս. Առաքեալը (1031 թ.) և Ս. Գրիգոր Լուսաւորիչ (994 թ.): Եկեղեցիներ կան, որ կոչուում են Ս. Նշան (996 թ.), Ս. Փրկիչ կամ Ամենափրկիչ (1036 և 1041 թ.), Ս. Կաթողիկէ (1010 և 1040 թ.), Ս. Պաւղոս և Ս. Պետրոս (997 թ.), Ս. Բարգիս (1008 և 1018 թ.), Ս. Քրիստափոր (1040 թ.), կան և այսպիսի անուններով Ս. Սիոն (1200 թ.), Ս. Գեղարդ (1214 թ.), Ս. Կամար (1215 թ.), Ս. Քառասունք (1276 թ.) և այլն:

Անունների բազմազանութիւնը սակայն սոցանով սահմանափակել կարելի չէ: Յիշատակարաններն առատ նիւթ են տալիս կազմելու մի շատ ընդարձակ ցանկ խայտաբղէտ անունների, որոնցով կնքուում էին եկեղեցիները զանազան սրբերի և սրբութիւնների յիշատակը պահելու համար: Տեղը չէ մի առ մի թուել այդպիսիները, որոնք պէտք է ստենք, իւրաքանչիւր դարի կրօնական կեանքը բնորոշող նշաններն են և ունին իրենց բացատրութիւնը:

Պատմական հնագոյն յիշատակարաններից բացայայտ երևում է սակայն, որ Հայոց նախնական եկեղեցիներն յատկական անուն ունեցած չեն: Եթէ ոչ ի ուղով հետևելու ինչինք Ս. Գրիգոր Լուսաւորչի հաստատած եկեղեցիների նկարագրութեանն, ակներև կըլինէր, որ նոքա ամենքն էլ նուիրուած են Աստուծոյ անուանն առանց կրելու որոշ յորջորջումն:

Այսպէս՝ Փաւստոս Բիւզանդացին հաղորդում է, որ Ս. Լուսաւորիչ բազիլիկները կործանելուց յետոյ մեհնատեղերը սրբադործեց և Աստուծոյ անուանը նուիրեց. «Պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին, ասում է, տեղիո պատկերաց կոտցն, և ապա յանուն Աստուածութեանն սրբեցան եւ նոյն տուն աղօթից եւ տեղի ուխտից ամենայն ումեք» (տ. Փ. 3): Տարուում կանգնած անդրանիկ եկեղեցին Փաւստոս բնորոշում է «մեծն», «առաջին», «մայրն եկեղեցեացն Հայոց» խօսքերով առանց տալու նորան որևէ յատկական անուն (տ. Փ. 3 և 14): Վաղարշապատու այն եկեղեցին, որ կանգնեց Ս. Լուսաւորիչ ոսկի խարսխի տեղում, Փաւստոս անուանում է «Նախեկեղեցի», որ յանձնուած էր ձերունի Դանիէլի հակողութեանը, որովհետև, ինչպէս ասում է, «հաւատարիմ էր սա այն Գլխաւոր սեղանոյն, իշխանութեան աթոռոյն Հայրապետացն, հաստատութեան ուխտին Կաթողիկէ եկեղեցոյ» (տ. Փ. 14): Խօսքն այստեղ Վաղարշապատու Մայր եկեղեցու մասին է, որը Ղազար Փարպեցին Չ. դարում որոշակի անուանում է «Սուրբ կաթողիկէ» (տ. Պատմ. Վենետ. 1873. եր 589). նոյն այդ անունով պիտէ այդ եկեղեցին և Մով. Սորենացին, որն երբ պատմում է թէ Ս. Սահակ Պարթև իրեն տեղապահ կարգեց Ս. Մեսրոպ Մաշտոցին, գրում է վերջինի մասին «զոր թողեալ խարսխեաց, ասում է, յեկեղեցուցն Կաթողիկէ, որ ի Վաղարշապատ» (տ. Պատմ. Գ. 66):

Ազգաթանգիզոսի խօսքերից էլ նոյնն ենք իմանում, որ հին եկեղեցիներն յատկական յորջորջումն չեն ունեցել. նոքա կոչուել են «Տէրունական տուն», «յարկ տան Աստուծոյ», «Կաթողիկէ» (տ. Ազգաթ. ձժէ, ձէ, ձԲ): Իւր տեսիլքին համեմատ Ս. Լուսաւորիչ ցանկապատեց ոսկի խարսխի տեղն և փրկչական թաղի նշան կանգնեց. նոյն այդ տեղի համար է գրում Ազգաթանգիզոս, երբ ասում է «Ժողովեալք միահամուռ ի պաշտօնարան

տեղոյն յարկի տանն Աստուծոյ». նոյն տեսիլքի բացատրութեան մէջ ոսկի խարսխի վերայ հաստատուած սեան համար կարգում ենք, «և սիւնն հրեղէն կաթողիկէ եկեղեցի է». Կեսարիայից վերադառնալու ժամանակ Ս. Գրիգոր Տարնուում կործանեց բազիլիկներն և ճեղ անդ, ասում է Ազգաթանգիզոս, զհիմունն եկեղեցուցն, և ուղղեաց սեղան փառաց Քրիստոսի, զի նախ անդ արար սկիզբն շինելոյ եկեղեցեաց, և ուղղել սեղան յանուն Սուրբ Երրորդութեան» (տ. ձժէ, ձէ, ԱԲ):

Այս ամենից ակներև է լինում, որ եթէ հուսն եկեղեցին մի յատկական անուն ունեցել է, այդ կաթողիկէ կոչումն է, որ նշանակում է ընդհանրական, և կարելի է հասկանալ նաև իրրև հասարակաց աղօթքի և պաշտամունքի տեղ, նուիրուած Աստուծոյ անուանը: Յատկապէս սրբազնագործութեան տեղը, որ հեթանոսական բազիլիկների փոխարէն հաստատուեցաւ, կոչուում է «սեղան փառաց Քրիստոսի», «սեղան յանուն Երրորդութեան կամ ըստ տեսիլքի «սեղանք Աստուծոյ, որ զքաւութիւնն բաշխեն ամենեցուն» (ձԲ):

Այս հին աւանդութեան հետքերն և պահուած են Հայոց եկեղեցոյ արդի ծիսարանում. եկեղեցու օրհնութեան և օծման կարգի մէջ աղօթքներ կան, որոնք պարզ յիշեցնում են մեզ, որ Հայոց նախնական քրիստոնէութեան օրերում եկեղեցիները չէին կնքուում յատուկ անուններով: Այսպէս նոյն աղօթքների մէջ կարգում ենք հետևեալ որոշ խնդրուածքները.

«Չտաճարս այս, որ յանուն քո շինեցաւ, քո անբաւ գորութեամբ օրհնեալ» (տ. Մայր Մաշտ. 179):—«Առաքեցես զՀոգիդ Սուրբ զսրբարար և զկենդանարար, ի նուիրեալ տեղիս անուանող անստորի» (տ. Անդ. 180), «ստուած է մի այլ աղօթքի մէջ: «Շինեցաւ, ընդ ամենայն տեղիս, կարգում ենք Երրորդ աղօթքի մէջ, աղօթանոց տանար անուանող Քում սրբոյ... փան որոյ ի բոլոր սրտէ աղաչեմք դժեգ, Տէր, զանուանեալս տանար ամենատուրը անուանող բնկալցիս զտունս գայն սուրբ զեկեղեցիս Քեզ ի հաճուութիւն. . Հանգն գշնորնս Հոգւոյդ Սրբոյ ի սունս յայս, դոր և հաստատեցաք և շինեցաք յանուն Քո...» (տ. Անդ. 182):

Քանի որ այս այսպէս է, յետին դարերի նորամուտ սովորութեան համապատասխանելու համար է, անշուշտ, այն բանաձևը, որ ծիսարանում գրուած է եկեղեցու օրհնութեան համար. «Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի յանուն սրբոյն Յոնաննու կարապետի (եւ կամ յայլ յինչ անուն իցէ) հաստատեալ եկեղեցիս. (տ. Մայր Մաշտ 176): Այս բանաձևն ամուն հին սովորութեան հակառակ թոյլ է տալիս զանազան անուններով կնքել նորակառոյց եկեղեցիներ: Սակայն ծիսարանի աղօթքներն, ինչպէս տեսանք, համեմատ չեն այդ բանաձևին. նոքա գալիս են հաստատելու հին սովորութեան հարազատութիւնը: Դարերի ընթացքում ծիսարան խմբագրողներն իրենց կողմից աւելացուցած հրահանգներով համապատասխան են հանդիսաիրենց կողմից աւելացուցած հրահանգներով համապատասխան են հանդիսաիրենց կողմից աւելացուցած հրահանգներն էլ յատկական անուն չունէին

Ինչպէս տեսանք, եկեղեցու սեղաններն էլ կոչուել են «Տէրունական սեղան», հնումն, նոքա նուիրուած էին Աստուծուն և կոչուել են «Տէրունական սեղան», «Սեղան փառաց Քրիստոսի», «Սեղան Աստուծոյ» և այլն: Սակայն ժամանակի ընթացքում, երբ սկսեց աւելի ևս զօրանալ սրբերի և ս. նշանների պաշտարնթացքում, երբ սկսեց նուիրուում էին և նոցա անուանը: Այդ պէտք է կաժ մուսքը, սեղանները նուիրուում էին և նոցա անուանը: Այդ պէտք է կաժ լինի, անշուշտ, գլխաւոր պատճառներից մէկը, որ եկեղեցիներն իրենց սեղանների անունով սկսում են կրել զանազան անուններ:

Յայտնի է, որ Ս. Լուսաւորիչ Կեսարիայից վերադառնալու ժամանակ հետը բերեց սրբոց նշխարներ, որոնց ամփոփեց զանազան տեղերում. «յգպէս յառաջ եկան Մեծ Մարգարէարանն մատրանն Յովհաննու», ուր ամպէս յառաջ եկան

ժողովուրդ էին Ս. Յովհաննէս Կարապետի մասունքները և «առաքելարան Տեառն աշակերտացն», ուր ամփոփուած էին Ս. Առաքելոց նշխարները: Սորա եկեղեցիները չէին, այլ մատուռներ, որոնց համար Ս. Լուսաւորիչ տարեկան տօներ սահմանեց: Աշտիշատում, ուր առաջին եկեղեցին հիմնեց, տարին հոթն անգամ պէտք է ժողովուրդին սրբերի յիշատակը պատուելու համար. «Մահաւանդ յայնի գլխաւոր տեղին եկեղեցին, գրում է Փաւստոս, ժողովել ի յիշատակ սրբոցն, որ էին անդ, կատարել անդ ամի ամր եւթն անգամ. որք զնոյն ունէին սովորութիւնն առաւել ևս ի մեծի Մարգարէտարան մատրանն Յովհաննու, սոյնպէս և յառաքելարանն Տեառն աշակերտացն սոյնպէս և ի վկայարանն մարտիրոսացն ամի ամի ժողովեալք...» (տ. Փաւստ. Գ. 3.): Ս. Լուսաւորիչ դեռ Կեսարիայ չգնացած, իւր տեսելից յետոյ անմիջապէս ձեռնամուխ եղաւ Վաղարշապատում Ս. Հռիփսիմեանց և Ս. Գայրանեանց մարմիններն ամփոփել, որոնց համար առանձին վկայարաններ շինուեցան (տ. Ագաթ. ՃԴ. և Փաւստ. Գ. 14 3):

Այսպէս ուրեմն նախնական եկեղեցիների կողքին իբրև առանձին սրբափայտեր Հայաստանում յառաջ եկան մարգարէարան, առաքելարան, վկայարան անունով մատուռներ, որոնք ունեցան տէրուական սեղաններ Ս. Սորհրդի համար: Ժամանակի ընթացքում է. դարից սկսած այդպիսի մատուռներն ընդարձակուեցան. նոցա տեղում հանդէս եկան հոյակապ շէնքեր իբրև եկեղեցի: Այսպէս օրինակ յայտնի է, որ է. դարում տ. Կոմիտաս կաթողիկոս Ս. Հռիփսիմէի մատուռի տեղում կանգնեց այն հոյակապ եկեղեցին, որ մինչև օրս կայ. նոյնն արաւ նորա յաջորդը, տ. Էդր, որ կանգնեց Ս. Գայրանեանց վկայարանի տեղում մի այլ եկեղեցի (տ. Սեբէոս. Ին): Այսպիսի ընդարձակումների և սրբոց յիշատակին հիմնուած նոր սրբափայտերի մասին խօսելը մեզ շատ նեղու կը տանէր: Քաւական է յիշել, որ անս այդպիսի համագամանքների մէջ սկսում է սովորական դառնալ եկեղեցիներին յ. տեղական անուններ կնքելը:

Պաշտամունքների վարդապետն հետ շատ սերտ կապ ունի այդ երևոյթը: Ժ դարում արդէն սովորական էր մաղթանքների մէջ յիշատակել սրբոց բարեխօսութիւնը (տ. Ս. Գրիգոր Նարեկացու գանձերը, Մատենագրութիւնք, Վեներետ, 1840. եր. 457, 460 և 462). առանձնապէս յիշում են Ս. Աստուածածին, Ս. Յովհաննէս Կարապետ, Ս. Ստեփաննու Նախավկայ, Ս. Առաքեալք և Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Սոցա անուանն և նուիրուած են սեղաններ, որոնցից հանդէս է եկել և եկեղեցու անուանակոչութիւնը: Յաճախ և առաւել ժողովրդական են Ս. Աստուածածնի, Ս. Կարապետի և Ս. Լուսաւորչի անուններին նշանակուած սրբափայտերը, որոնք և նախնականներին յ. ջորդող հնագոյն յորջորջումներն են եկեղեցիների վերայ Ս. Հռիփսիմեանց և Ս. Գայրանեանց հետ միասին:

Այս ամենից ակներև է, որ մինչև է դարը ծանօթ չէ եղել հայոց մէջ եկեղեցիներին յատկական անուն տալու սովորութիւնը, որ մտնել և ընդհանրանալ կարող էր այն ժամանակ միայն, երբ սրբերի պաշտամունքը զօրացաւ, նոցա վկայարաններն ընդարձակուեցան, նոցա նշխարների մեծացաւ, որոնք կարևոր ծէս դառաւ, և առհասարակ եկեղեցին իւր նախնական պարզութիւնից զրկուելով, իւրացուց նոր կարգեր ու նոր ծէսեր: Այդ փոփոխութիւնները տեղի ունեցան անշուշտ, նախնական ժամանակներից մնացած աւանդութիւնների և կարգերի հիման վերայ, որոնք իրենց ծագման սկզբնական շրջանում այն նշանակութիւնը չունէին, ինչ որ նոցա սեփականուեցաւ յետոյ: Եւհապիվանի ժողովի ժէ. կանոնն ասում է. «Եթէ որ սեղան կամիցի կանգնել տէրուական խորճիւն, առանց եպիսկոպոսի մի՛ որ իշխեցէ կանգնել, քայց նշխարացն յամուն մեծապէս տաւնախմբացին յամենայն տարւոյ յսոր բերելոյն...» Այս կանոնի ընդարձակումն է կեանքի մէջ. որ սրբերի և սուրբ նշանների պաշտամունքը վարդապետ հետգնեալ, և վանքերի միջոցով ընդհանրանալով, կրօնական կեանքի պահանջների մէջ նշանաւոր տեղ գրաւեց միջին դարերում:

Հ 0 05

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0683512

